«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

*(2024-2029 թթ.)*

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
Արմինե Գենիսի Թևոսյան

# Բովանդակություն

1. Նախաբան
2. Իրավիճակի վերլուծություն
   2.1 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները
   2.2 Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները
   2.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը:
   2.4 Հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը
   2.5 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործունեությունը, ուժեղ և թույլ կողմերը
3. Նպատակների և խնդիրների սահմանումը
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումը ապահովող գործողությունները ու միջոցառումները
   4.1 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների ժամանակացույցը
   4.2 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող միջոցներ
   4.3 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումը ապահովող գործողությունների ու միջոցառումների արդյունքների չափման մեխանիզմները
   4.4 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը
   4.5 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերի կանխման գործողություններ:
5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները
6. Եզրակացություն

# 2.Իրավիճակի վերլուծություն

## Ուսումնական հաստատության ընդհանուր բնութագիրը

- **Դպրոցի հասցեն** - ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Վերին Գետաշեն,բ.թաղամաս,փ.11
- **Դպրոցի անվանումը** - << ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի №1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
- **Էլեկտրոնային փոստ** – veringetashen1@schools.am

Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի N1 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1974 թվականին:
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի №1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է՝29.08.2003թ,գրանցման համար՝ 222.210.00189:

## 2.1 Հաստատության ուսւոմնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները:

Կրթությունը մարդու հիմնարար իրավունք և հանրային արժեք է, և մեր ուսումնական հաստատության գործունեությունը դրա ապահովման նպատակն է հետապնդում:

2024-2025 ուսումնական տարում դպրոցում սովորում են 284 աշակերտ, ունենք երկու ԿԱՊԿՈՒ աշակերտ:

2022-2023 թթ դպրոցի 12-րդ դասարանի 14 շրջանավարտներից բարձրագույն ուսումնական հաստատություն են ընդունվել 4-ը,միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ են ընդունվել2-ը:2023-2024 ուստարում 12-րդ դասարանի 15 շրջանավարտներից 7-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, երկուսը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:Սա լավ ցուցանիշ է և ցուցիչ է դպրոցում կրթական հաջողված գործընթացի:

**Մեր դպրոցի կրթական կարիքներն են.**

- Հիմնարար և մրցունակ գիտելիքի մատուցում
- Նոր չափորոշիչներին համապատասխան ընդհանուր և ներառական կրթություն
- ՈՒսուցման նորարարական մոտեցումների կիրառում
- Շարունակաբար բարելավվող կրթական գործընթացի և կրթական միջավայրի ապահովում
- Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում
- Սովորողների ինքնաճանաչում, կայուն արժեհամակարգ, օբյեկտիվ դիրքորոշում
- Սոցիումին ներառվելու կարողունակություն,ժողովրդավարական արժեհամակարգի յուրացում
- Մանկավարժական և աշակերտական համակազմի ինտեգրում համայնքին և հասարակական, բարեգործական գործընթացներին
- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորում
- Այդ կարիքների բավարարմանն ուղղված դպրոցի ողջ համակազմի շարունական և արդյունավետ գործունեություն

Մեր ուսումնական հաստատության գործնեության գլխավոր նպատակը հանրակրթական պետական չափորոշիչի պահանջներին համաձայն հանրակրթական հիմնական ծրագրի իրագործումն է՝ սովորողների նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան: Անցումը նոր չափորոշիչներով ուսուցման մանկավարժական համակազմը բարեհաջող հաղթահարում է : Այստեղ մանկավարժների համար մեծ օգնություն են անցկացված վերապատրաստումները և սեմինարները:

Հանրակրթական ուսումնական հաստատության գործնեության վերջնանպատակը նաև ուսուցման ընթացքում կարողունակությունների ձևավորումն է.

- Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- Սովորել սովորելու
- Ինքնաճանաչողական և սոցիալական
- Ժողովրդավարական և քաղաքացիական
- Թվային և մեդիա
- Մշակությային
- Մաթեմատիկական և գիտատեխնիկական
- Տնտեսական

Այս կարողունակությունների ձևավորմանն է ուղղված դպրոցի ուսումնական գործընթացը: ԵՎ այստեղ առարկայական ուսուցման հետ միասին կարևորվում են նաև ուսումնադաստիարակչական տարաբնույթ աշխատանքները, աշակերտների ներգրավվածությունը տարատեսակ խմբակներում և արտաուսումնական աշխատանքներում:

Հաստատության ենթակառուցվածքների հնարավորությունները և մարդկային ռեսուրսների ներուժը օպտիմալ օգտագործելով՝ ուսումնական հաստատության գործունեությունը դառնում է առավելագույնս արդյունավետ:

Սովորողների կրթական կարիքների ապահովմանն ուղղված ուսումնական գործընթացի խելամիտ, նպատակային կազմակերպման, ուսման որակի բարձրացման, դպրոցի արդյունավետ գործնեության կարևոր պայմանը նաև համապատասխան մոտիվացիոն միջավայր ստեղծելն է: Այստեղ մեծ խթան է մանկավարժական համակազմի կատարած աշխատանքի արժևորումը և խրախուսումը, աշակերտների՝ տարատեսակ մրցույթներին, առարկայական օլիմպիադաներին, վիկտորինաներին մասնակցությունը, նախագծային , հետազոտական աշխատանքներին մասնակցության ապահովումը:

Պահպանելով հանրակրթության պետական չափորոշիչի պահանջները՝ ողջ մանկավարժական համակազմը աշխատում է մեկ միասնական նպատակի համար. եղած հնարավորությունների և նյութատեխնիկական սուղ միջոցների պայմաններում առավելագույնս ապահովել որակյալ ուսուցում՝ հենվելով մանկավարժների արհեստավարժության՝ գիտելիքների ,կարողությունների և հմտությունների,եռանդի և ինքնանվիրումի վրա:

Դպրոցի գործունեությունն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

*Կառավարում*

1. *Ուսումնադաստիարակչական գործունեություն*
2. *Վարչատնտեսական գործունեություն*
3. *Աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ*

Կառավարման մակարդակում սովորողների կրթական կարիքները բացահայտվում են, իրականացվում են համապատասխան միջոցառումներ դրանց բավարարման նպատակով և սահմանվում է վերահսկողություն կրթական կարինքերի բավարարամանն ուղղված գործողությունների վերջնարդյունքների նկատմամբ:

Ուսումնադաստիարակչական գործունեության ժամանակ բավարավում են սովորողի կրթական կարիքները, որը իրականացվում է ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից բուն ուսումնական գործընթացի և այլ ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում:

Վարչատնտեսական գործունեությունը ուղղված է ուսումնական միջավայրում անհրաժեշտ պայմանների ապահովմանը և կատարելագործմանը՝ օբյեկտիվ հնարավորությունների շրջանակներում:

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները իրականացվում են ծնողների, ուսուցչի օգնականների, տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ ակտիվ համագործակցությամբ:

Դպրոցում տիրում է բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր:Աշակերտների իրավունքերը հարգվում են, յուրաքանչյուրը կարող է արտահայտել իր անձնական տեսակետը:Բարոյահոգեբանական մթնոլորտը դրական է:Եվ աշակերտները ,և մանկավարժները ազատ են արտահայտելու իրենց տեսակետները և մտքերը:
Բոլոր սովորողների համար՝ անկախ ունակություններից, սոցիալական վիճակից, ապահովված է որակյալ հանրակրթության ստացում, անձի ինքնադրսևորման , ինքնահաստատման , ինքնազարգացման նպաստավոր միջավայր:

ԿԱՊԿՈՒ սովորող աշակերտները մնացածներին հավասար սովորում են դպրոցում: Աշակերտական և մանկավարժական համակազմը ուշադիր և հոգատար է նրանց նկատմամբ:Դասընկերները ըմբռնումով են վերաբերվում իրենց ընկերների առանձնահատկություններին և ամեն կերպ աջակցում են նրանց:
Կրթական գործընթացը իրականացնում են բանիմաց , արհեստավարժ մանկավարժները՝մեծ ուշադրություն դարձնելով աշակերտների գիտելիքների շարունակական աճին,դրանց կիրառման հմտությունների մեծացմանը, նոր չափորոշիչների պահանջներին համապատասխանեցմանը:Գնահատվում են մանկավարժների կարիքները, ներառվում համապատասխան վերապատրաստման խմբերում:

Մեծ ուշադրություն է դարձվում սովորողների ոչ միայն կրթական, այլև դաստիարակչական գործընթացին: Ստեղծված է նրանց արժանապատվությունը ապահովող միջավայր:Տիրում է համագործակցային, առողջ մթնոլորտ:Աշակերտների գեղագիտական, հոգևոր, մշակութային դաստիարակությանը պատշաճ ուշադրություն է դարձվում:

Տնօրենության , խորհրդակցական մարմինների անդամների, դասղեկների,իրավապահ մարմինների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների կատարման և արդյունավետ իրականացման ուղղությամբ:
Հատուկ ուշադրություն է դարձվում բուլինգի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության դրսևորումների բացառմանը:

Համագործակցում են արվեստի, մշակույթի, ինչպես նաև համայնքի կյանքում իրենց ներդրումն ունեցած ներկայացուցիչների հետ, կազմակերպում տարատեսակ հանդիպումներ և զրույցներ նրանց և աշակերտների հետ՝ վերջիններիս հոգևոր և բարոյական դաստիարակությունը ճիշտ ուղով տանելու համար:

Դպրոցում վարվում են դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու նպատակով: Սովորողները և դպրոցի համակազմը առաջնորդվում են ըստ կանոնադրության, օրենքով իրենց վերապահված իրավունքների և պահանջվող պարտականությունների շրջանակում:

2009 թվականից դպրոցն ընդգրկրվել է պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող <<Դպրոցական սնունդ>> ծրագրում, որի շրջանակներում կազմակերպվել է տարրական դպրոցի սովորողների համար ամենօրյա տաք սննդի ապահովում:Դրա իրականացման համար ստեղծված են համապատասխան պայմաններ՝ վերանորոգված ճաշարան և խոհանոց՝ համապատասխան սարքավորումներով:
Ստեղծված է անվտանգ և հիգիենիկ միջավայր առողջ սերունդ ունենալու համար: Աշակերտների ուժերով և նրանց ձեռքի աշխատանքներով ձևավորվում են միջանցքները, ստեղծվում թեմատիկ անկյուններ:
Դպրոցում գործում են սպորտային և առարկայական խմբակներ, որոնք նպաստում են աշակերտների առողջության պահպանմանը և խթանում են նրանց հետաքրքրությունը ուսման նկատմամբ:
Հաճախ են կազմակերպվում գրական-գեղարվեստական միջոցառումներ, մրցույթներ՝ աշակերտների առօրյան ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու նպատակով:
Տոնվում են բոլոր պետական տոները և նշվում հիշատակի օրերը:
Աշակերտները սիրով մասնակցում են շաբաթօրյակներին, համայնքում կազմակերպվող միջոցառումներին :
Հաճախ են կազմակերպվում ճանաչողական այցեր և էքսկուրսիաներ:

Դպրոցում մինչև նոր ուսումնական տարին սկսելը՝ օգոստոսի վերջին ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացը կազմակերպելու համար հրավիրվում է մանկավարժական խորհրդի նիստ, որի ընթացքում համակարգվում են ուսումնադաստիարակչական աշխատանքները :
Հրավիրվում են մասնախմբի խորհրդակցություններ, պլանավորվում է տարեկան աշխատանքային գործնեությունը :Ստուգվում է թեմատիկ պլաններում առարկայի համապատասխանությունը չափորոշիչային պահանջներին և առարկայի պլանների կատարողականի վերաբերյալ ներկայացվում գրավոր հաշվետվություններ:Կազմվում են դպրոցի ուսումնական պլանները բաշխված բաղադրիչներով,դասացուցակները, համաարգվում են էլեկտրոնային մատյանների գրանցումները,թեմատիկ պլանների , դասղեկի աշխատանքային պլանների մուտքագրումը էլեկտրոնային մատյան, ուսումնական ծրագրերի կատարողականները (քանակական և որակական առումով), գրավոր աշխատանքների, աշակերտների գնահատման գրանցումները,կիսամյակային և տարեկան առաջադիմության ամփոփումները:Մշակվում,քննարկվում, հաստատվում են դպրոցի ներքին կարգապահական կանոնները:Պարբերաբար ստուգվում է ուսումնական ծրագրերի կատարողականները և

արդյունքները քննարկվում: Յուրաքանչյուր կիսամյակում առնվազն մեկ անգամ տարբեր առարկաներից կազմակերպվում են գրավոր աշխատանքներ տնօրինության կողմից և քննարկվում արդյունքները:
Իրականացվում է դպրոցական մակարդակում (դիտարկում բնական միջավայրում )կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:
Կազմակերպվում է ԱՈՒՊ ծրագրի մշակում,անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում,աշակերտի թղթապանակի ստեղծում, ծնողի ընդգրկվածության ապահովում:
Դրան զուգահեռ տարվում են նաև դաստիարակչական աշխատանքներ գեղագիտական, ռազմահայրենասիրական,մշակույթային, աշխատանքային ուղղություններով:
Ուսումնառության գործընթացում կատարվում է սովորողների ուսումնառության արդյունքների պարբերական վերլուծություն և ուսումնառության գործընթացի արդյունավետությանն ուղղված շարունակական փոփոխություններ:Ձևավորվում է կրթական գործընթացի վերաբերյալ համապարփակ տեղեկատվության ստացման և հաշվետվողականության մեխանիզմներ:Երկտարեցների և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ տարվում է նպատակային գործողություններ (հետագայում նախատեսվում է երկարօրյա խմբերում՝համապատասխան մասնագետների կողմից):
Կատարված աշխատանքների վերջնարդյունքը ենթադրում է աշակերտների կարքի վեր հանում, պլանավորված գործողությունների արդյունքում ուսման որակի և արդյունավետության բարձրացում:
ՀՊՉ-ի ներդրումը դպրոցում միտված է մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ուսուցումը դարձնել աշակերտակենտրոն, համագործակցային, ներառական՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր աշակերտի տալ իր կարողություններին համարժեք կրթություն, յուրաքանչյուրից պահանջել ըստ իրենց ընդունակությունների:
Ինտերակտիվ մեթոդներով, նոր տեխնոլոգիաներով մատուցված գիտելիքները դարձնել հմտություններ և կարողունակություններ նախագծային աշխատանքների միջոցով , աշակերտին սովորեցնել մտածել,վերլուծել ,կիրառել ստացած գիտելիքը ,միջառարկայական կապերի,ընդհանրական հասկացությունների միջոցով տեսական գիտելիքը կապակցել իրականությանը:
Նոր չափորոշիչներով նախատեսվում է կրթության գործընթացի վերանայում մի շարք ուղղություններով՝ սկսած ուսումնական պլանի կազմումից մինչև նախագծային աշխատանքների իրականացումը և պարտադիր խմբակների գործարկումը:Այն ենթադրում է նաև դասավանդման մեթոդաբանության էական վերանայում՝ուշադրության առանցքում պահելով սովորողների կարողունակությունների ձևավորումը, ամուր միջառարկայական կապերի ապահովումը, ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական գործնուեության իրականացումը:
Այս ուսումնական տարում 10-րդ դասարանում ներդրվել է նպատակային ուսուցումը և արդեն առկա են դրական արդյունքները:Աշակերտներից շատերը ընտրել են նախասիրած առարկաներ և կարող են խորությամբ և ավելի հանգամանալից ուսումնասիրել դրանք:Սա խթան է հանդիսանում երեխայի մասնագիտական կողմնորոշման գործում, նաև հնարավորություն խուսափել կրկնուսույցների ծառայություններից:Հիմնական հոսքում քանից ավել աշակերտի դեպքում դասարանը բաժանվում է երկու խմբի և փոքր համակազմի հետ աշխատանքը դառնում է ավելի արդյունավետ:

Աշակերտների գնահատման նոր ձևաչափը ենթադրում է հանրակրթական ուսումնական հաստատության կողմից իականացվող բնութագրող և միավորային գնահատումը, ուսուցիչը գնահատման միջոցով բացահայտում է կրթական վերջնարդյունքներին հասնելու ճանապարհին սովորողի

դժվարությունները :Նոր չափորոշիչներով սահմանված  գնահատման  չափանիշները  առավել ճշգրիտ և հասցեական են որոշում աշակերտների կրթական կարիքները,հայտորոշիչ գնահատման միջոցով  որոշվում է և շեշտադրվում թույլ կողմերը, ձևավորող գնահատման միջոցով՝  շտկվում, միավորային և բնութագրող  գնահատման միջոցով՝ ամփոփում կատարված աշխատանքը:
Գնահատման  շրջանակը ուժի մեջ մտնում 2026-2027 ուսումնական տարում՝ՀՊՉ-ի ամբողջական ներդրմանը զուգահեռ:
Մանկավարժական անձնակազմը   հետևողաբար հմտանում է նոր  մեթոդներով աշխատաոճին:

ՈՒսումնական գործընթացում խնդիրները վեր են հանվում հիմնականում դասալսումների արդյունքում:Դասալսումները  նպատակային են՝միջինը շաբաթական 11-13 դասաժամ(տնօրեն 4-5, փոխտնօրեն 3-4, առարկայական մասնախմբի ղեկավար, ուցուցիչներ 2-3):Դասալսումների արդյունքները քննարկվում են,արվում առաջարկություններ:
Դասալսումները շեշտադրվում և պլանավորվում  են ըստ նպատակի՝ ավարտական դասարաններում՝ քննությունների պատրաստվածության գնահատում, սկսնակ ուսուցիչների մոտ՝  մեթոդական աջակցության  և առաջավոր փորձի  փոխանակման նպատակով:Այս բոլոր գործողությունների  նպատակը ուսումնական գործընթացը առավել արդյունավետ դարձնելն է:

ՈՒսումնական հաստատության կատարած աշխատանքների ընթացքը գնահատելու համար դպրոցի գործնեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները վեր են լուծվում, համադրվում, կատարվում է ուսումնասիրություններ,ստուգվում են տնօրինության կողմից  կազմակերպվող գրավոր աշխատանքների  ամփոփիչ արդյունքները,առարկայական  պետական ծրագրերի կատարողականները , ուսուցչի , դասղեկի, խմբավարի հաշվետվությունները,դասի գնահատման թերթիկները,տարեկան ամփոփաթերթիկները, բացակայությունների հաշվառման թերթիկը, բաց դասերի ժամանակացույցը, ուսուցիչների՝ վերապատրաստումներին, դասընթացներին, կարողությունների զարգացման ծրագրերին, նախագծերին մասնակցության հաշվետվությունները:

Ուսումնական միջավայրի բարելավման ուղղությանբ կատարված աշխատանքները ենթադրում են սովորողների կրթության և դաստիարակության համար անհրաժեշտ անվտանգ և սանիտարահիգիենիկ բարվոք պայմանների ապահովում, անձնակազմի և աշակերտների համար գեղագիտական միջավայրի ստեղծում:Վերջինս մեծապես կախված է հենց մարդկային ռեսուրսներից,նրանց ներգրավվածության աստիճանից, աշխատանքից:Դպրոցում ապահովված է առողջապահական, սանիտարահիգիենիկ,անվտանգային պայմանները,որը անհրաժեշտ է մանկավարժական և աշակերտական համակազմի ուսումնական գործընթացի իրականացման համար:

ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումնառության համար հարմարեցված միջավայրի ստեղծման ծախսերը իր վրա է վերցնում պետությունը և հատուկ նպատակային ծախսի տեսքով ֆինանսավորում դպրոցին:Ծախսը ձևակերպվում է կոնկրետ տվյալ ԿԱՊԿՈՒ աշակերտի անհատական կարիքի բավարարման նպատակով:Դպրոցում գործում է ներառական կրթությունը և երկու ԿԱՊԿՈՒ աշակերտները բոլորի հետ հավասար հիմունքներով ստանում են ուսուցում:Դասընկերները ըմբռնումով են վերաբերվում նրանց առանձնահատկություններին և ամեմն ինչում աջակցում են նրանց:Մանկավարժները, մանկավարժի օգնականները,տարածքային  մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետները նրբանկատ, հոգատար և արհեստավարժ կերպով հետևողաբար աշխատում են նրանց հետ:

Ստորև ներկայացնում եմ ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական մի քանի արդյունքներ աղյուսակներով:

***2024-20245ուստարվա սեպտեմբեր ամսվա դասարանների և սովորողների թիվը***

| | Դասարանների քանակ | Սովորողների թիվ |
|---|---|---|
| I | 1 | 34 |
| II | 1 | 31 |
| III | 1 | 25 |
| IV | 1 | 33 |
| V | 1 | 20 |
| VI | 1 | 31 |
| VII | 1 | 19 |
| VIII | 1 | 18 |
| IX | 1 | 27 |
| X | 1 | 23 |
| XI | 1 | 11 |
| XII | 1 | 12 |
| Ընդամենը | 12 | 284 |

**Գծապատկեր 1.** Դպրոցի 2024-24 25թթ ուս. տարվա սովորողների և դասարանների թիվը

Դասարանների միջին խտությունը կազմում է 24 աշակերտ:

2023-2024 թթ ուս տարում աշակերտների տարեկան առաջադիմության ցուցանիշներն են՝

| Դասարան | Աշակերտների քանակ | Գերազանց | Հարվածային | Որակը %–ներով |
|---|---|---|---|---|
| 1 | 31 | - | - | - |
| 2 | 25 | - | - | - |
| 3 | 33 | 11 | 12 | 70% |
| 4 | 20 | 8 | 6 | 70% |

**Գծապատկեր 2.**

Տարրական ընդհանուր կրթական առաջին աստիճան

| Դասարան | Աշակերտների քանակ | Գերազանց | Հարվածային | Որակը %–ներով |
|---|---|---|---|---|
| 5 | 32 | 5 | 12 | 53% |
| 6 | 19 | 1 | 3 | 21% |
| 7 | 18 | 2 | 9 | 61% |
| 8 | 27 | 1 | 8 | 33% |
| 9 | 27 | 5 | 2 | 26% |

**Գծապատկեր 3.**

Հիմնական ընդհանուր երկրորդ աստիճան

| Դասարան | Աշակերտների քանակ | Գերազանց | Հարվածային | Որակը %–ներով |
|---|---|---|---|---|
| 10 | 11 | 1 | 1 | 18% |
| 11 | 12 | 1 | 3 | 33% |
| 12 | 15 | 1 | 6 | 47% |

**Գծապատկեր 4.** Միջնակարգ ընդհանուր երրորդ աստիճան

**Ուսման որակը 2023-2024թթ կազմում է 42 %**

## 2022-2023 թթ ուստարվա II կիսամյակի ամփոփաթերթ

| Դասարաններ | Աշ. Թիվը կիս. սկզբին | Որից գնահատվել են | Գերազանցիկ են | Հարվածային են | Անբավարար ունեն ընդամենը | Մեկ կամ երկու առարկաներից | Երեք կամ ավել առարկաներից | Առաջադիմություն %-ով | Որակը % -ով | Բաց թողած ժամերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | 26 | | | | | | | | | |
| II ա | 19 | 19 | 10 | 7 | - | - | - | 100% | 89% | 112 |
| II բ | 14 | 14 | 3 | 11 | - | - | - | 100% | 80% | 712 |
| III | 20 | 20 | 8 | 7 | - | - | - | 100% | 75% | 465 |
| IV | 32 | 32 | 8 | 8 | 1 | 1 | - | 96.9% | 46.9% | 1226 |
| V | 20 | 20 | 1 | 8 | - | - | - | 100% | 45% | 342 |
| VI | 18 | 18 | 2 | 9 | - | - | - | 100% | 61% | 338 |
| VII | 27 | 27 | 2 | 10 | - | - | - | 100% | 44% | 400 |
| VIII | 27 | 26 | 3 | 3 | - | - | - | 100% | 23% | 810 |
| IX | 16 | 16 | 2 | 1 | - | - | - | 88% | 29.2% | 405 |
| X | 13 | 12 | 1 | 2 | - | - | - | 100% | 25% | 689 |
| XI | 15 | 15 | - | 4 | - | - | - | 100% | 26.6% | 565 |
| XII | 14 | 14 | 3 | 3 | - | - | - | 100% | 43% | - |
| Ընդամենը | 261 | 234 | 43 | 66 | 1 | 1 | - | 98,7% | 48,9% | |

Գծապատկեր 5.

## 2023-2024 թթ ուստարվա I կիսամյակի ամփոփաթերթ

| Դասարաններ | Աշ. Թիվը կիս. սկզբին | Որից գնահատվել են | Գերազանցիկ են | Հարվածային են | Անբավարար ունեն ընդհանուրը | Մեկ կամ երկու առարկաներից | Երեք կամ ավել առարկաներից | Առաջադիմությունը %-ով | Որակը % -ով | Բաց թողած ժամերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | 31 | | | | | | | | | |
| II | 25 | | | | | | | | | |
| III | 33 | 33 | 4 | 21 | - | - | - | 100% | 78% | 172 |
| IV | 20 | 20 | 4 | 10 | - | - | - | 100% | 72% | 196 |
| V | 32 | 32 | 1 | 16 | - | - | - | 100% | 53% | 166 |
| VI | 19 | 19 | 2 | 5 | - | - | - | 100% | 36% | 158 |
| VII | 18 | 18 | 2 | 10 | 2 | 1 | 1 | 88.9% | 66.7% | 292 |
| VIII | 27 | 27 | - | 11 | 1 | 1 | - | 96% | 40.7% | |
| IX | 27 | 26 | 4 | 3 | - | - | - | 100% | 28% | |
| X | 12 | 11 | 1 | 1 | - | - | - | 100% | 18.2% | 250 |
| XI | 12 | 12 | 1 | 3 | - | - | - | 100% | 33% | |
| XII | 15 | 15 | 1 | 4 | - | - | - | 98.5% | 49% | |
| Ընդամենը | 270 | 213 | 20 | 84 | 3 | 2 | 1 | 98.3% | 47.4% | |

Գծապատկեր 6.

## 2023-2024 թթ ուստարվա II կիսամյակի ամփոփաթերթ

| Դասարաններ | Աշ. թիվը կիս. սկզբին | Որից գնահատվել են | Գերազանցիկ են | Հարվածային են | Անբավարար ունեն ընդհանուրը | Մեկ կամ երկու առարկաներից | Երեք կամ ավել առարկաներից | Առաջադիմությունը %-ով | Որակը % -ով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | 31 | | | | | | | | |
| II | 25 | | | | | | | | |
| III | 33 | 33 | 11 | 12 | - | - | - | 100% | 70% |
| IV | 20 | 20 | 8 | 6 | - | - | - | 100% | 70% |
| V | 32 | 32 | 5 | 12 | - | - | - | 100% | 53% |
| VI | 19 | 19 | 1 | 3 | 1 | 1 | - | 94% | 21% |
| VII | 18 | 18 | 2 | 9 | - | - | - | 100% | 61% |
| VIII | 27 | 27 | 1 | 8 | 1 | 1 | - | 96% | 33% |
| IX | 27 | 26 | 5 | 2 | - | - | - | 100% | 26% |
| X | 11 | 11 | 1 | 1 | - | - | - | 100% | 18% |
| XI | 12 | 12 | 1 | 3 | - | - | - | 100% | 33% |
| XII | 15 | 15 | 1 | 6 | - | - | - | 100% | 47% |
| Ընդամենը | 270 | 213 | 36 | 62 | 2 | 2 | 0 | 99% | 65% |

**Գծապատկեր 7.**

Դասարանների թիվը ընթացիկ և նախորդ երեք ուսումնական տարիների կտրվածքով.

| Դասարանների թիվը | 2020-2021 ուս. տարի | 2021-2022 ուս. Տարի | 2022-2023 ուս. տարի | 2023-2024 ուս. տարի | Դինամիկան ( աճ կամ նվազում ) |
|---|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 1 | 2 | 1 | 1 | նվ |
| 2-րդ դասարան | 2 | 1 | 2 | 1 | նվ |
| 3-րդ դասարան | 1 | 2 | 1 | 1 | նվ. |
| 4-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 5-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 6-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 7-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 8-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 9-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 10-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 11-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| 12-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | նվ. |
| **Ընդհամենը** | 13 | 14 | 13 | 12 | Նվ. |

**Գծապատկեր 8.**

Սովորողների թիվը՝ նախորդ երեք ուսումնական տարիների կտրվածքով

| Ցուցանիշ | 2020-2021 ուս. տարի | 2021-2022 ուս. Տարի | 2022-2023 ուս. տարի | 2023-2024 ուս. տարի | Դինամիկան ( աճ կամ նվազում ) |
|---|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ Տվյալ ուս. տարվա սեպտեմբերի 1-դրությամբ | 257 | 257 | 272 | 270 | նվ. |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուս. Տարվա մայիսի 25-ի դրությամբ | 257 | 257 | 270 | 270 | աճ |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | -- | -- | 3 | - | նվ. |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 3 | 16 | 11 | - | նվ. |

**Գծապատկեր 9.**

**Դպրոցական, մարզային, հանրապետական օլիմպիադաներում սովորողների մասնակցությունը 2022-2023 ուստարում և նախորդ երկու ուստարիների ընթացքում:**

| Ցուցանիշ | 2021-2022 ուս. Տարի | 2022-2023 ուս. տարի | 2023-2024 ուս.տարի |
|---|---|---|---|
| Դպրոցական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | 60<br>23.3% | 40<br>14.7% | 68<br>25% |
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | 41<br>15.9% | 19<br>7% | 18<br>6.6% |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | 9<br>3.5% | 4<br>1.5% | 2<br>0.74% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը | - | 1<br>0.4% | 1<br>0.4% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | - | - | - |

**Գծապատկեր 10.**

Կրթության որակ ասելով հասկանում ենք պետական և առարկայական չափորոշիչին համապատասխան աշակերտների կրթական կարիքների բավարարման գործընթացի բնութագիրը:Կրթության որակի գնահատումը կատարվում է կրթության փաստացի վիճակի ուսումնասիրությամբ:Հաշվի է առնվում տարեկան և օրվա աշխատանքային պլանների առկայությունը,դրանց կատարողականները,դասալսումների ընթացքում ուշադրություն է դարձվում դասի վարման ձևին, օգտագործվող մեթոդների , հնարների կիրառման արդյունավետությանը,ժամամակի նպատակային օգտագործմանը, դասապրոցեսին աշակերտների մասնակցային ակտիվությանը, հաղորդվող նյութի ծավալին,վերջնարդյունքների ապահովմանը և միջառարկայական կապերին: Կրթության որակի վերլուծության համար կարևոր է տարեսկզբի և տարեվերջի ներքին ստուգումները և արդյունքների համադրումը,դասարանի՝ կիսամյակի վերջում ունեցած առայադիմության,որակի ցուցանիշների համադրումը:

Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցությունը որոշվում է դասալսումների, ստուգիչ գրավոր աշխատանքների, մշտադիտարկման միջոցով:Դասի որակը որոշում է դասապրոցեսին սովորողների ներգրավվածության աստիճանով,նոր չափորոշիչների պահանջներին համապատասխանությամբ, նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման աստիճանով,աշակերտակենտրոն դասի վարմամբ,գնահատման նոր մեխանիզմների կիրառման արդյունավետությամբ:: Ստացված արդյունքների ուսումնասիրությունը,համադրումը, մշտադիտարկումը օգնում են որոշել՝ ինչ ծավալով են կատարվել աշխատանքները:Ըստ այդմ էլ որոշվում են որքանով են այդ աշխատանքները նպաստում կրթության որակի և առաջադիմության բարձրացմանը,առկա է գիտելիքների,կարողությունների,հմտությունների շարունակական աճ,թե ոչ:

**Արտադպրոցական և երկարօրյա** ուսուցման կազմակերպման աշխատանքները շատ կարևոր նշանակություն ունեն աշակերտի հոգևոր և ֆիզիկական դաստիարակության գործում:Արտադպրոցական ցանկացած պարապմունք, աշխատանք դրական ազդակ է երեխայի համար իր հակումների, նախասիրությունների, ներքին պոտենցյալի բացահայտման գործում:Դա օգնում է երեխային կտրվել փողոցից, ավելի հետաքրքիր դարձնել իր առօրյան, գտնել իր հետաքրքրություններին համապատասխան զբաղմունք, արդյունավետ օգտագործել ազատ ժամանակը:
Արտադպրոցական միջոցառումները մեր դպրոցում հաճախ են կազմակերպվում:Աշակերտների ներգրավվածությունը բարձր է, մասնակցում են սիրով, հանդես գալիս նախաձեռնողաբար:
Երկարօրյա ուսուցումը մեծ օժանդակություն է ծնողին՝ երեխայի ուսման որակը, դասի յուրացման ծավալը մեծացնելու հարցում:Ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին օժանդակելու հարցում երկարօրյա ուսուցման կազմակերպումը կարևոր է:Դրա ներդրումը ժամանակի պահանջ է:Դպրոցում պետք է կազմակերպվի երկարօրյա ուսուցում՝սովորողների և նրանց ծնողների ակտիվ օժանդակությամբ:Դա կնպաստի ուսման որակի բարձրացման գործին:

**Ժողովրդավարական արժեհամակարգի** անբաժանելի մասն են բազմակարծությունը,ներառական և մասնակցային արժեքային միջավայրը:Յուրաքանչյուր ոք ունի իրավունք ունենալ սեփական դիրքորոշում և ազատ արտահայտել այն:Աշակերտին և մանկավարժին բազմակարծիք ,ներառական,մասնակցային միջավայրը հնարավորություն է տալիս ազատ կամարտահայտվելու, պաշտպանելու իր տեսակետը, իր իրավունքները, նաև հարգելու այլոց կարծիքն ու իրավունքները:Այդպիսի առողջ, անկաշկանդ մթնոլորտում անհատը ձևավորվում է որպես սուբյեկտ,այլ ոչ թե դառնում օբյեկտ:Ներառական,մասնակցային միջավայրը ենթադրում է ներգրավվածություն(ուսուցիչների, ծնողների, աշակերտների,վարչական աշխատողների,խորհրդի,խորհրդակցական մարմինների,ՀՀ ԿԳՄՍ նախարարության,պետական տարածքային մարմինների,համայնքի)դպրոցի գործնեության մեջ::Ժողովրդավարական մշակույթը մերժում է միահեծան կառավարումը , ապահովում փոխհամագործակցային մթնոլորտ :

**Բոլոր սովորողների համար՝անկախ ունակություններից,սոցիալական վիճակից,ապահովված է որակյալ հանրակրթության ստացում,անձի ինքնադրսևորման ,ինքնազարգացման նպաստավոր միջավայր:**

**Հալածանքի**,օտարման,բռնության կանխարգելումը դպրոցում կարևոր նշանակություն ունի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման գործում: Պրոբլեմը լուծում են ոչ թե պրոբլեմի թվացյալ բացակայությամբ և կոծկումով, այլ հակառակը՝ եղած խնդիրների բարձրաձայնմամբ և դրա լուծման գործընթացների թափանցիկությամբ :Շատ հաճախ խուսափում են արատավոր երևույթի բարձրաձայնումից կամ հանրայնացումից, որևհետև դա հարվածում է դպրոցի վարկանիշին: Ազգային,սոցիալական,ֆիզիկական բնույթով պայմանավորված բռնությունների,անհանդուրժողականության,հալածանքի,օտարման դեպքերը եղել են և կլինեն, քանի դեռ դրանք վեր չեն հանվել և չեն դատապարտվել: Ցավոք, վատ օրինակը միշտ վարակիչ է, շատ երեխաներ դա համարում են ուժի, ինքնահաստատման, ամենակարողության չափանիշ և ընդօրինակում են:Սկսվում է շղթայական ռեակցիան: Կանխարգելումը ենթադրում է խրստ մոտեցում, անհանդուրժողականութրուն նույնիսկ ամենաչնչին դրսևորման դեպքում:Կատարվում են դաստիարակչական,բացատրական աշխատանքներ,կարևոր է կատարվող աշխատանքների հետևողականությունը և շարունակական լինելը:
Դպրոցական բռնությունը կարող է լինել հուզական և ֆիզիկական բնույթի:Դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայությունը , յուրաքանչյուր աշակերտի տեղեկացվածությունը իր իրավունքների և պարտականությունների մասին, բռնության բացառման նպատակով իրավապահ մարմինների ներգրավվածությունը կանխարգելում են հալածանքի, բռնության դեպքերը :Ճգնաժամային իրավիճակներում կարևոր է արագ արձագանքումը,մանկավարժահոգեբանական գործողությունները,դաստիարակչական աշխատանքները,կրկնվելու դեպքում՝ պատիժը իրավապահ մարմինների կողմից, շրջայցերը , զրույցները:
Մեր դպրոցում բռնության,հալածանքի,օտարման ցանկացած ձևի բացառման ուղղությամբ հետևողական աշխատանքներ են տարվում: Այս աշխատանքում ներգրավված են բոլորը՝սկսած դպրոցական համակազմից մինչև ծնողական խորհուրդ:Հիմնական աշխատանքները կատարվում են դասղեկների, ԿԱԴԱՀ-ի կողմից:Ցավոք, դպրոցը չունի հոգեբան և սոցմանկավարժ:
Կրեդիտային՝ միջնակարգ կրթության ուսումնական գործընթացի կազմակերպման ,սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման,կրթական ծրագրերի

յուրացման կրեդիտների միջոցով չափման,հաշվառման և փոխանցման համկարգը դեռ չի գործում դպրոցում, բայց դրված են դրա նախադրյալները: Ուսման որակի վրա երևում է դրական դինամիկա,ուսուցման այլընտրանքային ձևերը, համագործակցային դասերը, նախագծային աշխատանքները խթանում են սովորողի մտավոր ունակությունները և օգնում առավել խորությամբ ընկալելու նյութը:Դասապրոցեսը դարձել է ավելի աշխույժ,դինամիկ, աշակերտները հետաքրքրված են ,ունեն սովորելու ձգտում:

Սովորողների հաճախելիության ցուցանիշը անընդհատ վերահսկվում է:Հաշվառման մատյանները կանոնավոր լրացվում են, յուրաքանչյուր բացակայության պատճառ պարզաբանվում է դասղեկների և բուժքրոջ կողմից: 2023-202թթ 2-րդ կիսամյակում երկու աշակերտ հատել են 60 բացակա ունենալու շեմը և հանձնել են վերաքննություն:

## Այս ամենի հետ միասին կան բացթողումներ, որոնց ուղղումը մեր նպատակների տիրույթում է:

- Ուսուցման ժամանակակից մեթոդների՝նախագծային աշխատանքների,ինտեգրված համակարգչային դասերի,լաբորատոր,գործնական, խմբային,համագործակցային աշխատանքների իրականացումը ,տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը առայժմ թույլ է զարգացած:
- Աշակերտները թույլ են տիրապետում ժողովրդավարական և քաղաքացիկան կարողունակությանը, թվային և մեդիա կարողունակությանը,ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությանը,տնտեսական կարողունակությանը:Սակայն գործընթացը դինամիկ զարգացման մեջ է և երևում է առաջընթաց:
- Անհրաժեշտ է բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի կրթության որակի բարելավում՝ շնորհիվ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման նոր ձևերի:Այստեղ կարևորվում է լաբորատորիաների առկայությունը և հագեցվածությունը: Արդեն սկսվել է դպրոցի գործող և նոր ստեղծվող լաբորատորիաների համար նոր գույքի և սարքավորումների, տեխնիկական միջոցների տրամադրման գործընթացը:Սա լայն հնարավորություն կտա ԲՏՃՄ առարկաների արդյունավետ դասավանդման և բարձր արդյունքներ ակնկալի:
- Նախագծային աշխատանքների կազմակերպումը և կատարումը դեռևս որոշակի դժվարություններ են ներկայացնում ուսուցիչների աշակերտների համար: Այն առաջին քայլերն է անում:
- Երբեմն անհարկի բարձրացվում են գնահատականները՝ բարձր ցուցանիշներ ապահովելու համար,և որակի ցուցանիշը չի համապատասխանում իրական վիճակին: Դրանք բացառելու համար կարևորվում է տնօրինության կողմից հաճախ իրականացնել ամփոփիչ գրավոր աշխատանքներ:
- Բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրը դեռևս թույլ է զարգացած,չկա նախաձեռնողականություն տարատեսակ հարցերի քննարկման և ինքնուրույն իրագործման հարցերում: Բոլորը սպասում են, որ ինչ որ մեկը կգա և կլուծի իրենց հարցերը իրենց փոխարեն:
- Պասիվ կեցվածքը դեռ իներցիայով շարունակվում է,ավելի շատ անտարբերությունն է տիրում, չկա մոտիվացիա տեր կանգնելու սեփական իրավունքներին, նաև կատարելու ներքին կանոնակարգով իրենց վերապահված պարտականությունները:
- Աշակերտների արտադպրոցական կրթությունը դեռևս բավարար չէ:Նպատակային էքսկուրսիաների կազմակերպումը,մարզական ճամբարների,ամռանը բակային ճանբարների կազմակերպումը,սպորտային,պարի, նկարչության, քանդակագործության, կար ու ձևի նոր խմբակների բացումը ավելի բովանդակալից կդարձնի սովորողների առօրյան: Կնպաստի նաև աշակերտների տաղանդի և նախասիրությունների ,

ստեղծագործական ունակությունների բացահայտմանը:

- Թույլ է սովորողների և մանկավարժների ներգրավվածության աստիճանը ինքնակառավարմանը:Դեռ շատ անելիքներ կան աշակերտների իրավական, կառավարչական, մասնակցային գիտելիքների տիրապետման և կիրառման հարցում: Դպրոցի ինքնակառավարմանը իրենց ձայնը լսելի դարձնելու գործում հետևողական չեն:

## 2.2 Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները

Արդի ժամանակաշրջանում մանկավարժը պետք է ունենա հաստատուն արժեքներ և օբյեկտիվ վերաբերմունք, մասնագիտական հմտություններ և գիտելիք՝ հիմնված բազային գիտելիքների և արդի տեխնոլոգիաների և մեդիարագիտության վրա:

Մանկավարժական գործունեությունը պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ բարելավում : Խնդիր է դրված զարգացնել ուսուցիչների առարկայական և մանկավարժական կարողունակությունները,ապահովել շարունակական մասնագիտական զարգացում: Այդ նպատակով տարվում է մանկավարժական աշխատողի մասնագիտական զարգացման կարիքի գնահատում,ըստ դրա էլ աշխատանքներ են տարվում մանկավարժի որակավորման բարձրացման ուղղությամբ: Մեծ ուշադրություն է դարձվում մանկավարժական համակազմի ինքնակրթությանը, տարատեսակ վերապատրաստումներին, սեմինարներին, վեբինարներին մասնակցությանը,որոնք միտված են նպաստելու կրթական ոլորտում բարեփոխումների իրականացմանը, կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Մանկավարժը պետք է ծանոթ լինի կրթության բնագավառի և իրենց գործունեությանը վերաբերող օրենսդրական հարցերին, ծանոթանա նորագույն կրթական տեխնոլոգիաներին, դասավանդման ժամանակակից մեթոդներին և հնարներին,սովորի դրանք կիրառել, ծանոթ լինի նոր չափորոշիչներին և ծրագրերին,ուսուցումը կազմակերպի ըստ այդ պահանջների:Նա պետք է շարունակաբար ինքնուսուցվի և ինքնակրթվի , ձեռք բերի հմտություններ դասի պլանավորման և իրականացման գործընթացում, ուսումնաօժանդակ և տեխնիկական միջոցներով ուսումնական խնդիրներ լուծելու հմտություններ: Հաճախակի կիրառի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ :Մանկավարժը պետք է զարգացնի ուսումնական և մեթոդական նյութեր մշակելու , դասեր պլանավորելու և վարելու, դասերը վերլուծելու և գնահատելու կարողունակություններ, տիրապետի գնահատման նոր մեխանիզմին և հաջող կիրառի:
Իմանա ՀՊՉ –ի հիմնական դրույթները,ուսուցիչներին ներկայացվող պահանջները,ծրագիրը, դասավանդման մեթոդները և գնահատման համակարգը, տարիքային և մանկավարժական հոգեբանության առանձնահատկությունները տվյալ առարկայի դասավանդման գործընթացում:

Կրթությունը բոլորի համար է՝ անկախ տարիքից: Երբ տեղի է ունենում ունենում լճացում, քարացած մեթոդներով ,դոգմատիկ ուսուցումով ժամանակակից տեղեկատվական հոսքից օգտվող աշակերտին չես հետաքրքրի:Եթե մանկավարժը դադարում է զբաղվել իր մասնագիտական գիտելիքների հարստացմամբ ,ժամանակակից մարտահրավերներին չի կարող դիմակայել: Փոխվում են ժամանակները, փոխվում է աշակերտների հետաքրքրությունների շրջանակը, պետք է փոխվեն նաև դասավանդման մեթոդները, գիտելիքի մատուցման ձևերը:ՈՒսուցիչը պետք է լինի ճկուն և դինամիկ իր աշխատանքում:

Գաղտնիք չէ, որ շատ մանկավարժներ , առավել ևս ավագ սերնդի, լավ չեն տիրապետում ՏՀՏ միջոցներին, որը բերում է նրան, որ խուսափում են դասերի վարման նոր և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումից, արդյունքում տուժում է դասի որակը:
Մեր մանկավարժների մոտ մեդիագրագիտությունը և ժամանակակից տեխնիկական միջոցներին տիրապետելու կարողունակությունը ցածր է: Այս կարիքի բավարարման համար կարևորում եմ համապատասխան ուղղությամբ վերապատրաստումները:
Մանկավարժը պետք է կարողանա ստեղծել հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված բարենպաստ կրթական միջավայր:Սովորողի մեջ ձևավորի ուսման նկատմամբ հետաքրքրություն և սովորածը գործնականում կիրառելու հմտություններ:Հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկությունները,ապահովի տարբերակված ուսուցման կազմակերպումը՝ներառելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին:Մանկավարժը պետք է կարողանա օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից , դրանց միջոցով կազմակերպի ուսումնական գործընթացը, ստեղծի թվային առցանց առաջադրանքներ,շնորհանդեցներ,տեսանյութեր, համօգտագործել դրանք:Տիրապետի երեխաների սովորելու առանձնահատկությունների՝ուսումնառության ոճերին,և դրանց համապատասխան կառավարի ուսումնառության գործընթացը: Կարողանա արդյունավետ կառավարել դասարանը ,սովորողների վարքը:Սեփական վարքով օրինակ ծառայի,նպաստի իրավահավասարության, մարդասիրության,արդարության մթնոլորտի ձևավորմանը դասապրոցեսում և դասարանում:
Այժմ, երբ համընդանուր ներառական կրթությունը ենթադրում է տարբերակված ուսուցում,ԱՌԻՊ-ների կազմում,սովորողների կրթության առանձնահատուկպայմանների կարիքի բացահայտում և գնահատում,մեծանում է մանկավարժի՝ հոգեբանության ասպարեզում գիտելիքների և,կարողություններին,հմտություններին տիրապետելու ունակությունը: Անհրաժեշտ են նոր ռազմավարություններ, նոր մոտեցումներ, նոր մեթոդներ:Պետք է կարողանա ընտրել և կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ , այնպես պլանավորի դասը ,որ բոլոր սովորողները մասնակցություն ունենան դասին, իրականացնի համատեղ դասավանդում:
Սա հեշտ աշխատանք չէ: Անհրաժեշտ է շարունակաբար ինքնակրթվել, հմտանալ սովորածը կիրառելու գործում:
Մեր ուսումնական հաստատությունն ունի 50 աշխատակից, որոնցից դասավանդում են 23 մանկավարժ, բարձրագույն կրթություն ունեն բոլորը և անցել են ընթացիկ ատեստավորում, համապատասխանում են մանկավարժի որակավորմանը: Մեկ մանկավարժ անցել է կամավոր ատեստավորում:Մանկավարժները աշխատում են շաբաթական միջինը 17 դասաժամ ծանրաբեռնվածությամբ:
Մեծամասամբ հմուտ մանկավարժներ են՝ նվիրված իրենց աշխատանքին և պատրաստ են իրենց փորձը փոխանցել սկսնակներին:



**Գծապատկեր 11.** Դպրոցի մանկավարժական աշխատողներ

| **Ցուցանիշ** | **Թիվ** | **Տոկոս %** |
|---|---|---|
| Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ | 23 | 100% |
| Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ | - | - |
| Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ | 23 | 100% |
| Տարակարգ ունեցող ուսուցիչներ | - | - |
| Վերապատրաստում անցած ուսուցիչներ | 23 | 100% |
| Վերապատրաստող ուսուցիչներ | - | - |
| Ուսուցիչների միջին տարիքը | 52 | |

**Գծապատկեր 12.**

2023-2024 ուսումնական տարում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակում ընթացիկ վերապատրաստում են անցել 12 մանկավարժ,որոնցից պարտադիր ատեստավորվել են և ստացել վկայականներ 3-ը,ևս 9-ը ստացել են հավաստագրեր:

## Մեր ուսումնական հաստատության մանկավարժների կրթական կարիքներն են՝

- Հանրակրթության  բնագավառի օրենսդրության ոչ բավարար իմացություն:
- Կրթական գործընթացի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ոչ բավարար  իմացություն:
- Պաշտոնական պարտականությունների ոչ լիարժեք իմացություն:
- Էլեկտրոնային դասընթացների ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացին տիրապետելու հմտությունների բացակայություն:
- ՌԽուցման կառավարման համակարգերի թվային գործիքների միջոցով թվային առաջադրանքների ստեղծման կարողունակությունների բացակայություն:
- Կրթության բնագավառում կիրառվող նորագույն տեխնոլոգիաների կիրառման հմտությունների պակաս:
- Նոր չափորոշիչների տիրապետման և կիրառման ուղղությամբ կարողունակությունների  պակաս:
- Մանկավարժահոգեբանական  հմտությունների կատարելագործման կարիք, ԱՌԽՊ-ի կազմման գործընթացում  խորհրդատվության կարիք:
- Նոր գնահատման մեխանիզմին տիրապետման հմտությունների պակաս:

Աշխատակազմի աշխատանքի պայմանների բարելավումը,նրանց հանգստի և սննդի պայմանների կազմակերպումը, կատարած աշխատանքի գնահատումը,խրախուսումը,պարգևատրումները,մեծարումը մեծապես ազդում են դպրոցում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի վրա, որն էլ իր հերթին նպաստավոր միջավայր է ստեղծում ինքնակրթության, մանկավարժական և մասնագիտական ունակությունների զարգացման համար: Գրադարանը, ընթերցասրահը,առարկայական սենյակները՝հագեցած համապատասխան տեխնիկական միջոցներով, կստեղծեին  համապատասխան միջավայր:Տարատեսակ վերապատրաստումները , առցանց  դասընթացները , ուսումնամեթոդական ուղեցույցները, փորձի փոխանակումը  և դրանց  արդյունքում  դասապրոցեսի արդյունավետության  մեծացումը որակական և քանակական ցուցանիշների  կապահովեն, կլուծեն կրթական կարիքները:

Դպրոցում դասավանդող մանկավարժները ունեն բարձրագույն կրթություն,մեկ ուսուցիչ կամավոր ատեստավորվել է:
Մանկավարժները մասնակցել են պարտադիր  ատեստավորմանը,տարատեսակ վերապատրաստումների,սեմինարների,վեբինարների՝ տարբեր կրթական ծրագրերով:Վերապատրաստումների արդյունավետությունը  որոշվում է  դասալսումների,նաև փոխադարձ դասալսումների ընթացքում դիտարկման միջոցով, թե որքանով է կիրառվում գործնականում վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքներն ու հմտությունները:Շատ կարևոր են առաջավոր փորձի փոխանակումը, բաց դասերը,դաս-միջոցառումները,դաս-վիկտորինաները,դաս-ներկայացումները,ցերեկույթները:2023-2024   ուսումնական  տարվա ընթացքում  մեր դպրոցում  նմանատիպ միջոցառումների  քանակը նկատելիորեն ավելացել է,որն էլ  աշխուժացրել է  ուսումնական գործընթացը:

Ուսումնական գործընթացում ներգրավված մանկավարժները մեծամասամբ փորձառու են,արհեստավարժ իրենց գործում,շատերը նվիրյալներ են և հետամուտ ուսումնառության գործընթացի արդյունավետ իրագործմանը:

Մանկավարժական կոլեկտիվում տիրում է փոխըմբռնման և համագործակցության մթնոլորտ:

Մանկավարժը արժևորված է կոլեկտիվի կողմից,գնահատվում է նրա աշխատանքը:

Սկսնակ մանկավարժները ստանում են մասնագիտական և բարոյական աջակցություն փորձառու մանկավարժների կողմից, իրեք էլ իրենց հերթին օգնում են վերջիններիս նորագույն տեխնոլոգիաների յուրացման գործում:

Դպրոցի անձնակազմի արժևորման և խրախուսման նպատակով նախատեսվում է դպրոցում նոր համակարգի ներդրում, որի հիմքում ընկած լինեն աշխատողի ինքնակրթությունը,մասնագիտական զարգացումը, նախագծային աշխատանքների որակը, տարբեր միջոցառումների կազմակերպումը, նախաձեռնողականությունը, սովորողների գրանցած արդյունքները:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024թվականի հունվարի 31-ի N136-Ա12 հրամանի սահմանվել է ՀՊՉ-ի ներդրման լավագույն փորձի խրախուսման ընթացակարգ , ըստ որի նախատեսվում է ունենալ լավագույն փորձի խրախուսման 10 անվանակարգ, որոնց հաղթողները կպարգևատրվեն և կարժանանան <<Տարվա լավագույն>>կոչմանը:

Գծապատկեր 14-ում ներկայացված է ուսուցչական անձնակազմի որակական ցուցանիշների տվյալները:

**Այժմ անդրադառնանք այն խնդիրներին, որոնք առկա են,և դրանց լուծումը ժամանակի պահանջ է:**

- Մանկավարժների մեծամասնությունը մասամբ է տիրապետում համակարգչային գրագիտությանը,որը խնդիրներ է առաջացնում աշխատանքի ընթացքում:
- Արդի գիտատեխնիկական առաջընթացի դարաշրջանում, մրցունակ մասնագետ պատրաստելու համար հենքը դրվում է հենց դպրոցից: Որպեսզի աշակերտին կրթի ժամանակին համահունչ,մանկավարժը ինքը շատ հարցերում ինքնակրթվելու կարիք ունի:Հին, քարացած մեթոդներով ժամանակակից երեխայի մեջ հետաքրքրություն չես առաջացնի:Դրա լավագույն լուծումը դպրոցում համակարգչային դասընթացների կազմակերպումն է ՏՀՏ մասնագետների կողմից:

- ՈՒսուցիչները պասիվ են մասնակցում տարակարգ ստանալու գործընթացին, հազվադեպ են դիմում կամավոր ատեստավորման համար:Անհրաժեշտ է բացատրական աշխատանքներ տանել, ոգևորել,վստահություն սերմանել իրենց ուժերի նկատմամբ, կազմակերպել թեստերի համատեղ լուծումներ,քննարկումներ:Շատ հաճախ չդիմելու գլխավոր պատճառը սեփական ուժերի անհարկի թերագնահատումն է, տապալվելու վախը, անհամարձակությունը:Տնօրենը, տեղակալը սեփական ուժերի հանդեպ վստահություն պետք է սերմանեն մանկավարժների մոտ:
- Չեն ճշտվում մանկավարժների կարիքները,չի կատարվում կարիքի գնահատում, ըստ այդմ ինքնակրթության համար միջավայրի ապահովում:

- Սկսնակ մանկավարժների հետ մասնագիտական,հոգեբանամանկավարժական խորհրդակցություններ,սեմինարներ չեն կազմակերպվում:
- Դպրոցում չեն կազմակերպվում մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված ներդպրոցական ձևաչափով քննարկումներ և սեմինարներ:Սա հանգեցնում է լճացման: Յուրաքանչյուր մանկավարժ անհատականություն է,յուրաքանչյուր դաս՝յուրօրինակ, չկրկնվող, լի ինպրովիզներով:Յուրաքանչյուրից՝թեկույզ սկսնակից, կարելի է մի բան սովորել,այն մի միտք կտա , կծնվի մի նոր գաղափար,որի շուրջը կարելի է անցկացնել քննարկումներ, ստեղծագործաբար զարգացնել գաղափարը,ստեղծել նորը:Եվ սա պետք է լինի շարունակական:
- ՈՒսուցիչների՝ իրավական,մանկավարժական, հոգեբանական ,ուսուցման մեթոդաբանության,ներառական կրթության կազմակերպման վերաբերյալ գիտելիքները կարիք ունեն շարունակաբար զարգանալու:Դրա համար անհրաժեշտ է համապատասխան պայմաններ և գործողություններ:
- Ցանկալի է,որ կազմակերպվեն միջդպրոցական ձևաչափով սեմինարներ,որի ընթացքում յուրաքանչյուրը կիսվի իր առաջավոր փորձով , ներկայացնի իր նորարարական մեթոդները, խնդիրների լուծման իր բանաձևերը:Վերջնահաշվով կշահեն բոլորը և առավելապես աշակերտը:
- Երիտասարդ մանկավարժները քիչ են:Հիմնականում աշխատում են որպես ուսուցչի օգնական:Նրանց նախաձեռնողականությունը,նոր տեխնոլոգիաների, նորարարական մոտեցումների իմացությունը պետք է գումարել փորձառու ուսուցիչների հմտություններին, աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու ունակություններին և օգտագործել ի շահ ընդհանուր նպատակի:
- Քիչ են նորարար ուսուցիչները, որը պայմանավորված է նաև դպրոցում ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիության ցածր մակարդակով:

- Չունենալով նյութատեխնիկական ամուր բազա, շատ ծրագրեր, նորարական լուծումներ այդպես էլ չեն իրագործվում և ուսումնական գործընթացը հիմնակնում հենվում է ուսուցչի գիտելիքների, հմտությունների, եռանդի և ինքնանվիրումի վրա:
- Երբեմն ուսման որակը մատնանշող ցուցանիշները ուռճացվում են և ցույց չեն տալիս իրական պատկերը.ուսուցչից և դասղեկից պահանջում են բարձր ցուցանիշներ, հակառակ դեպքում նրա աշխատանքը համարվում է անարդյունավետ,որն էլ դրդում է արհեստականորեն բարձրացնել գնահատականները: Այստեղից էլ առաջանում է անհամապատասխանությունը արտաքին գնահատման,տնօրինության կողմից տրվող վերստուգիչ գրավոր աշխատանքների արդյունքների հետ:Ուսուցիչների աշխատանքի որակի գնահատման համար կարևոր է նրանց անցկացրած դասի որակի ստուգումը դասալսումների, ստուգիչ գրավոր աշխատանքների միջոցով:Որոշիչ է աշակերտների դասապրոցեսին ակտրվ մասնակցության աստիճանը,համագործակցային միջավայրի առկայությունը,նյութի յուրացման չափը,գիտելիքների կիրառման կարողունակությունը:Մանկավարժի աշխատանքի

որակի ցուցիչ է նաև իր աշակերտների՝ օլիմպիադաներին մասնակցության և մրցանակային տեղերի գրավման տոկոսային հարաբերակցությունը:

- Մանկավարժները չեն ստանում նյութական խրախուսում:Որպես քաներկու տարվա ստաժ ունեցող մանկավարժ, կարող եմ հավաստել, որ ոչ մի անգամ մեր դպրոցի մանկավարժական համակազմը պարգևավճար չի ստացել:
- Տարակարգի ստացման գործընթացը, կամավոր ատեստավորումը շտկել են իրավիճակը,մանկավարժը հասկանում է,որ իր արժևորումը առաջինը գալիս է իրենից, իր մասնագիտական զարգացումից, որը իր նյութական բարեկեցության գրավականն է նաև:
- Բանավոր խրախուսումը, պատվոգրերը որպես խրախուսման միջոց հազվադեպ են կիրառվում:
- Մանկավարժները մեծամասամբ կանայք են:Տուն վերադառնալով՝ նրանք թաղվում են ընտանեկան հոգսերի և պարտականությունների մեջ և քիչ ժամանակ են տրամադրում ինքնազարգացմանը և ինքնակրթությանը:Մինչդեռ, եթե դա հնարավոր լինի կազմակերպել դպրոցում, դասապրոցեսից ազատ ժամանակ, մանկավարժը արդյունավետ կօգտագործի իր ազատ ժամանակը և այն կտրամադրի ինքնակրթվելուն:Անհրաժեշտ է դպրոցի ողջ տարածքը ապահովել ինտերնետ հասանելիությամբ:Գործող, նյութատեխնիկապես հագեցված, գրքային և էլեկտրոնային հարուստ ֆոնդ ունեցող գրադարանը կլինի հաճելի միջավայր, որտեղ մանկավարժը նույնպես կզբաղվի ինքնակրթությամբ:Այժմ այդ հնարավորությունը չկա:
- Մանկավարժի աշխատանքը լարված և բարդ է:Հոգնածությունը թոթափելու համար չկա հարմարավետ մջավայր:
- Ստեղծված չեն բարենպաստ պայմաններ անձնակազմի արժանապատիվ աշխատանքի իրականացման համար,չկան սնվելու, հանգստի պայմաններ, որի արդյունքում վերջին դասաժամերին նվազում է աշխատանքի արդյունավետությունը և վերջին հաշվով ուսուցման որակն ու ուսման որակը:
- Ցանկացած լավ աշխատանք,լավ արդյունք պետք է գնահատվի ըստ արժանվույն:Պետք է ստեղծվի այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, այնպիսի միջավայր, որ ուսուցիչը, ինչպես և աշակերտը հաճույքով գա դպրոց և դժկամությամբ գնա դպրոցից:

## 2.3 Կրթության կառավարման մարմինների, համայնքի, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը

Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է՝

1. **ՀՀ սահմանադրությամբ**
2. **«Կրթության մասին» ՀՀ օրենքով**
3. **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով**
4. **«Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիահով**

5. **Աշխատանքային օրենսգրքով**
6. **«Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքով**
7. **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով**
8. **Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգով**
9. **Դպրոցի կանոնադրությամբ**
10. **Դպրոցի ներքին իրավական ակտերով**
11. **Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական ակտերով, որոշումներով, հրամաններով:**

Պետության ամուր հիմքը ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված կրթական համակարգն է, սկսած նախադպրոցական կրթական հաստատություններից մինչև ակադեմիականը: Այդ համակարգի կարևոր օղակներից է նաև մեր հանրակրթական հիմնական դպրոցը, որի գործունեությունը համապատասխանում է ՀՀ կրթական քաղաքականությանը, ոլորտը կարգավորող օրենսդրությանը և դպրոցի կանոնադրությանը:

Մեր ուսումնական հաստատության գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին:

Ուսումնական հաստատությունը առաջնորդվում է ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրով կրթության զարգացմանն ուղղված նպատակներով և ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով:

Հաստատությունը համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Գեղարքունիքի մարզպետարանի, Մարտունու համայնքապետարանի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների հետ:

ՏԻ մարմինները, ծնողական համայնքը նույնպես խորապես շահագրգռված են ակտիվ համագործակցել դպրոցի հետ, որովհետև այն նոր սերնդի դարբնոցն է և, կախված նրա աշխատանքից ,ձևավորվում է նոր մարդը, նոր քաղաքացին:

Ուսումնական հաստատությունը զարգացող մարմին է , անընդհատ փոփոխվում են կրթական կարիքները, ժամանակի հետ առաջ են գալիս նոր առաջնահերթություններ և պահանջում ավելի արհեստավարժ մոտեցումներ:Դրանց արդյունավետ լուծումները պահանջում են կառավարման,ուսուննադաստիարակչական աշխատանքների, վարչատնտեսական գործունեության համալիր փոփոխություններ,առավել ճկունություն, նորագույն տեխնոլոգիաների և հնարների կիրառում:Մեր հանրապետության համապատասխան կառույցները՝ի դեմս կառավարության,ԿԳՄՍՆ նախարարության մշակում և իրականացնում են նոր որոշումներ,որոնց վերջնանպատակը կրթության ոլորտի համապատասխանեցումն է միջազգային չափանիշներին և արդի մարտահրավերներին:Այդ փոփոխությունները միտված են ուսուցման և

ուցումնառության գործընթացի որակական փոփոխություններին ի շահ կրթական ոլորտի զարգացման:Դպրոցի գերխնդիրն է այդ որոշումների արդյունավետ իրագործումը:

**Դպրոց- համայնք կապերը** , ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցությունը սահմանվում են ըստ համապատասխան բնագավառներում կատարված աշխատանքների արդյունավետության աստիճանի:Որքանով են ջանքեր ներդրվել այդ համագործակցությունը ավելի նպատակային, ավելի արդյունավետ դարձնելու համար:Գնահատման չափանիշ կարող է դառնալ համագործակցության արդյունքում դպրոցին սատարելու, ֆինանսական օժանդակության,տարատեսակ նպատակային ծրագրերի իրականացման գործում նրանց ցուցաբերած աջակցության չափը,համատեղ ծրագրերում ներգրավվածության աստիճանը:

Հաստատությունը համագործակցում է
ՀՀ կառավարության,
ԿԳՄՍ նախարարության ,
Գեղարքունիքի մարզպետարանի,
Մարտունու համայնքապետարանի,
ԿՋՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի,ԴՏԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ
մարմինների, գյուղի համայնքի, ծնողական համայնքի հետ:

Շահառու կազմակերպությունների հետ տեղի են ունենում քննարկումներ,հանդիպումներ:

Ուսումնական հաստատությունը համագործակցում է պետական և համայնքային մարմինների, ծնողական համայնքի հետ, ինչը դրսևորվում է տարբեր նախաձեռնություններում ակտիվ ներգրավմամբ:Կազմակերպվում են միջոցառումներ, հանդիպումներ,շաբաթօրյակներ:Համայնքի ներկայացուցիչները այցելում են դպրոց համայքին վերաբերվող տարբեր հիմնախնդիրների լուծման առաջարկությունների շուրջ քննարկումների դեպքում:Արդեն դարձել է բարի ավանդույթ.յուրաքանրչյուր տարի համայնքապետարանը ֆինանսական միջոցներ է տրամադրում շրջանավարտներին՝ վերջին զանգի միջոցառման կազմակերպման նպատակով:Համայնքապետարանը օգնում է կազմակերպել աղբահանությունը, օգնում վերացնել վթարները:

Ծնողական համյնքը ակտիվ է,պատրաստակամ է օգնել դպրոցին:Շատ ծնողներ հաճախ են այցելում դպրոց, մանավանդ տարրական և միջին դասարաններում երեխաներ ունեցողները :Ակտիվ են ,աշխատում են դպրոցին օգտակար լինել տարատեսակ կազմակերպչական հարցերում:Հնարավորության դեպքում առաջարկում են իրենց օգնությունը:

Գյուղի գրադարանի,երկրագիտական թանգարանի հետ սերտ կապեր են գործում:Դպրոցի մանկավարժական և աշակերտական համակազմը ակտիվ համագործակցում է
նրանց հետ:Թանգարանի նմուշները մեծամասամբ ձեռք են բերվել աշակերտների ջանքերով և անմրջական մասնակցությամբ:Հաճախ են կազմակերպվում էքսկուրսիաներ մարզի և հանրապետության տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձաններ,հոգևոր և մշակույթային կենտրոններ:

**Այժմ անդրադառնանք առկա թերություններին և խնդիրներին:**

- Շահառու կազմակերպությունների կողմից այցերը դպրոց քիչ են, հազվադեպ են դպրոցում կազմակերպում տարատեսակ սեմինարներ, քննարկումներ: Դպրոցի և շահառու կազմակերպությունների հետ կապը թույլ է:
- Մանկավարժները համապատասխան կայքերի միջոցով կառավարման մարմինների գործունեության մասին հազվադեպ են տեղեկանում, հետաքրքրված չեն:
- Շատ է կարևորվում համագործակցությունը իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների հետ, նրանց հաճախակի այցերը, զրույցները կարևոր են երեխաների իրավական դաստիարակության առումով,դպրոցում իրավախախտումների, բռնության դեպքերի բացառման առումով:Ցավոք, այդ այցերը հաճախակի չեն:
- Համագործակցությունը բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կարևոր է բարձր դասարանների աշակերտների համար: Մասնագիտական կողմնորոշման առումով անհրաժեշտ են այցելություններ,շփումներ բուհ-երում սովորող շրջանավարտների, պրոֆեսորադասախոսական կազմի, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ:Այդ հանդիպումները կօգնեն աշակերտներին կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում:Այդպիսի այցերը նույնպես հազվադեպ են:

- Բարձր դասարաններում աշակերտներ ունեցող ծնողները առավել պասիվ են: Ոչ բոլորն են ուշադիր իրենց երեխաների հաճախումների և ուսումնառության նկատմամբ:Դա պայմանավորված է նաև նրանով, որ շատ աշակերտներ ավագ դասարաններում կորցնում են հետաքրքրությունը ուման նկատմամբ,դպրոցը և դասապրոցեսը նրանց չի հետաքրքրում, ծնողը տեսնում է դա, հաշտվում իրավիճակի հետ և համարում, որ իր վերահսկողությունը անարդյունք է:Այս դեպքերում ճիշտ է տանել բացատրական աշխատանքներ և աշակերտին ուղորդել համապատասխան արհեստագործական մասնագիտական հաստատություններ:
- Դպրոց-համայնք կապը ամուր է և շատ կարևորվում է: Դպրոցը համայնքի մի մասնիկն է,աշակերտի համար իր հայրենիքը սկսվում է իր գյուղից:Տարատեսակ համայնքային միջոցառումները, աշակերտների մասնակցությունը դրանց, ներգրավվածությունը համայնքի հոգևոր և մշակույթային կյանքին դաստիարակչական մեծ նշանակություն ունեն :
- Ցանկալի է,որ այդ կապը լինի ավելի սերտ և դպրոցը դառնա համայնքային կենտրոն:Գյուղում ,որտեղ չկան , կամ սակավաթիվ են մշակութային և ժամանցային կենտրոնները, համայնքի հոգևոր և մշակութային պահանջմունքները պետք է բավարարվեն նաև դպրոցում կազմակերպվող և իրականացվող տարատեսակ միջոցառումների և ծրագրերի շրջանակներում:
- Դպրոցում ունենք երկու ԿԱՊԿՈՒ աշակերտ:Այդ առումով էլ ավելի է կարևորվում համագործակցությունը մանկավարժահոգեբանական ծառայության տարածքային կենտրոնի համակազմի հետ:Ներառական կրթության առկայությունը պայմանավորում է նաև ակտիվ համագործակցություն այդ աշակերտների ծնողների հետ:Շատ ծնողներ չեն ընդունում իրենց երեխաների խնդիրները, չեն դիմում համապատասխան ծառայությունների օգնությանը:Վերջում երեխայի հատուկ կարիքի լուծման ամբողջ ծանրությունը ընկնում է դպրոցի ուսերին:Ավելի է դժվարանում երեխայի ինտեգրումը աշակերտական համախմբին:Այդ պատճառով ավելի է կարևորվում ծնողների հետ բացատրական աշխատանքները:Ծնողների համար թեմատիկ սեմինարներ, մանկավարժական, հոգեբանական զրույցներ չեն կազմակերպվում:

## 2.4 Հաստատության կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը

Տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունը իրականացվում է  հետևյալ լիազորությունների շրջանակներում. նախատեսվում է խորհրդի աջակցությունը զարգացման ծրագրի կատարմանը, դպրոցի կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական կանոնների հաստատմանը, ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման )մասին հաշվետվությունների, ներքին և արտաքին  գնահատման արդյունքների քննարկմանը:

Այժմ ԿԳՄՍՆ պատրաստվում է միավորել,խոշորացնել ու օպտիմացնել հանրակրթական դպրոցի կառավարման խորհուրդները :Ըստ նոր կարգի 1500-ից պակաս աշակերտի դեպքում,առավելագույնը 7 դպրոցների խորհուրդները կմիանան իրար այնպես , որ միասին վերցրած աշակերտների թիվը չգերազանցի 2500:Մեր դպրոցում արդեմն ընտրվել են ծնողական  և մանկավարժական խորհուրդների կողմից մեկական ներկայացուցիները և  ձևավորվել է դպրոցի կառավարման միասնական խորհուրդը, որը ունի 11 անդամ,որոնք ներկայացնում են 4 դպրոց:

Խորհրդակցական մարմինները՝մանկավարժական խորհուրդը,ծնողական և աշակերտական խորհուրդները իրենց աշխատանքներով օգնում են տնօրինությանը առավել ճիշտ և նպատակային կազմակերպել ուսումնական գործնթացը: Մեծ է նրանց   դերը ուսումնադաստիարակչական աշխատանքներին օժանդակելու գործում:




**Գծապատկեր 13.** Դպրոցի կառավարման խորհուրդը և խորհրդակցական մարմինները:

Կառավարման խորհուրդը,լինելով դպրոցի կառավարման գլխավոր օղակներից մեկը,լսում և գնահատում է զարգացման ծրագրի տարեկան կատարողականը, համագործակցում է տնօրինության հետ, կազմակերպում քննարկումներ,դիտարկումներ,մասնակցում դպրոցի ներքին գնահատմանը, ներկայացնում առաջարկներ և մասնակցում վերջնական որոշումների կայացմանը:

Կառավարման խորհուրդը դպրոցի կառավարման կարևոր օղակներից մեկն է,մեծ է նրա դերը դպրոցի աշխատանքի վերահսկման գործում:

Տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունը իրականացվում է հետևյալ լիազորությունների շրջանակներում. նախատեսվում է խորհրդի աջակցությունը զարգացման ծրագրի կատարմանը,դպրոցի կազմակերպական կառուցվածքի,ներքին կարգապահական կանոնների հաստատմանը,ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման )մասին հաշվետվությունների,ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկմանը: Կառավարման խորհուրդը գործում է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:

Խորհուրդը համագործակցում է տնօրինության հետ,կազմակերպում քննարկումներ, մասնակցում վերջնական որոշումների կայացմանը, որոնք վերաբերվում են ուսումնական գործընթացին,կրթական ծրագրերի իրականացմանը:

Հաստատության կառավարման խորհուրդը տարեկան երկու անգամ լսում է զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություններ, կատարում դիտարկում,կատարում գնահատում,երբեմն, ըստ իրավիճակի, հրավիրում արտահերթ նիստեր:
Անդամներն ինն են, որոնցից չորսը անմիջապես առնչվում են դպրոցի հետ՝ մանկավարժներ և ծնողներ են:
Յուրաքանչյուր տարվա ավարտին խորհուրդն իր կազմից անդամներ է առաջարկում ներքին գնահատման աշխատանքներին մասնակցելու համար:

Մանկավարժական խորհուրդը իրականացնում է կրթության նորարարական նվաճումների և առաջավոր փորձի ներդրում մանկավարժական պրակտիկայում,առաջարկներ է ներկայացնում դպրոցի ղեկավարությանը կրթական աշխատանքների որակի բարելավման առումով, կրթական միջավայրի բարենորոգման , ներառական և մասնակցային միջավայրի կայացման հարցերով:Դրանք վերաբերում են ուսումնական գործընթացին,կրթության որակին և բովանդակությանը, կրթական ծրագրերի իրականացմանը և վերահսկմանը:Մասնակցում է ներքին գնահատմանը,խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում դպրոցի կառավարման գործընթացին:

Մանկավարժական խորհուրդի անդամները երեսուներեքն են: Մանկավարժական խորհուդը առնվազն երկու ամիսը մեկ անգամ հրավիրում է նիստեր, որտեղ ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով քննարկվում են ուսումնամեթոդական և կազմակերպչական հարցեր, վեր հանվում ուսման որակի բարձրացումը արգելակող հարցեր:

Մանկավարժական խորհուրդը ավելի ժողովրդական կառույց է, առաջ է քաշում բազմաթիվ իրավիճակային և հրատապ լուծումներ պահանջող հարցեր:

Երբեմն անցկացվում են արտահերթ նիստեր՝ ըստ իրավիճակի:
Մանկավարժական խորհուրդը հաճախ է հրավիրում նիստեր. Որտեղ քնարկում են ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքը, և սովորողների կրթական կարիքներին և մանկավարժների աշխատանքային պայմաններին վերաբերվող հարցեր:
Առարկայական մեթոդմիավորումները հինգն են, իրենց նիստերի ժամանակ քնարկում են փոխադարձ դասալսումների արդյունքները,ընթացիկ հարցեր:
Ծնողական խորհուրդը կարևոր դերակատարում ունի աշակերտ-ծնող- ուսուցիչ կապը ամուր պահելու և փոխշահավետ համագործակցության գործում:Կարևոր է ծնողի ներգրավվածությունը դպրոցի կողմից որոշումների կայացման գործում, նրա օժանդակությունը կրթական գործընթացին, սատարումը ուսումնադաստիարակչական և արտադպրոցական գործունեությանը:
Դպրոցն ունի աշակերտական խորհուրդ, բաղկացած 12 Անդամներից՝ որոնք ուսման առաջավորներ և առաջնորդներ են:

Ծնողական խորհուրդը բաղկացած է 12 անդամից և նպատակ է հետապնդում օգնել դպրոցին աշակերտների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում, աշակերտների հաճախումների, վարքի, պահվածքի, միջանձնային հարաբերությունների,

ուսման հանդեպ հետաքրքրվածության,ուսման որակի բարձրացման, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ և ուսուցիչ-ծնող փոխհարաբերություններ շրջանակում:

Աշակերտական խորհուրդը՝ սովորողների ինքնավարության գործող մարմինը,խթանում է սովորողների նախաձեռնողականությունը, սովորողներին մասնակից դարձնում տնօրինության կողմից իրենց վերաբերվող որոշումների ընդունմանը:Նրա ներկայացրած առաջարկությունները ամբողջովին արտացոլում են սովորողների կարիքները, կրթական գործընթացի գլխավոր շահառուն նա է, ուսուցման և դաստիարակության վերջնական նպատակը նրա կրթական կարիքների բավարարումն է:

Դպրոցի խորհրդակցական մարմինները ամեն ինչով սատարում են դպրոցի տնօրինությանը և մանկավարժական համակազմին ուսումնակաան գործընթացը արդյունավետ կազմակերպելու գործում:

## Խնդիրները և թույլ կողմերը:

- Մինչ այժմ կառավարման խորհրդի մասնակցությունը դպրոցի կառավարման համակարգում և հաշվետվողականությունը կրում էր առավելապես ձևական բնույթ:Տնօրենի համագործակցությունը հաստատության կառավարման խորհրդի հետ ավելի շատ ավտորիտար է,որոշումները մեծամասամբ միահեծան ընդունում է տնօրենը:
- Հիմնականում ցանկացած հարցում խորհուրդը համակարծիք է տնօրենի հետ,պասիվ է,փորձում է շրջանցել սուր անկյունները: Այնինչ այդ համագործակցությունը պետք է ուղղված լինի սովորողների կրթական կարիքների բացահայտմանը և դրա բավարարմանն ուղղված գործողությունների մշակմանն ու արդյունավետ իրագործմանը:
- Խորհրդի անդամները չէին տեղեկացվում հանրակրթության ոլորտի օրենսդրական փոփոխությունների մասին:
- նոր փոփոխությունները միտված են ավելի արդյունավետ դարձնել այդ համագործակցությունը:
- Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև համագործակցությունը բացակայում է:
- Մանկավարժական խորհուրդը չունի որոշիչ ձայն բազմաթիվ խնդիրների լուծման հարցում : Իր առաջ քաշած հարցերի լուծումների նկատմամբ պահանջատեր չէ:
- Մանկավարժական խորհրդի նիստերը երբեմն կրում են ձևական բնույթ,մանկավարժները հետաքրքրված չեն փոփոխությունների և նորամուծությունների կիրառմամբ:Չկա նախաձեռնողականություն:
- Հաճախ է դրսևորվում անտարբեր վերաբերմունք մանկավարժական խորհրդի նիստերի նկատմամբ, կարծիք է կազմվում դրանց անարդյունավետության վերաբերյալ:Պետք է բարձրացվի մանկավարժական խորհրդի դերն ու նշանակությունը:

- Հաճախ մեթոդմիավորումը թերանում է իր գործառույթների մեջ:Այնինչ շատ մեծ է մեթոդմիավորման դերը և նշանակությունը: Այն պետք է դառնա իսկական « Վերնատուն», որտեղ կքննարկվեն մանկավարժությանը և տվյալ առարկային առնչվող բազմապիսի մեթոդական ուսումնական հարցեր,կկազմակերպվեն ուսումնական ֆիլմերի համատեղ դիտումներ, դրանց շուրջ քննարկումներ, սովորածը կիրառվի դասապրոցեսի ժամանակ, կատարվեն վերլուծություններ, եզրահանգումներ:Մանկավարժը նույնպես կարիք ունի անընդհատ աճելու, քայլելու ժամանակի հետ համահունչ: Ոչ ոք չի խլում մանկավարժի գիտելիքնիրին ու փորձը, ուղղակի դրանց մատուցման և կիրառման ձևերն ու միջոցներն են փոխվել:Մեթոդմիավորումներում պետք է տիրի աշխատանքային մթնոլորտ, դասալսումները պետք է լինեն ոչ թե պարտականություն, այլ անհրաժեշտություն:Որևէ թերություն կամ թերացում չպետք է օգտագործվի որպես առիթ վարկաբեկելու տվյալ մանկավարժին, այլ փոխօգնության մթնոլորտում առաջարկվի լավագույն տարբերակը:Շատ եմ կարևորում սերունդների միջև կապը:Ավագ սերնդի մանկավարժները իրենց խորը, ակադեմիական գիտելիքները, տարիների ընթացքում ձեռք բերած փորձը և հմտությունները միախառնելով երիտասարդների՝ ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի իմացությանը , նախաձեռնողականությանը, ավելի լայն մտահորիզոնին,փոխադարձ լրացնում են միմյանց:Երբ դրա հետ զուգակցվում է ինքնակրթությունը, աճում են մասնագիտական որակները:Սովորիր սովորել կարողականությունը շատ կարևոր է ոչ միայն աշակերտների, այլև մանկավարժների համար:

- Չեն իրականացվում նորմատիվ փաստաթղթերի համատեղ ուսումնասիրում:
- Աշակերտական խորհրդի գործունեությունը պասիվ է,աշակերտները տեղեկացված չեն իրենց իրավունքերի և պարտականությունների մասին,չկան ակտիվ քննարկումներ , խնդրահարույց հարցերի վեր հանում և լուծման առաջարկներ:Այնինչ ուսումնական միջավայրի բարելավումը, ուսումնառության որակի բարձրացումը,առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը մոտիվացնում է վեր հանել տաղանդն ու ընդունակությունները, խթան հանդիսանում սովորել,կրթվել,զարգանալ, կայանալ:Հետևաբար ամենաշահագրգիռ կողմը հենց աշակերտն է և նրա նախաձեռնողական լինելը անհրաժեշտ է:
- Ծնողական խորհուրդը շատ հարցերում պասիվ է և ունի կրավորական կեցվածք: Ուսումնական աշխատանքների հետ կապված հարցերը քիչ են քնարկվում, իսկ դաստիարակչական հարցերի հետ կապված խնդիրները թողնվում է ուսուցիչների և կազմակերպչի ուսերին:
- Ծնողը երեխայի առաջին ուսուցիչն է և շատ հարցեր ծագում են ընտանիքում երեխայի նկատմամբ անուշադրության կամ անհարկի հովանավորչության պատճառով: Երեխան իրեն զգում է անպատիժ և ամենակարող:Հաճախ էլ հակառակ երևույթին ենք ականատես լինում.չափից դուրս խստությունը երեխային դարձնում է երկչոտ, անհամարձակ:
- Երեխային ճիշտ դաստիարակելու գործում կարևորվում է դպրոցում ծնողների համար կազմակերպել թեմատիկ սեմինարներ, մանկավարժական, հոգեբանական զրույցներ:

## 2.5 Հաստատության շենքային պայմանների նպատակային գործունեությունը, նկարագրված են ուժեղ կողմերը և թերությունները

Դպրոցի շենքը կառուցվել է 1975 թվականին : Բաղկացած է յոթ մասնաշենքերից, որոնք միանում են միջանցքներով:
Ունի սպորտդահլիճ, երկու ներքին բակ: Դպրոցը ունի ընդարձակ տարածք, մարզադաշտ, կաթսայատուն: Տարածքը պարսպապատված է և ունի դարպաս:
Երկու մասնաշենքերը նորոգվելեն 2014 թվականին: Փոխվել է տվյալ հատվածների տանիքը: Կոսմետիկ վերանորոգվել են այդ մասնաշենքերում գտնվող 13 դասասենյակները, տնօրենի, փոխտնօրենի, ուսումնական աշխատանքները համակարգողի կաբինետները, ուսուցչանոցը, համակարգչային կաբինետը, շախմատի կաբինետները, քիմիայի,ֆիզիկայի,կենսաբանության համատեղ գործող լաբորատորիան:
Փոխվել են պատուհանները , տեղադրվել եվրոպատուհաններ և եվրոդռներ, սալիկապատվել է միջանցքների հատակը, նորոգվել սանհանգույցները:
Գործում է ջրամատակարարումը և կոյուղին (վերջինս գտնվում է ոչ այնքան բարվոք վիճակում, հաճախ են պատահում վթարներ):
Դպրոցը ունի կաթսայատուն և ջեռուցման համակարգ: Վերանորոգված մասնաշենքերը միջնապատերով առանձնացվել են շինության մնացած հատվածներից՝ ջերմության ավելորդ կորստից խուսափելու համար:
Ունենք վերանորոգված ճաշարան և խոհանոց, որը կահավորված է համապատասխան սարքավորումներով՝ էլեկտրական վառարան, գազօջախ, սառնարան, ջրատաքացուցիչ և ապահովում է տարրական դասարանների աշակերտներին սնունդով ապահովելու հարցը:
Դպրոցում կա համակարգչային կաբինետ՝ համապատասխան գույքով և համակարգիչներ (տարբեր սերնդի),տպիչ սարք, պրոեկտոր, էլեկտրոնային գրատախտակ:Ցավոք, դրանց մեծ մասը չի գործում:
Աշակերտական սեղանները և աթոռները գտնվում են բավարար վիճակում, ունեն թարմացման կարիք:
Բարերարների կողմից և տարբեր ծրագրերով տրամադրվել են ուսուցչանոցի համար աթոռներ և պահարաններ, կահավորված է առաջին դասարանը:
Դպրոցի շենքի գործող,վերանորոգված հատվածը գտնվում է բավարար վիճակում, դասասենյակները լուսավոր են, մեծ մասամբ՝ արևկող,կահավորված են հիմնականում բարվոք վիճակում գտնվող գույքով:
Գործում է համակարգչային կաբինետը, շախմատի կաբինետը, քիմիայի, ֆիզիկայի,կենսաբանության համատեղ գործող լաբորատորիան:Վերջինիս համար անհրաժեշտ նյութերն ու միջոցները այժմ տրվում են առանձին ֆինանսավորմամբ:
Դպրոցի սպորտդահլիճը մեծ է ու լուսավոր, կոսմետիկ վերանորոգված, պատուհանները փոխվել են:
Դպրոցի ամբողջ մակերեսով կա նկուղ,որը օգտագործվում է որպես ապաստարան, բավականին ընդարձակ է, ունի վթարային մի քանի ելքեր:

Դպրոցը ունի ընդարձակ տարածք՝ հարմար հանգստի գոտի կազմակերպելու համար: Պարսպապատված է, ունի դարպաս:

Ունի երկու ներքին բակ, որտեղ աճում են մրգատու ծառեր, միրգը տրվում է ճաշարանին:

Դպրոցի հետնամասում առկա է մարզադաշտ:Ֆիզկուլտուրայի դասերը (ըստ եղանակային պայմանների) անցկացվում են մարզադաշտում:

ԱԻՆ-ի, շտապօգնության և այլ տեսակի տրանսպորտային միջոցների ելք ու մուտքի շարժման համար արգելքներ չկան:

Առկա են պահուստային ելքեր:

Հաստատության օգտագործվող մասնաշենքերում ամեն օր իրականացվում է ընթացիկ խոնավ մաքրում ,իսկ ամիսը մեկ անգամ կատրվում է հիմնական մաքրում:

## Առկա խնդիրներն են.

- Ունի մեծ հանդիսությունների դահլիճ, որը գտնվում է անմխիթար վիճակում, հիմնանորոգման և կահավորման կարիք ունի: Եղած գույքը փչացել է ոչ բարվոք պայմանների պատճառով:
- Գործող տարածքում գրադարանի, բուժկետի, արխիվի պահպանման համար տարածքներ չկան: Դրանք գտնվում են չվերանորոգված հատվածում, ունեն հիմնանորոգման և ջեռուցման կարիք:
- Դպրոցը չունի ռազմագիտության, հայրենագիտության կաբինետներ վերանորոգված մասնաշենքերում դասասենյակների սղության պատճառով:Դրանից տուժում է համապատասխան առարկաների դասավանդումը:
- Չունի արհեստանոց,որտեղ կարելի է վերանորոգել դպրոցի շարքից դուրս եկած գույքը և այն նորից օգտագործել:
- Հաստատությունում առկա լվացարաններում բացակայում է տաք ջուրը, կոյուղին հիմնանորոգման կարիք ունի,հաճախ են առաջանում խցանումներ՝ առաջացնելով տհաճ անհարմարություններ:
- Ճաշարանը չունի լվացարաններ, որտեղ երեխաները պետք է լվացվեն:Ճաշարանը չի ջեռուցվում:
- Բժշկի սենյակը չի ծառայում իր նպատակին ջեռուցման բացակայության պատճառով:
- Սպորտդահլիճը չի ջեռուցվում, հանդերձարանները գտնվում են անմխիթար վիճակում: Մարզագույքը կա՛մ բացակայում է,կա՛մ մաշվածության պատճառով չի ծառայում իր նպատակին:
- Ապաստարանը մաքրված և կահավորված չէ: Չկան նստարաններ, արտակարգ իրավիճակներում լուսավորման համար չունի գեներատոր: Արդի անվտանգային ռիսկեր պարունակող ժամանակներում անհրաժեշտ պայմանները ապահովված չեն:Ապաստարանը գտնվում է սանիտարական վատ վիճակում:
- Չկան հակահրդեհային կրակմարիչներ:
- Դպրոցի բակը ունի ասֆալտապատման կարիք:

- Դպրոցը չունի պահակակետ։
- Մուտքի մոտ և միջանցքներում անվտանգության նկատառումներով տեղակայված տեսախցիկներ չկան։
- ԿԱՊԿՈՒ աշակերտների համար թեքահարթակները բացակայում են։ Դպրոցի շենքում ևս բացակայում են հարմարությունները տեղաշարժման խնդիրներ ունեցող աշակերտների համար։
- Ծառերը անմշակ են, էտման և խնամքի կարիք ունեն։Տեղադրված չեն նստարաններ,տարածքը անբարեկարգ է, ստեղծված չեն պայմաններ հանգստի և բացօթյա դասեր կազմակերպելու համար։
- Մարզադաշտը գտնվում է անմխիթար վիճակում։
- Աշակերտների կրթության արդյունավետությունը մեծապես կախված է դասապրոցեսում ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործումից։Նորարարությունների համար որպես հենք հանդիսացող տեխնիկական միջոցները սակավաթիվ են,բարոյապես հնացած և անարդյունավետ։Դասասենյակները չունեն ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով ուսումնական գործընթացները կազմակերպելու պայմաններ և դասաժամերը հիմնականում անցնում են ավանդական մեթոդներով,առանց համակարգչի և նոր տեխնոլոգիաների օգտագործման։
- Համակարգչային կաբինետում համակարգիչների մեծ մասը չի աշխատում։
- Ինտերնետ հասանելիության տիրույթը չի ծածկում դպրոցի ողջ տարածքը։
- Գրադարանը չի ջեռուցվում, չունի տարբեր կրիչների վրա պարունակող գրքային ֆոնդ, առկա գեղարվեստական գրականությունը մաշված է և հին, չունի ընթերցասրահ, որտեղ աշակերտական և մանկավարժական համակազմը կարող են զբաղվել ինքնակրթությամբ։
- Չկա հայոց լեզվի և գրականության կաբինետ,օտար լեզուների կաբինետներ՝ համապատասխան դիդակտիկ նյութերով և մեթոդական ձեռնարկներով։Դասապրոցեսներն անցնում են ինքնաշեն պաստառների ցուցադրմամբ։

## 3. Նպատակների և խնդիրների սահմանումը

ՈՒսումնական հաստատության գործունեության գերակա նպատակը այն է, որ կրթօջախից դուրս գա շրջանավարտ, որը առաջին հերթին ունակ լինի արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները, ընդունի և հարգի մշակույթային բազմազանությունը, ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը և օրենքի առջև բոլորի հավասարությունը։ Անկանխակալ վերաբերմունք ունենա

դիմացինի  նկատմամբ՝ անկախ սոցիալական և ազգային պատկանելիությունից, պատասխանատվություն կրի  իր արարքների և գործողությունների համար: Ունենա ինքնակրթվելու ցանկություն և հմտություններ, վերլուծական և քննադատական մտածողություն, համագործակցային, լեզվական հմտություններ, ինքնաճանաչողական և ինքնաքննադատական ընկալում, մտքի ճկունություն՝ բարդ իրավիճակներում օպտիմալ որոշումներ կայացնելու և կիրառելու գործընթացում: Ունենա հարուստ ներաշխարհ, կայուն բարոյական արժեքներ,  հոգևոր հարստություն,բարեկիրթ պահվածք:

**Երկարաժամկետ նպատակների իրագործման  տիրույթը նախատեսում է նպատակների իրագործման  հնգամյա ժամկետ և համապատասխանում է մեր տեսլականին:**
**Միջնաժամկետ նպատակները ենթադրում են աշխատանքներ,որոնք կիրականացվեն մեկ  ուսումնական տարում, ներառվում են տարեկան աշխատանքային պլաններում:**
**Կարճաժամկետ  նպատակները  աշխատանքներ են , որոնք պետք իրականացվեն  կարճ ժամանակահատվածում (ուսումնական կիսամյակ, շաբաթ, օր) և շարունակաբար:**

**ՌՒսումնական հաստատության գործնեության  նպատակներն են.**

- Դպրոցի գործունեության համապատասխանեցումը կրթության զարգացման պետական ծրագրի չափանիշներին:
- Յուրաքանչյուր երեխայի կրթական գործընթացին առավելագույնս մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:
- Մանկավարժական համակազմի՝ կրթության ոլորտում ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու կարողունակությունների կատարելագործումը և համապատասխանեցումն է:
- Փոփոխվող և զարգացող կրթական կարիքների բավարումն ապահովող կրթական միջավայրի  բարեփոխումն է:
- Նորագույն կրթական տեխնոլոգիաների և նրանց կիրառումն ապահովող նյութատեխնիկական բազայի ապահովումն է:
- Կրթական գործընթացի  կազմակերպումը ՏՀՏ կարողությունների  և այլ նորարարությունների ներդրման շնորհիվ:
- Արտադասարանական, արտադպրոցական որակյալ կրթության կազմակերպումն և աջակցումն է:
- Դպրոցի կառավարման,վարչարարության, գործավարության ժամանակակից ձևաչափերի կիռառումն է:

**Որպես վերջնարդյունք.**

- Աշակերտի մտավոր, ֆիզիկական, հոգևոր և սոցիալական զարգացումը, մարդկային որակների պահպանումն է:
- Իր ընդունակություններին, կարողություններին, առողջությանն համապատասխան հասարակության մեջ կայացումը և ինտեգրվումը:
- Մասնագիտական կողմնորոշման, աշխատանքային գործունեության պատրաստվածությունը:
- Անհատի և քաղաքացու ձևավորումը:

**Այդ նպատակների իրագործման ճանապարհին եղած խնդիրների իրականացումը մեր միջնաժամկետ նպատակների տիրույթում է:**

խնդիրներ

- Յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքի գնահատում և բավարարում:
- Ըստ չափորոշիչի սովորողին ներկայացվող պահանջների իրագործման ուղղությամբ գործողություններ:
- Մանկավարժական համակազմի կարիքի գնահատում և բավարարում:
- Համապատասխան կրթական միջավայրի ապահովում:
- Ուսուցման ,կառավարման, վարչական ոլորտում նորարարությունների կիրառում:
- Դպրոցի աշխատանքներում կառավարման,խորհրդակցական մարմինների,շահառու խմբերի , մանկավարժական և վարչական համակազմի համագործակցություն:
- Ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխում, ծախսերի վերահսկում և թափանցիկություն:
- Ներքին կանոնակարգի, նորմատիվ,ներքին իրավական ակտերի վարման , կիրառման թափանցիկություն:
- Ներդպրոցական արդյունավետ,շարունակական վերահսկողություն:
- Սրանց բավարարմանն ուղղված գործողություններն էլ մեր կարճաժամկետ նպատակներն են:

Դպրոցը յուրաքանչյուր երեխայի համար է, անկախ նրանից օժտված է երեխան, սովորական է, թե ներառված: Նա իրեն պետք է զգա ապահով, պաշտպանված, բռնությունից զերծ և ստեղծված բարենպաստ միջավայրը կնպաստի յուրաքանչյուրի կայացմանը և զարգացմանը:Դպրոցում ուսուցման ու ուցումնառության գործընթացը նպատակաուղղված է հավասարապես հասանելի ներառական կրթության ապահովմանը:

**Դպրոցի գործունեության ընթացքում կրթական կարիքների բավարարման համար ուսումնադաստիարակչական միջոցառումներն են.**

- Կրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան ուսուցման կազմակերպում և վերահսկողություն:
- Աշակերտի արժևորում և գնահատում:

- Դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,խնդիրների բացահայտում, լուծում, կանխարգելում:
- Դաստիարակչական աշխատանքների արդյունավետ և անընդմեջ իրականացում:
- Աշակերտների մտավոր,գեղագիտական,հոգևոր, սոցիալական պահանջմունքների բավարարում:
- Սովորողների առավելագույն մասնակցություն ուսումնադաստիարակչական գործընթացին:
- Ներառական, մասնակցային միջավայրի ապահովում:

**Ուսումնական հաստատության գործնեության ընթացքում կրթական կարիքների բավարարման համար իրականացվող վարչատնտեսական աշխատանքներն են.**

- Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավում
- Կրթական միջավայրի բարելավում
- Կրթական տեխնոլոգիանների շարունակական արդիականացում
- Սննդի կազմակերպում
- Արտադասարանական խմբակների և դասընթացների ծավալների ընդլայնում
- Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն
- Համապատասխան նորմատիվ ակտերի հաստատում և կիրառում:

- **Կառավարում**
- **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ**
- **Վարչատնտեսական գործունեություն**

Սրանք այն ուղղություններն են, որոնք համակողմանիորեն և ամբողջական ներկայացնում են կրթական կարիքները՝ ուսումնական հաստատության գործնեությունը սահմանելիս:

Ուսումնական հաստատության կառավարումը պետք է ճիշտ կազմակերպվի, վերահսկվի, ուսւոմնական գործառույթը՝ մշտադիտարկվի: Դպրոցի տնօրենը, նրա տեղակալը, կրթական աջակցությունների և դաստիրակչական աշխատանքների համակարգողը իրենց աշխատանքներն ուղղում են կրթական կարիքների վեր հանման, օպտիմալ լուծումներ գտնելուն և դրա իրականացման համար հետևողական վերահսկողություն տանելու մեջ: Ուսումնադաստիարակչական աշխատանքները տարվում են կառավարման խորհրդի, մանկավարժական, աշակերտական և ծնողական համակազմերի ակտիվ փոխազդեցության պայմաններում:

Յուրաքանչյուրը պետք է լինի իր պարտականությունների կատարման պատասխանատուն, ստեղծվի համագործակցային մթնոլորտ:

Վարչատնտեսական գործառույթն էլ ուղղվում է ուսումնական հաստատության գործնեության ապահովման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի, բարեկարգ և անվտանգ պայմանների, սանիտարահիգենիկ բարվոք վիճակի ապահովման, երեխաների առողջ ապրելակերպի և ֆիզիկական առողջության պահպանման համար անրաժեշտ պայմանների ստեղծմանը:

**Ուսումնական հաստատության գործունեությունը ենթադրում է.**

- Ուսումնական միջավայրի ստեղծում և բարելավում ( ֆիզիկական միջավայր, նյութատեխնիկական բազա):
- Կրթական գործընթացի կազմակերպում և բովանդակայիան վերազինում:
- Մանկավարժական համակազմի որակական բարելավում:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգում:

Յանկացած ուսումնական հաստատության արդյունավետ գործնեություն ենթադրում է ֆինանսական ներդրումներ, մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, հմուտ կառավարում,համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն,ձևավորված կրթական բարենպաստ միջավայր:

**Կարևորվում է ուսումնական գործընթացի նկատմամբ ճիշտ վերահսկողության կազմակերպումը.**

- Ներքին կանոնակարգի պահպանում և ներդպրոցական վերահսկողություն:
- Մանկավարժական համակազմի աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն:
- Աշակերտի կողմից գիտելիքի յուրացման գործընթացի կազմակերպում և վերահսկողություն:
- Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորում և վերահսկողություն:
- Նախատեսված բոլոր ծրագրերի իրագործման վերահսկում:

Ուսումնառության որակի բարձրացման համար ցանկացած առաջընթացի հիմքը մարդկային ռեսուրսներն են գումարած նյութատեխնիկական բազան,արդի ժամանակակից սարքավորումները և տեխնոլոգիաները գումարած բարենպաստ և տրամադրող միջավայրը, որը կտրամադրի արժանավայել միջավայրում կազմակերպել ուսումնական գործընթացը:

Շատ կարևոր է վարչատնտեսական և մանկավարժական համակազմում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովումը, ընդհանուր շահի գիտակցումը, ընդհանուր նպատակի համար համատեղ գործունեությունը (անկախ կառավարման որ օղակում ենք գտնվում), գիտակցված և անձնուրաց աշխատանքը, փոխօգնության պատրաստակամությունը:

Խիստ կարևոր է մանկավարժական թիմի գիտակցումը, որ ժամանակակից մարտահրավերները լուծելու համար անընդհատ պետք է հարստացնել տեսական գիտելիքների պաշարը, հմտանալ նրա տեղին գործածության մեջ, զարգանալ, ինքնակրթվել, կատարելագործել նոր տեխնոլոգիաների տիրապետման կարողունակությունը: Ընթացիկ վերապատրաստումները, սեմինարները, դասընթացները առաջ են մղում մեզ, նպաստում կրթության որակի բարելավմանը: Կարևոր չէ, տնօրեն ես, թե շարքային մանկավարժ, բոլորը պետք է աշխատեն այն գիտակցումով, որ միջակությունը չարիք է և անպատվաբեր է: Լավ ուսուցիչը չի կարող ունենալ վատ աշակերտ: Մեր անձնական, մարդկային և մասնագիտական որակները օրինակ են մեր աշակերտների համար:

Համաձայն ՀՀ կառավարության 2023թ N 216-Ն որոշման՝ տնօրենի աշխատանքային գործունեության գործառույթները ուղղված են հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքերի համակարգմանը և մեթոդական ղեկավարմանը: Հետևաբար տնօրենի գործառույթները հիմնականում մասնագիտական են և վերջինս համարվում է մանկավարժական աշխատող: Դպրոցի վարչատնտեսական հարցերի լուծումը այժմ դրվում է համակարգողի վրա: Տնօրենի գլխավոր գործառույթն է կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքը,վերահսկել ուսումնական գործընթացը, ուսման որակը, մանկավարժներին ներկայացնել խրախուսման:

**Համաձայն հանրակրթական նոր չափորոշիչների ուսումնական բնագավառներն են**

1.Հայոց լեզու և գրականություն
2. Հայրենագիտություն
3. Օտար լեզուներ
4. ԲՏՃՄ
5. Արհեստ և արվեստ
6. Հասարակություն և հասարակական գիտություններ
7. Ֆիզիկական կրթույուն և անվտանգ կենսագործունեություն

Հատուկ ուշադրություն է դարձվում բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի դասավանդման և այդ առարկաների կրթության որակը բարելավելուն: Բնագիտական առարկաների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նյութատեխնիկական համապատասխան բազա: Դրա ձեռքբերումը և ներդրումը խնդիր է, որի լուծումը առաջնահերթություն է:Դպրոցում ստեղծվում են նոր լաբորոտորիաներ, աշխատանքները ընթացքի մեջ են:

Արդի մարտահրավերների պայմաններում երկրի զարգացման գործում շատ կարևոր այս բնագավառը պետք է կարևորվի: Դեռևս դպրոցից երեխային պետք է օգնել մասնագիտական կողմնորոշման հարցում, իր նախասիրություններին և հակումներին համապատասխան կրթվելու, զարգանալու: Պետք է ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր և ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ, որ երեխան մոտիվացվի աշխատելու, ստեղծելու, պրպտելու,խորանալու այդ ուղղության մեջ: Տնօրենի գլխավոր գործառույթն է կազմակերպել, օժանդակել, վերահսկել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները: Այս բնագավառի մանկավարժ մասնագետները ստանում են նաև հավելավճար: Սա ևս խթան է և սրա հետ միասին անհրաժեշտ է բարոյապես խրախուսել մանկավարժներին, ի ցույց դնել նրանց աշխատանքը: Հետևողականորեն հետամուտ լինել նրանց մասնագիտական որակավորման բարձրացմանը, մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման համար կազմակերպել կամ ապահովել նրանց մասնակցությունը տարաբնույթ սեմինարների, վեբինարների, վերապատրաստումների: Մանկավարժը պետք է զգա, որ տնօրինությունը հետամուտ է աջակցել իրեն ցանկացած խնդրի լուծման ժամանակ:

«Հայոց լեզու և գրականություն» ուսումնական բնագավառը շատ կարևոր է հայ երեխայի հայեցի,ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակվելուն, սեփական մշակույթը, լեզուն և գրականությունը գնահատելու գործում:
Գրագետ և գրական հայերենով խոսելու աշակերտի կարողությունը զարգանում է ոչ միայն դասապրոցեսի ընթացում, այլև տարատեսակ գրական, գեղարվեստական, ճանաչողական միջոցառումների, հանդեսների շնորհիվ: Կապը մշակութային օջախների, գրադարանների, թանգարանների հետ պետք է ամրապնդել: Աշակերտը պետք է ունենա գրադարանից օգտվելու մշակույթ և այդ գործում դպրոցի գրադարանի բարեկարգումը, գրքային ֆոնդի թարմացումը, համակարգչի, պրոեկտորի, տարբեր էլեկտրոնային նպատակային կրիչների առկայությունը հաստատ կնպաստի աշակերտի մեջ հետաքրքրության արթնացման և ցանկությանը՝ հաճախ օգտվելու գրադարանից, տանն էլ՝ տարբեր մշակութային և ճանաչողական կայքերից, սրանով նաև աշակերտին կտրելով ազատ ժամանակը ոչ ուսանելի ժամանցային խաղերի և զբաղմունքների վրա զուր վատնումից: Այս նպատակի իրականացման համար գլխավոր խոչնդոտը գրադարանի չջեռուցվող և չվերանորոգված տարածքն է, նյութատեխնիկական բազայի բացակայությունը : Հարցի լուծման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ:

Օտար լեզուների որակյալ ուսուցումը ոչ միայն կարևոր, այլև պարտադիր պայման է արդի ժամանակաշրջանում: Քանի որ դպրոցը չունի ոչ միայն օտար լեզուների կաբինետ, այլև համապատասխան նյութատեխնիկական բազա, անհրաժեշտ է լուծում տալ այս հարցին: Դպրոցի չվերանորոգված հատվածում հարմարեցնել դասասենյակ, հնարավորության սահմաններում կատարելով վերանորոգում, ստեղծել կաբինետ, ձեռք բերել համապատասխան գույք և սարքավորումներ:

«Հայրենագիտություն» բնագավառի ուսուցանումը շատ կարևոր է երեխաների՝ իրենց ինքնությունը ճանաչելու, իր ժողովրդի պատմությանը, ազգային և հոգևոր արժեքներին հաղորդակից լինելու գործում: Անհրաժեշտ է ստեղծել երկրագիտական թանգարան, որտեղ կհավաքվեն և

կցուցադրվեն Վերին Գետաշենի պատմությանը, կենցաղին և ազգային կոլորիտին բնորոշ իրեր: Աշակերտները իրենք կհայթայթեն համապատասխան ցուցանմուշները, կստեղծեն իրենց տոհմածառերը պատկերող ցուցապաստառներ և իրենց ջանքերով կահավորած թանգարանում կանցկացնեն պատմության դասերը: Նորից անհրաժեշտ է վերանորոգված դասասենյակ: Այդ աշխատանքները կարելի է կատարել դպրոցի խնայված միջոցների հաշվին:

«Արվեստ և արհեստ» բնագավառը հիմնաքարն է երեխաների գեղագիտական դաստիարակության, ճաշակի ձևավորման գործում: Կերպարվեստի, տեխնոլոգիայի դասաժամերը հրաշալի հնարավորություն են տալիս ոչ միայն կրթվել և զարգանալ, այլև դրա ընթացքում, գործնական պարապմունքների ժամանակ ստեղծված աշխատանքներով ձևավորել միջանցքները,իսկ դասարանում՝ թեմատիկ անկյունները: Իրենց ձեռքի աշխատանքներով ձևավորված միջանցքները հաճելի և հարազատ միջավայր կստեղծեն աշակերտների համար: Աշխատանքների համար անհրաժեշտ նյութերը և միջոցները ձեռք կբերվեն դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին:

Դպրոցը պետք է ունենա արհեստանոց՝ համապատասխան արհեստագործական գործիքներով, որտեղ հենց աշակերտների ջանքերով կվերանորոգվեն ջարդված սեղաններն ու աթոռները, շարքից դուրս եկած գույքը, և նորից կօգտագործվեն դպրոցի կարիքների համար: Նոր գույքի համար պահանջվող ֆինանսական միջոցները կխնայվեն և կծառայեն այլ կարիքների: Սա նաև աշակերտների մոտ կձևավորի այն համոզմունքը, որ դպրոցի գույքի նկատմամբ պետք է լինեն ուշադիր և հոգատար:

Ֆիզիկական դաստիարակություն և անվտանգություն՝ բնագավառը շատ կարևոր է երեխաների ֆիզիկական և հոգևոր դաստիարակության համար: Ֆիզկուլտուրայի, առողջ ապրելակերպի դասաժամերը նպաստում են երեխաների գիտակից մոտեցմանը իրենց ֆիզիկական առողջության և ճիշտ ապրելակերպին: Դրա համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան պայմաններ՝ ջեռուցել մարզադահլիճը, բարեկարգել մարզադաշտի խոտածածկույթը, ձեռք բերել դարպասաձողեր, դարպասների համար ցանցեր և մարզվելու և կռփվելու համար անհրաժեշտ գույք:

ՆԶՊ-ի դասաժամերը արդյունավետ և բովանդակալից անցկացնելու համար անհրաժեշտ է կաբինետ, որի համար կա տարածք, ուղղակի անհրաժեշտ է կոսմետիկ վերանորոգում և կահավորում: Կահավորման համար անհրաժեշտ նյութերի մի մասը կա, մյուս մասն էլ ձեռք կբերվի դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին:

Դպրոցի երկու ներքին բակերը կբարեկարգվեն աշակերտների և ծնողների ջանքերով, ձեռք կբերվեն նստարաններ, տարածքում կստեղծվեն ծաղկանոցներ, կետվեն եղած ծառերը կամ կփոխարինվեն մատղաշ տնկիներով: Հրաշալի միջավայր կստեղծվի հանգստի և բացօթյա կազմակերպվող դասաժամերի համար: Ֆինանսավորումը կկատարվի դպրոցի ֆինանսական միջոցների հաշվին:

Շատ կարևոր է դպրոցում աշակերտների անվտանգությունը ապահովելը:Այդ նպատակով մուտքի մոտ կտեղադրվի պահակակետ և դպրոցի տարածքը կհսկվի տեսախցիկներով:

Խիստ անհրաժեշտ է հակահրդեհային կանոնների պահպանումը:

Դպրոցի ապաստարանը կվերանորոգվի և կկահավորվի: Անհրաժեշտ է նաև էլեկտրական գեներատոր:

# 4. Սահմանված նպատակների և խնդիրների  իրականացումն ապահովող գործողությունները, միջոցները և ժամանակացույցը

4.1 Սահմանված նպատակների և խնդիրների  իրականացումը ապահովող գործողությունները ու միջոցառումները
4.2 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների ժամանակացույցը
4.3 Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող միջոցներ
4.4 Սահմանված նպատակների և խնդիրների  իրականացումը ապահովող գործողությունները ու միջոցառումների արդյունքների չափման մեխանիզմները
4.5 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը
4.6 Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերի կանխման գործողություններ:

**Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր, նյութատեխնիկական բազա) ստեղծում (կարիքների ներկայացում  լիազոր մարմին և համակարգողի հետ խնդիրների համաձայնեցում):**

## Նպատակ 1

### Դպրոցի շենքային պայմանների բարելավում

**Խնդիր 1.** Առարկայական թեմատիկ սենյակների , լաբորատորիաների համար տարածքների վերանորոգում և կահավորում:
**Խնդիր 2.** Եղած գործող տարածքների բարեկարգում, ջեռուցման ապահովում,շենքային պայմանների առավելագույնս արդյունավետ օգտագործում:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություն ներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Դպրոցի չօգտագործվող մասնաշենքային տարածքի որոշ հատվածների հիմնանորոգում՝ Առարկայական թեմատիկ սենյակների և արհեստանոցի համար համապատասխան սենյակներ ապահովելու նպատակով, ջեռուցման ապահովում: | 2024-2029թթ. | Պետբյուջեից հատկացումներ, դպրոցի ֆինանսական միջոցներ , բարերարների կողմից նվիրատվություն ներ, Դրամաշնորհիններ : Համապատասխան մարդկային ռեսուրսներ, աշխատանքի միջոցներ: | Կարիքը գնահատված է, լիազոր մարմնին տեղեկացվածությունն ապահովված է, բարերարների ներգրավվման նպատակով աշխատանքները կատարված են ,դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունն ապահովված է: Համապատասխան աշխատանքները կատարված են,հիմնամորոգումը կատարված է,ջեռուցումը՝ապահովված: Արդյունքի գնահատման համար համեմատվում են կատարված աշխատանքների որակական և քանակական ծավալները սահմանված ցուցանիշների՝ նախանշված արդյունքների հետ : Որոշում ենք կատարված աշխատանքների ծավալը հաշվետվությունների և կատարողականների ցուցանիշների վերլուծության,մշտադիտարկման, ուսումնասիրությունների միջոցով,համեմատում ակնկալվող արդյունքի հետ և գնահատում համապատասխան գնահատման սանդղակով: Սանդղակ 48 | Կարիքի ոչ իրատեսական գնահատում, ֆինանսական միջոցների սղություն կամ բացակայություն, բարերարների մոտ մոտիվացիայի բացակայություն: | Կարիքի իրատեսական գնահատում և հիմնավորում, ֆինանսների ճիշտ պլանավորում, լիազոր մարմին աշխատանքների կարևորության ու անհրաժեշտության ներկայացում, բարերարների հետ աշխատանքներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Գրադարանի տարածքի վերանորոգում, ջեռուցման ապահովում : | 2024-2026թթ. | Ֆինանսավորում պետբյուջեից, դպրոցի ֆինանսական խնայողություններ, բարերարների նվիրատվություններ, կամավորների աջակցություն աշխատանքների կատարման գործընթացին: Համապատասխան մարդկային և աշխատանքային ռեսուրսներ: | Արդյունքի գնահատման նպատակով կարիքի գնահատում, լիազոր մարմնին տեղեկացվածության ապահովում, աշխատանքներ բարերարներ ներգրավվման գործում,դրամաշնորհային ծրագրերի մասնակցության ապահովում: Գրադարանը վերանորոգված է,ջեռուցումը `ապահովված: Արդյունքի գնահատում.կատարված աշխատանքների որակական և քանակական ծավալների՝ նախանշված արդյունքերի հետ համապատասխանվածության աստիճանի որոշում համապատասխան հաշվետվությունների և կատարողականների ցուցանիշների վերլուծության,մշտադիտարկման, ուսումնասիրությունների միջոցով, գնահատման սանդղակով: Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների բացակայություն , բարերարների կողմից մոտիվացիայի պակաս: | Կարիքի իրատեսական գնահատում և հիմնավորում,լիազոր մարմին աշխատանքների կատարության ու անհրաժեշտության ներկայացում, բարերարների հետ աշխատանքներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Դասասենյակների և միջանցքների ընթացիկ վերանորոգումներ : | 2024-2029թթ. Ըստ անհրաժեշտության | Պետբյուջեից հատկացումներ, դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություններ, համապատասխան շինանյութեր և հարդարման միջոցներ, կամավորների անհատույց աշխատանք: | Շինարարական և հարդարման աշխատանքների կատարված են :Համապատասխանությունն սահմանված նորմերին գնահատվում է ըստ կատարված աշխատանքների որակական և քանակական ցուցանիշների՝ համապատասխան կատարողականների հիման վրա,համապատասխան գնահատման սանդղակով: *Սանդղակ 1* | Ֆինանսական միջոցների սղություն կամ բացակայություն , բարերարների և կամավորների մոտ մոտիվացիայի պակաս: | Օրենքով չարգելված ֆինանսական աղբյուրների ներգրավում , բացատրական աշխատանքներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Սպորտային դահլիճի ջեռուցում, հանդերձարանների վերանորոգում, համապատասխան մարզագույքի ձեռք բերում: | 2024-2025թթ. | Պետբյուջե, դպրոցի ֆինանսական խնայողություններ , դրամաշնորհնե, կամավորմերի աջակցություն աշխատանքների կատարման գործընթացին:Համ ապատասխան մարդկային և աշխատանքային ռեսուրսներ: | Կարիքի գնահատում, լիազոր մարմնին տեղեկացվածության ապահովում, աշխատանքներ բարերարն երին ներգրավվման գործում,դրամաշնորհային ծրագրերի մասնակցության ապահովում: Դահլիճը ջեռուցվում է, մարզագույքը ձեռք է բերված: Արդյունքի գնահատում.կատարված աշխատանքների որակական և քանակական ծավալների՝ նախանշված արդյունքերի հետ համապատասխանության, նախանշված չափանիշներին համապատասխանվածության աստիճանով,համապատասխան հաշվետվությունների և կատարողականների ցուցանիշների վերլուծության,մշտադիտարկման, ուսումնասիրությունների միջոցով, համապատասխան գնահատման սանդղակով: Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների բացակայություն , բարերարների կողմից մոտիվացիայի պակաս: | Կարիքի իրատեսական գնահատում և հիմնավորում,լիազոր մարմին աշխատանքների կարևորության ու անհրաժեշտության ներկայացում, բարերարների հետ աշխատանքներ: Դպրոցի չօգտագործվող տարածքների վարձակալման վճարների ներգրավում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Սանհանգույցների, կոյուղագծերի ընթացիկ վերանորոգում : | 2024-2025թթ.ըստ անհրաժեշտության | Դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություն ներ, համապատասխ ան շինանյութեր և հարդարման միջոցներ, մարդկային ռեսուրսներ | Աշխատանքները կատարված են: Համապատասխան կատարողականների վերլուծություն, ուսումնասիրություն և կատարված աշխատանքների ՝ նախանշված խնդիրներին համապատասխանության որոշում: Գնահատում սանդղակով:Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների բացակայություն ,դֆ հկկ49+բարերարների մոտ մոտիվացիայի պակաս: | Օրենքով չարգելված ֆինանսական աղբյուրների ներգրավում , բացթողումային աշխատանքներ,: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Երկու ներքին բակերի բարեկարգում, վերածում հանգստի անկյունների: | 2024-2026թթ. | Դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություններ: Մանկավարժական և աշակերտական համակազմի աշխատանք:Համապատասխան աշխատանքային գործիքներ: | Բակերը մաքրված են , ծառերը՝ էտված, տարածքը վերածված է ծաղկանոցի, տեղադրված են նստարաններ:հանգստի համար պայմանները ապահոված են: Ըստ աշխատանքների կատարման կատարողականի՝կատարվում է գնահատում վերոհիշյալ սանդղակով:Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների բացակայություն , աշխատանքների կարևորության չգիտակցում: | Հրապուրիչ ուսումնական միջավայրի կարևորության գիտակցում աշակերտական և մանկավարժական համակազմի կողմից: |
| 7. | Դպրոցի շարքից դուրս եկած գույքի վերանորոգում և օգտագործում :Նոր գույքի ձեռքբերում,դասասենյակները ըստ պատշաճի կահավորում: | 2024-2029թթ. Ըստ անհրաժեշտության | Բյուջետային հատկացումներ դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, վերանորոգման համար ատաղձագործ, մանկավարժներ ի և աշակերտների կամավոր աշխատանք,համապատասխան աշխատանքային գործիքներ,նյութեր: | Դպրոցական գույքի բարվոք վիճակ, խնդիրների արագ վերացում: Կատարված աշխատանքների կատարման աստիճանի համեմատություն նախանշված չափանիշին:Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների սղություն,դպրոցական գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի պակաս: | Բացատրական աշխատանքներ, անձնական օրինակ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Դպրոցի տարածքի բարեկարգում, կանաչապատում, ծառատունկ: | 2024-2026թթ. | Դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, մանկավարժական, ծնողական և աշակերտական համակազմ,համապատասխան աշխատանքային գերծիքներ: | Դպրոցի տարածքը բարեկարգված է, կանաչապատ, ձեռք են բերված տնկիներ և կազմակերպված է ծառատունկ: Արդյունքները չափում ենք ըստ կատարված աշխատանքի ծավալի համապատասխան կատարողականի վերլուծության հիման վրա:Սանդղակ 1 | Մանկավարժական և աշակերտական համակազմի անտարբերություն,աշխատանքների կարևորության չգիտակցում | Մանկավարժական,աշակերտական համակզմի հետ բացատրական աշխատանք, անձնական օրինակ: Համայնքի և ծնողների աջակցություն: |
| 9. | Ճաշարանի տարածքի ջեռուցում , լվացարանների տեղադրում ,տաք ջրով ապահովում: | 2024-2025թթ | Ֆինանսավորում պետբյուջեից,կամ որպես այլընտրանք բարերարների ֆինանսական աջակցություն,տեխնիկական միջոցներ,խողովակներ,ջերմային մարտկոցներ, լվացարանակոնքեր,աշխատուժ | Ճաշարանի ջեռուցումը երեխաներին հնարավորություն կտա տաք և հաճելի պայմաններում սնվել:Ուտելուց առաջ լվացվել,պահել հիգիենան՝այսպիսի տարրական պայմանները դեռևս բացակայում են:Լվացարանների տեղադրումը , տաք ջրով ապահովումը կլուծի հարցը:Գնահատման մեխանիզմները | Ֆինանսավորման խնդիրներ,անհետևողականություն | Ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ,կատարվող աշխատանքի անհրաժեշտության գիտակցում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. | Ապաստարանի վերանորոգում և կահավորում, գեներատորի,կրակմարիչների ձեռք բերում: | 2024-2025թթ. | Պետբյուջեից հատկացումներ, դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություններ, համապատասխան շինանյութեր և հարդարման միջոցներ, գեներատորի , կրակմարիչների գնման գործընթաց: | Կարիքի գնահատում, լիազոր մարմնին տեղեկացվածության ապահովում, աշխատանքներ բարերարներ ներգրավվման գործում: Աշխատանքները կատարված են: Արդյունքի գնահատում՝կատարված աշխատանքների որակական և քանակական ծավալների՝ նախանշված արդյունքերի հետ համապատասխանության աստիճանով,համապատասխան հաշվետվությունների և կատարողականների ցուցանիշների վերլուծության,մշտադիտարկման, ուսումնասիրությունների միջոցով, համապատասխան գնահատման սանդղակով:Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների բացակայություն , բարերարների կողմից մոտիվացիայի պակաս: | Ներկա անվտանգային խնդիրների համատեքստում կարիքի անհրաժեշտության ներկայացում համապատասխան մարմիններ, բացատրական աշխատանքներ համայնքապետարանի մարմիններում |

## Նպատակ 2. Նյութատեխնիկական բազայի արդիականացում

**Խնդիր1** Ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռք բերում:

**Խնդիր2.**Նյութատեխնիկական բազայի նպատակային և արդյունավետ օգտագործում:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 1. | Տեսախցիկների ձեռքբերում և տեղադրում,անվտանգային միջավայրի ապահովում: | 2024-2025թթ. | Դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություններ, համապատասխան տեխնիկական միջոցներ: | Տեսախցիկները ձեռք են բերված համապատասխան քանակությամբ և տեղադրված են:<br>Աշխատանքները գնահատվում են ըստ կատարողականի ցուցանիշների,գնման ակտերի հետևյալ սանդղակով :<br>Սանդղակ 1<br>1Աշխատանքները չեն մեկնարկել կամ մեկնարկել են, բայց կատարված չեն:(1-3)անբավարար<br>2Աշխատանքները կատարված են մասամբ:(4-6)բավարար<br>3Աշխատանքները կատարված են,բայց կան որոշակի թերություններ:(7-8)զարգացնող<br>4Աշխատանքները կատարված են լիովին,համապատասխանում են նպատակադրմանը:(9-10)արդյունավետ | Ֆինանսական միջոցների բացակայություն : | Օրենքով չարգելված ֆինանսական աղբյուրների ներգրավում : Համապատասխան մարմինների կարիքի անհրաժեշտության ներկայացում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Էլեկտրոնային գրադարանի ստեղծում՝ համակարգիչ, պրոեկտոր, գրքային ֆոնդ պարունակող տեղեկատվությամբ տարբեր կրիչների ձեռքբերում : | 2024-2026թթ. | Պետբյուջեից հատկացումներ, դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություններ, համապատասխան սարքավորումներ: | Գրադարանը ապահովված է համապատասխան համակարգիչներով, պրոեկտորով, կրիչներով: Գնահատվում է ըստ աշխատանքի կատարման արդյունքների հետևյալ սանդղակով:Սանդղակ 1 | Ֆինանսական միջոցների բացակայություն , բարերարների կողմից մոտիվացիայի պակաս: | Օրենքով չարգելված ֆինանսական միջոցների ներգրավում, բացատրական աշխատանքներ |
| 3. | Ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ նոր սերնդի համակարգիչների, նորագույն տեխնոլոգիանների ձեռքբերում և դասապրոցեսում ժամանակակից տեցեկատվական տեխնոլոգիաների կիրառում, նոր չափորոշիչներին համապատասխան ուսումնական ձեռնարկների, դիտակտիկ նյութերի ձեռքբերում, | 2024-2026թթ. | Դպրոցի խնայված ֆինանսական միջոցներ, բարերարների նվիրատվություններ: համապատասխան սարքավորումներ, դիտակտիկ նյութեր, ձեռնարկներ: | Ապահովված է համապատասխան նյութատեխնիկական բազան՝ նոր չափորոշիչներին համապատասխան կրթության ապահովման համար: Այդ աշխատանքները գնահատվում են ըստ գնման ակտերի, ինչպես նաև հարկային հաշիվներով և հաշիվ վավերագրերով: Կատարված աշխատանքները գնահատվում են սանդղակով:Սանդղակ 2<br>1Գույքը ձեռք բերված չէ:(0-3) անբավարար<br>2Ձեռք է բերված որոշ քանակությամբ:(4-6)բավարար<br>3Հիմնականում ձեռք է բերված:(7-8)զարգացնող<br>4Լրիվությամբ ձեռք է բերված(9-10)արդյունավետ | Ֆինանսական միջոցների բացակայություն , աշխատանքների կարևորության չգիտակցում: | Օրենքով չարգելված ֆինանսական աղբյուրների ներգրավում : Համապատասխան մարմիններին կարիքի անհրաժեշտության ներկայացում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Դահլիճի վերանորոգում, համապատասխան գույքի և տեխնիկական միջոցների, երաժշտական գործիքների ձեռք բերում: | 2024-2026թթ | Համապատասխան Ֆինանսական միջոցներ պետբյուջեից, համապատասխաՆ գույք, տեխնիկական միջոցներ,երաժշտական գործիքներ | Վերանորոգված դահլիճը `համապատասխան գույքով և տեխնիկական միջոցներով,ոչ միայն կլուծի դպրոցի կարիքները,այլև կծառայի համայնքի բնակիչներին, :Այստեղ կկայանան նաև համայնքային միջոցառումներ,կիրագործվեն տարատեսակ ուսումնական և ժամանցային ծրագրեր:Դահլիճը կարելի է տալ վարձակալության տարաբնույթ խմբերի:Վարձակալական գումարները կծախսվեն դպրոցի կարիքների համար, միաժամանակ աշակերտները կներգրավվեն տարբեր ստեղծագործական խմբերում ,որն էլ իր հերթին կլուծի ազատ ժամանակը արդյունավետ տնօրինելու խնդիրը: | Ֆինանսական միջոցների բացակայություն նկամ սղություն: | Լիազոր մարմին կարիքի ներկայացում, հետևողականություն, աշխատանքի կարևորության ներկայացում: |
| 5. | լՖիզիկայի նոր լաբորատորիայի հիմնում և անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ձեռք բերում:Գործող քիմիայի և կենսաբանության լաբորատորիայում սարքավորումների և նյութերի թարմացում | 2024-2025թթ | Պետական ֆինանսավորմամբ լաբորատորիաների ստեղծման և վերազինման ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքներ, սարքավորումներ և նյութերի ծախսի համար տրվող ֆինանսավորում: | Ֆիզիկայի նոր լաբորատորիան գործում էև նպաստում ԲՏՃՄ առարկաների ուսուցման արդյունավետությանը և վերջին հաշվով տեխնիկական գիտությունների զարգացմանը, ապագայում նաև ԱՐՄԱԹ լաբորատորիայի հիմնադրման համար: Աշխատանքները | Ֆինանսական միջոցների սղություն, աշխատանքի կարևորության չգիտակցում: | Աշխատանքի կարևորության ներկայացում պատկան մարմիններում, հետևողականություն: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Դպրոցի ամբողջ տարածքում ինտերնետ հասանելիության ապահովում: | 2024թ | Ֆինանսավորում , համապատասխան սարքեր, լարաններ,ցանցի հասանելիություն ամբողջ տարածքում: | Ապահովված է ինտերնետային հասանելիությունը,դասապրոցեսին օգտագործվում են ուսումնական նյութեր և տեղեկատվություն օնլայն տարբերակով:Մատուցվող նյութը տրվում է ավելի ընկալելի և հետաքրքիր: | Անհրաժեշտությանչգիտակցում,անտարբերություն : | Արդի ժամանակաշրջանում դպրոցի ողջ տարածքում ինտերնետ հասանելիության անհրաժեշտության գիտակցում, հետևողականություն |
| 7. | Առարկայական թեմատիկ սենյակների Կահավորում և նորարարական տեխնոլոգիաներով համալրում: | 2024-2026էթթ | Ֆինանսավորման ապահովում ՝պետբյուջե,նվիրատվություններ, համապատասխան գույք և տեխնիկական միջոցներ՝համակարգիչներ,պրոյեկտոր,կրիչներ, դիդակտիկ նյութեր,ուսումնական նյութեր,գրենական պիտույքներ | Առարկայական թեմատիկ սենյակները ՝կահավորված և նորարարական տեխնոլոգիաներով համալրված, ծառայում են իրենց նպատակին՝դասապրոցեսը անցնում է արդյունավետ և ապահովված է տեսողական և լսողական ընկալում ապահովող ժամանակակից տեխնոլոգիաներով:Աշակերտները ազատ տիրապետում են ՏՀՏմիջոցներին և կարողանում են արագ և հեշտությամբ գտնել ուսումնական նյութը , կատարել հետազոտական աշխատանք: Հագեցած նյութատեխնիկական բազան գնահատվում է համապատասխան կատարողականներով և հաշվետվություններով: | Ֆինանսական և նյութական միջոցների բացակայություն կամ սղություն: | Օրենքով թույլատրվող ֆինանսական աղբյուրների ներգրավում:Համապատասխան պատկան մարմիններ աշխատանքների կարևորության ներկայացում: |

## Նպատակ 3

### Սովորողների ակադեմիական առաջընթացի ու կրթության որակի բարելավման ապահովում:

**Խնդիր 1**. Կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների առավելագույն կոորդինացում:

**Խնդիր 2.** Նոր չափորոշիչներին համապատասխան ուսուցման կազմակերպում և կիրառում:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Ծրագրի իրականացման ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մնացորդային գիտելիքների ստուգման և հայտորոշիչ աշխատանքների միջոցով սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու գնահատմանն ուղղված աշխատանքների համակարգում | 2024-2029թթ. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում | Ստուգողական աշխատանքներ, հայտորոշիչ թեստեր,ուսումն ական աշխատանքների ճիշտ կազմակերպում, առարկայական ծրագրեր ,թեմատիկ պլաններ, ուսումնական ձեռնարկներ | Աշխատանքները կատարվել են համակողմանի, բոլոր դասարաններում, կատարվել են դիտարկումներ, տրվել են ստուգողական գրավոր աշխատանքներ, ի մի են բերվել վիճակագրական տվյալների և ուսումնասիրությունների արդյունքները, ստացված ցուցանիշների օգնությամբ կատարվել է կարիքի գնահատում, իրավիճակի ուսումնասիրություն: Այդ աշխատանքները գնահատվում են համապատասխան սանդղակով;Սանդղակ 3 | Նախատեսվող աշխատանքների ուսուցիչների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում, թույլ վերահսկողություն : | Կատարված աշխատանքների մշտադիտարկում , վերահսկում, դասալսումներ, վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծում:Դասավանդման նոր մեթոդների հոտևողական ուսուցում,փորձի փոխանակում: |
| 2. | Ուսուցման գործընթացի, կրթական կարիքների բավարարմանն ուղղված գործողությունների վերջնարդյունքների ապահովում և դրան ուղղված մշտադիտարկումներ և վերահսկողություն | 2024-2029թթ. Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում | Էլեկտրոնային մատյանների մշտական ստուգում, տնօրինության կողմից կազմակերպվող գրավոր ամփոփիչ աշխատանքներ, դասալսումներ (տնօրենի, փոխտնօրենի, առարկայական մասնախմբի ղեկավարների, մանկավարժներ ի կողմից) | Դասալսման արձանագրությունների,համապատասխան ամփոփաթերթիկների միջոցով կատարված աշխատանքների ստուգում և գնահատում ըստ ստացված արդյունքների, ըստ առաջադիմության և որակի ցուցանիշների՝ համադրելով մշտադիտարկումների արդյունքները, ուսումնասիրությունները և վիճակագրական տվյալները : Դասալսումների արդյունքների վերլուծում.սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողության ազդեցությունն փաստարկված է,բերված են թվային հիմնավորումներ: :Գնահատումը համապատասխան սանդղակով:Սանդղակ 3 | Նախատեսված աշխատանքների ՝ուսուցրչների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում: Ոչ արդյունավետ աշխատանք, վերահսկողության բացակայություն: | Տնօրինության կողմից վերահսկողության ուժեղացում և պատասխանատվության բարձրացում : |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Բոլոր աշակերտների ուսումնառության մասնակցության ապահովում և վերահսկում: | 2024-2029թթ. Ամենօրյա | Հաճախումների մատյանի մշտական գրանցում և ուսումնասիրություն, մշտադիտարկում, դասղեկների, ԿԱԴԱՀ-ի կողմից: | Աշակերտները անհարկի չեն բացակայում, մասնակցում են բոլոր դասերին և արտադպրոցական պարապմունքներին, հետևում են ներքին կանոնակարգին: Հաճախումների մատյանի ուսումնասիրություններ,հաշվառման թերթիկների ,բժշկի կողմից տրված հիվանդությունը փաստող թերթիկների հաշվառում,մշտադիտարկումներ: Ըստ այս ցուցանիշների աստիճանի որոշվում է գնահատման չափանիշը: Սանդղակ 3 | Վերահսկողության բացակայումթյուն, աշակերտների անպատասխանատվություն: | Ծնողների տեղեկացվածության աստիճանի բարձրացում, դասղեկների կողմից համապատասխան դաստիարակչական աշխատանքներ: |
| 4. | Կրթական կարիքների բավարարման նպատակով համապատասխան միջոցառումների իրականացում: Նոր ՀՊՉ-ին համապատասխան ուսուցման կազմակերպում և վերահսկում:<br>Նոր չափորոշիչների կիրառում՝ որպես վերջնարդյունք ունենալով կարողունակությունների ձեռք բերում,կայուն արժեհամակարգ և դիրքորոշում : | 2024-2029 7թթ. Անընդմեջ | Մշտադիտարկում, դասալսումներ, բաց դասերի կազմակերպում, համապատասխան առարկայական մասնախմբերի ղեկավարների, տնօրենի ,տեղակալի կողմից պարբերական ստուգումներ: | Դասալսումների, բաց դասերի քննարկումների, մշտադիտարկումների հիման վրա ուսումնասիրություններ, թերությունների շտկում:Գնահատման նոր մեխանիզմների կիրառման ապահովում: Աշխատանքների կատարման արդյունքները ներկայացնող համապատասխան հաշվետվությունների հիման վրա գնահատում համապատասխան չափորոշիչներով, պարզ և բարդ ցուցանիշների համադրման հիման վրա կատարված աշխատանքների գնահատում:Սանդղակ 3 | Համապատասխան աշխատանքերի կատարման ընթացքում թերացումներ , աշատանքներում ներգրավված լինելու նպատակով վերապահ մոտեցում : | Կատարվող աշխատանքների կարևորությանն հիմնավորմանն ուղղված բացատրական աշխատանքներ, մեթոդական օգնություն ,վերահսկողություն: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Օլիմպիադաններին և մրցույթներին աշակերտների բավարար մասնակցության ապահովվում | 2024-2029թթ.յուրաքանչյուր տարվա առաջին կիսամյակի | Հայտերի ժամանակին ներկայացում, համակարգում,աշակերտների խրախուսում,մոտիվացիա | Օլիմպիադաներում և մրցույթներում ակտիվ մասնակցություն, բարձր տեղերի ապահովում: Օլիմպիադաների ներդպրոցական, մարզային փուլերի արդյունքների քննարկում,վերլուծություններ: Կատարված աշխատանքի գնահատում համապատասխան ցուցանիշների վերլության արդյունքում:Սանդղակ 3 | Ուսուցիչների և աշակերտների պասիվ վերաբերմունք : | Մոտիվացիայի ճիշտ կազմակերպում, աշակերտներին լրացուցիչ օգնություն ուսումնական ձեռնարկներով: |
| 6. | Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով միջոցառումների, հանդիպումների, զրույց-քննարկումների կազմակերպում աշակերտների նախասիրությունների, առանձնահատկություններ ի,հետաքրքրությունների շուրջ: | 2024-2029թթ. Շարունակական | Տարբեր ԲՈՒՀ-երի ,միջին մասնագիտական հաստատություններ ի ներկայացուցիչների հետ համագործակցություն | Հանդիպումների արդյունավետություն, հանդիպումների հաճախակիություն,աշակերտների կողմից ակտիվ մասնակցություն : Կատարված աշխատանքների քանակը, հանդիպումների արդյունավետությունը չափիչ մեխանիզմներ են:Գնահատվում է համապատասխան հաշվետվությունների հիման վրա:Սանդղակ 3<br>1Գործողություններ չեն կատարվել կամ որևէ ազդեցություն չեն ունեցել;(1-3)անբավարար<br>2Սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողությունն ունեցել է որոշ ազդեցություն:(4-6)բավարար<br>3Գործողությունն իրապես է ազդել սովորողների կրթության և առաջադիմության վրա:(7-8)զարգացնող<br>4Սովորողների կրթության որակի և առաջադիմության վրա գործողության ազդեցությունն փաստարկված է,բերված են թվային հիմնավորումներ:(9-10)արդյունավետ | Աշակերտների պասիվ վերաբերմունք: Համապատասխան աշխատանքների պլանավորման բացակայություն: | Համապատասխան մոտիվացիոն միջավայրի ապահովում, հանդիպումների կազմակերպման պլանավորում, ժամկետների համաձայնեցում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | ԿԱՊԿՈՒ սովորողներին ԱՈՒՊ-ով ուսուցման կազմակերպում,ԿԱՊԿՈՒ-սովորողների դիտարկում, դպրոցական մակարդակի գնահատում, համագործակցություն տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության հետ: | 2024-2029թթ.շարունակական | Վերապատրաստ ումներ, ԱՈՒՊ-ի մշակում, կիրառում, մանկավարժահո գեբանական կենտրոնի ծառայության օգնություն, | Աշխատանքների համապատասխանությունը ԱՈՒՊ-ին,աշակերտի ուսման և դաստիարակության գործընթացում առաջընթացի ապահովում:Աշակերտի ինտեգրում միջավայրին, համապատասխան պայմանների ապահովում,ներառում ուսումնական գործընթացին: Համապատասխան կատարողականների ,հաշվետվությունների, արձանագրությունների վերլուծություն հիման վրա գնահատում: Սանդղակ 3 | Աշխատանքի ընթացքում բարդություններ, աշխատանքների ոչ բավարար իմացություն | Մանկավարժահոգեբանակա աջակցության տարածքային կենտրոնի մասնագետների կողմից:Հետևողականություն:Աշխատանքների կարևորության գիտակցում: |
| 8. | Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման ապահովում.դասապրոցեսի վարման ժամանակ նոր տեխնոլոգիաների, ինտերակտիվ մեթոդների և խմբային աշխատանքներ ընդգրկող բազմատեսակ նոր մեթոդների կիրառման ապահովվում, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում անկաշկանդ և համագործակցային մթնոլորտի ապահովվում: Կատարվող աշխատանքների շարունակական մշտադիտարկում: | 2024-2027թթ., Ուսումնական տարիների | ՈՒսուցման նոր մեթոդների կիրառում,ՀՊՉպ ահանջների կիրառում,առար կայական մասնախմբի օժանդակություն, կրթական նորագույն տեխնոլոգիաներ | Դասավանդման գործընթացն արդյունավետ է կազմակերպված , հաշվի են առնված ՀՊՉ-ի բոլոր պահանջները,դասի վարման ձևը նորարարական է, դրված են հստակ նպատակներ, վերջնարդյունքներն ապահովված են:Տիրում է համագործակցային մթնոլորտ: Վերլուծվում և գնահատվում է աշխատանքի արդյունքի համապատասխանությունը նպատակադրմանը: Ակնկալվող արդյունքները գնահատվում են ըստ կատարման աստիճանի ՝դասալսումների արձանագրությունների, դասի գնահատման թերթիկների,ամփոփաթերթիկների հիման վրա,համապատասխան ձևաչափով:Գնահատումը սանդղակ 3 | Աշխատանքի կատարման համար ոչ բավարար գիտելիքներ և հմտություններ ; | Ինքնակրթություն, ինքնակատարելագործում, վերապատրաստումների մասնակցություն, մասնակցային գործընթացի իրականացում, ուսուցիչ աշակերտ փոխհարաբերություններում անկաշկանդ և համագործակցային մթնոլորտի ածահովում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Կատարված աշխատանքներում թիմային մոտեցում , հաշվետվողականություն և թափանցիկության ապահովվում, գնահատման նոր համակարգի կիրառում | 2024-2027թթ. | Մանկավարժական համակազմ,գնահատման նոր համակարգի լուսաբանում,կրթական գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն | Սովորողների ուսումնառության արդյունքների վերլուծություն ,հաշվետվությունների լուսաբանում,գնահատման նոր համակարգի ,նորմատիվների միջոցով սովորողների դժվարությունների բացահայտում : Գնահատումը ՝ ըստ կատարված աշխատանքների արդյունավետության և կատարման աստիճանի:Սանդղակ3 | Աշխատանքի կատարման համար ոչ բավականին հմտություններ;Թիմային աշխատանքներում փորձի պակաս: | Ինքնակրթություն, վերապատրաստումներ, առաջավոր փորձի փոխանակում: |
| 10. | Նախագծային աշխատանքների կազմակերպում և գնահատում ,աշակերտների ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական ունակությունների զարգացում: | 2024-2027թթ. Ուսումնական տարիների ընթացքում | Համապատասխան ուսումնական նյութեր ,ՏՀՏ միջոցներ, մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում,համագործակցային աշխատանք: | Նախագծային աշխատանքների կազմակերպումը անցկացվում է ըստ ժամանակացույցի,աշակերտները աշխատանքներին մոտենում են ստեղծագործաբար, արդյունքները բավարար են,միջառարկայական կապերը ապահովված են,իրականացնում են ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական գործնեություն: Գնահատվում էհաշվետվություններով և միավորային գնահատումով՝հաշվի առնելով կատարված աշխատանքների համապատասխանությունը նախանշված չափանիշներին:Սանդղակ 3 | Աշխատանքի կատարման համար ոչ բավարար հմտություններ և կարողունակություններ: | Ինքնակրթություն, ինքնակատարելագործում, վերապատրաստումներ, կառավարչական հմտություններ,աշխատանքների ճիշտ պլանավորում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Պարտադիր խմբակների գործարկում,երկարօրյա խմբերի կազմակերպում, և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավվում:<br>Լրացուցիչ կրթական ծրագրերով գեղագիտական, մշակույթային, ֆիզիկական և հոգևոր դաստիարակության ապահովում: | 2024-2026թթ. | Սովորողների և նրանց ծնողների կարիքի ուսումնասիրում, Համապատասխ ան ֆինանսավորում, աշխատանքների կազմակերպման նպատակով համապատասխ ան մասնագետների ներգրավում,սնն դի կազմակերպում, Ուսումնամեթոդ ական նյութեր | Պարտադիր խմբակները գործում են,դպրոցում առկա է երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորություններ, աշխատանքները ընթանում են ըստ պլանի և ,ծրագրերի:Ճանաչողական գիտելիքների ,գեղարվեստական ճաշակի,առողջության ամրապնդման բարձրացման նպատակով մշակույթային , ֆիզիկական և հոգևոր դաստիարակությունը ապահովված է:<br>Գնահատումը տարվում է ըստ կատարված աշխատանքների կատարողականների և հաշվետվությունների,պարտադիր և երկարօրյա խմբերի հաշվառման և գնահատման մատյանների:Սանդղակ 3 | Ֆինանսավորման բացակայություն,աշխատանքի կարևորության չգիտակցում , ծնողների կողմից պասիվություն: | Բացատրական աշխատանքներ , բարոյահոգեբանական և աշխատանքային առողջ մթնոլորտի ձևավորում: |
| 12 | ԲՏՃՄ կրթության որակի բարձրացում,լաբորատորիաների հագեցվածության և մանկավարժների մասնագիտական կարողությունների<br>զարգացման միջոցով: | 2024-2026թթ | Ֆինանսավորման ապահովում լաբորատորիաների հագեցվածության ապահովման համար,արդիական սարքավորումներ նյութեր,մասնագետների շարունակական վերապատրաստումներ,սեմինարներ, | Ստեղծվել,կահավորվել և համապատասխան նյութերով ու սարքավորումներով հագեցվել են նոր լաբորատորիաները,մասնագետները վերապատրաստվել են ,բարձրացրել իրենց որակավորումը:Այս միջոցառումների արդյունքում բարձրացել է կրթության որակըև հետաքրքրվածությունը այդ առարկաների հանդեպ;<br>Գնահատումը տարվում է ըստ համապատասխան կատարողականների վերլուծության,և կրթության որակիցուցանիշների ուսումնասիրությունների: | Ֆինանսավորման բացակայություն,նպատակի կարևորության չգիտակցում: | Աշխասանքների կարևորության ճիշտ ձևակերպում համապատասխան ֆինանսական հոսքերի ապահովման նպատակով,հետևողականություն: |

## Նպատակ 4

**ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում**

**Խնդիր 1** Դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում

**Խնդիր 2** Աշակերտների հոգևոր,գեղագիտական,մշակութային, իրավական  դաստիարակության խթանում

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աշակերտների հոգևոր, համամարդկային և ազգային արժեքների յուրացման ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպում և վերահսկում: | 2024-2029թթ.մշտապես | Զրույցներ, քննարկումներ, դիտումներ, տարատեսակ միջոցառումներ, մշակույթի, արվեստի գործիչների հետ հանդիպումներ,համայնքի վաստակաշատ ներկայացուցիչների հետ հանդիպումներ: | Աշակերտների արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները կատարվում են լրիվությամբ: Հոգևոր և գեղագիտական դաստիարակությունը գտնվում է պատշաճ ուշադրության կենտրոնում:Խթանվում է ազգային գիտակցության աճը ,մեր ազգային արժեքների և նյութական ու հոգևոր ժառանգությունը ճանաչելու, արժևորելու և համամարդկային արարժեքային համակարգում ներառելու գործընթացը: Կատարված աշխատանքները փաստող հաշվետվությունների,արձանագրությունների հիման վրա կատարվում է գնահատում: Սանդղակ 4 | Աշակերտների պասիվ վերաբերմունք , մանկավարժների կողմից կատարվող աշխատանքներում թերացումներ: | Ռիսկերի կառավարման նպատակով բացատրական աշխատանքներ, կազմակերպչական գործնեություն: |
| 2. | Շնորհալի երեխաների՝ ստեղծագործական ունակությունների բացահատմանն ուղղված աշխատանքների և ծրագրերի համակարգում և վերահսկում: | 2024-2029թթ. աշընդմեջ | Տարատեսակ մրցույթներին, ստուգատեսների,փառատոնների մասնակցության ապահովում,միջոցառումների կազմակերպում, տարբեր հարթակներում լուսաբանում,պարգևատրում | Շնորհալի երեխաները գտնվում են ուշադրության կենտրոնում,նրանց կատարած աշխատանքները գնահատվում են , լուսաբանվում , ստեղծվում են պայմաններ դրանց զարգացման համար: Նրանց ունակությունների բացահայտմանն ուղղված աշխատանքները կատարվում են արդյունավետ: Համակարգման արդյունավետությունը որոշվում է ըստ կատարված աշխատանքների ծավալի և արդյունավետության՝ համապատասխան սանդղակով:Սանդղակ4 | Աշակերտների պասիվ վերաբերմունք, կատարվող աշխատանքների մեջ թերացումներ: | Բացատրական աշխատանքներ, ուղորդումներ, մոտրվացիոն միջավայրի ապահովում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Գրական-գեղարվեստական ճանաչողական ,հայրենասիրական բնույթի ցերեկույթների, միջոցառումների, փառատոնների կազմակերպում : | 2024-2029թթ. շարունակական | Համապատասխան տեխնիկական միջոցներ ,տեղեկատվական նյութեր,համայնքի ներկայացուցիչների և ծնողների աջակցություն, մշակույթի կենտրոնի հետ համագործակցություն,աշակերտական,մանկավարժական համակազմ | Հոգևոր և մշակութային դաստիարակության կարևորությունը մեծ է սովորողի աշխարհընկալման, զարգացվածության, արժեհամակարգի ձևավորման գործընթացում:Նմանատիպ միջոցառումների կազմակերպումը խթան է աշակերտի բազմակողմանի զարգացման գործում: Կազմակերպված աշխատանքների քանակը, դրանց բովանդակային բազմազանությունը , դրանցում աշակերտների ներգրավվածության աստիճանը մատնանշող ցուցանիշների վերլուծություններով,համապատասխան հաշվետվությունների ուսումնասիրություններով որոշվում է կատարված աշխատանքների արդյունավետությունը:Սանդղակ 4 | Աշխատանքներում ներգրավված կողմերի վերապահ մոտեցում, մանկավարժների աշխատանքի վճարման հավելյալ գրաֆիկ | Կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորմամբ ուղղված բացատրական աշխատանքներ: Կազմակերպչական միջոցառումներ:Սերտ համագործակցություն հայրենասերների ձևավորման ցանկությամբ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Տարատեսակ առարկայական և թեմատիկ վիկտորինաների և մրցույթների կազմակերպում ներդպրոցական և միջդպրոցական ձևաչափերով:Առողջ մրցակցության խթանում և ապահովում: | 2024-2029թթ.շարունակաբար | Համապատասխան տեխնիկական միջոցների տրամադրում, ուսումնական նյութերի կազմում,աշակերտներ, մանկավարժներ | Աշակերտների մոտ առկա է ոգևորություն,նախաձեռնողականություն ,սիրով և պատասխանատվությամբ մասնակցում են նմանօրինակ մրցույթներին և վիկտորինաներին:Դրանց արդյունքները դրական են ազդում աշակերտների վրա, մոտիվացնում են ավելի լավ սովորել ,պրպտել, նպաստում են ինքնուսուցման, ինքնակատարելագործման գործընթացին: Կատարված աշխատանքների քանակական և որակական ցուցանիշների միջոցով որոշվում է գնահատման չափանիշը:Սանդղակ 4 | Աշխատանքներում ներգրավված վերապահ մոտեցում , մանկավարժների աշխատանքային ծանրաբեռնվածություն: | Կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորմանն ուղղված բացատրական աշխատանքներ, մանկավարժի օգնականների և ծնողների աջակցություն: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Դպրոցում բազմակարծիք,ներառական և մասնակցային միջավայրի ապահովում,անձի ինքնադրսևորման, ինքնազարգացման համար պայմանների ապահովում; | 2024-02029թթ շարունակական | Դպրոցում ժողովրդավարության, անձի ազատ կամարտահայտվելու պայմաններ,համապատասխան սեմինարներ,իր ազեկման ակտեր,համապատասխան իրավական ակտերի հետ ծանոթացում, աշակերտական խորհուրդների դերի մեծացում: | Դպրոցում աշակերտների համար ապահովված է պայմաններ ժողովրդավարական և քաղաքացիական, ինքնաճանաճողական սոցիալական կարողունակությունների ձեռք բերման համար:Աշակերտները ազատ են կամարտահայտվելու,ինքնադրսևորվելու և զարգանալու: Կատարված աշխատանքները գնահատվում են ըստ ժողովրդավարական արժեքների կայացման աստիճանի՝ համապատասխան զեկույցների ուսումնասիրության արդյունքների հիման վրա: | Կատարված աշխատանքների կարևորության չգիտակցում:Կարծրատիպերի առկայություն: | Համապատասխան աշխատանքների դերի մեծացում,բարենպաստ բարոյահոգեբանական միջավայրի ապահովում:Կարծրատիպերի հաղթահարում: |
| 6. | Աշակերտների իրավական դաստիարակության խթանում, համապատասխան սեմինարների ,զրույցների կազմակերպում ՝Պատանի իրավագետ՝ ակումբի ստեղծում, բարձր դասարանի աշակերտների ներգրավում: | 2024-2029թթ շարունակական | Սեմինարների, զրույցների կազմակերպում, իրավական ակտերին և օրենքներին ծանոթացում:Դա սագրքեր, ձեռնարկներ,օրենսդրություն, կոմպոտենտ մասնագետներ: | Միջին և բարձր դասարաններում աշակերտների իրավական դաստիարակությանը պատշաճ ուշադրություն է դարձվում;Ակումբի գործունեությունը նպաստում է աշակերտների՝իրենց իրավունքների և պարտականությունների կատարյալ իմացությանը,նրանց իրավական գիտակցության աճին::Դպրոցում անեն ինչում առկա է օրենքի գերակայությունը: Արդյունքը չափվում է համապատասխան հաշվետվությունների և արձանագրությունների հիման վրա: | Աշխատանքի նկատմամբ ձևական վերաբերմունք, աշխատանքի կարևորության չգիտակցում: | Դպրոցի ներքին կանոնակարգի և կարգապահության վրա տվյալ աշխատանքների կարևորության ըմբռնում,քաղաքացիական գիտակցության աճ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Պետական տոներին, հիշատակի օրերին նվիրված դպրոցական և համայնքային միջոցառումների կազմակերպում ,սերտ համագործակցություն մշակույթի կենտրոնի ,գրադարանի, համայնքապետարանի, գործընկեր դպրոցների ,համայնքի հոգևոր հովվի հետ: | 2024-2029թթ.շարունակաբար | Միջոցառումներ ի ծրագրերի կազմում և իրականացում,համայնքի , ծնողական համակազմ ի ներգրավում,աշակերտական և մանկավարժական համակազմի ակտիվ մասնակցություն | Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու,հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում,սոցիալականացման ապահովում,համազգային արժեքների գիտակցում և գնահատում, պետության ,որպես գերագույն արժեքի գնահատում,նախաձեռնողականություն: Այս կարողունակությունների զարգացմանն ուղղված միջոցառումների կատարման արդյունավետությունը որոշում ենք համապատասխան հաշվետվությունների միջոցով:Սանդղակ 4<br>1Միջոցառումներ չեն իրականացվել:(0-3)անբավարար<br>2Միջոցառումները իրականացվել են հազվադեպ:(4-6) բավարար<br>3Իրականացվող միջոցառումները հիմնականում նպաստել են ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:(7-8)զարգացնող<br>4Իրականացվող միջոցառումները նպաստել են ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ ության բարձրացմանը:(9-10)արդյունավետ | Աշխատանքներում ներգրավված կողմերի վերապահ մոտեցում և ներգրավվածության մոտիվացիայի պակաս: | Կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորմանն ուղղված բացատրական աշխատանքներ: Համագործակցություն ՏԻ մարմինների հետ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Աշակերտների կառավարչական,Ժողովրդավարական գիտելիքների ամրակայման,քաղաքացիական արժեհամակարգի ձևավորման նպատակով սեմինարների,զրույցների,դասախոսությունների կազմակերպում և անցկացում: | 2024-2029թթ շարունակական | Համապատասխան դասընթացներ,սեմինարներ, ուսումնական նյութեր,ուսուցիչներ,օնլայն հարթակների ապահովում, | Դպրոցի կառավարման գործընթացին աշակերտական խորհրդի ներգրավվածության ապահովման նպատակով աշակերտների գիտելիքները անընդհատ աճում են կազմակերպված միջոցառումները նպատակային են և արդյունավետ: Գնահատվում է ըստ կատարված աշխատանքների հաշվետվությունների: | Կատարվող աշխատանքների կարևորության չգիտակցում , ժողովրդավարական արժեքների կարևորության չգնահատում: | Կատարվող աշխատանքների կարևորության գիտակցում, հետևողականություն: |

# Նպատակ 5

## Ուսումնական միջավայրի բարելավում

**Խնդիր 1** Բոլոր աշակերտների համար  ապահով և անվտանգ միջավայրի ապահովում:

**Խնդիր 2** ՈՒսումնական համակազմի  համար գեղագիտական միջավայրի , հարմարավետ պայմանների ապահովում:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սովորողների կրթության, դաստիարակության համար անհրաժեշտ անվտանգ պայմանների ստեղծում՝ հակահրդեհային պայմանների ապահովում,տարհանման համար ազատ ելքեր, տեսախցիկներով տարածքի վերահսկողություն, անվտանգ միջավայր,ապահով ապաստարանի առկայություն: | 2024-2026թթ. | Դպրոցի բյուջե,դպրոցի սպասարկող անձնակազմ,համապատասխան սարքեր և միջոցներ | Դպրոցի ներսում և բակում ապահովված է աշակերտական և մանկավարժական համակազմի համար անվտանգ և ապահով միջավայր,պահպանված են անվտանգային բոլոր կանոնները,լաբորատորիայում փորձերը անցնում են համապատասխան կանոններով, ապահոված է օդափոխություն:Հոսանքի լարերը փակ են, սարքավորումները՝ սարքին:<br><br>Համապատասխան կատարողականների,ակտերի ,տեխնիկական անվտանգության զննությունների արձանագրությունների հիման վրա գնահատվում են կատարված աշխատանքները:Սանդղակ 5 | Ֆինանսական միջոցների անբավարարություն,աշխատանքների կարևորության չգիտակցում, | Հետևողական աշխատանք, անվտանգ միջավայրի կարևորության գիտակցում, զգոնություն: |
| 2. | Անձնակազմի և աշակերտների համար սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմանների ապահովվում՝պարբերական խոնավ մաքրում, ախտահանում համապատասխան նյութերով,անթերի մաքրություն տարածքում: | 2024-2029թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Ֆինանսական միջոցներ,ախտահանիչ նյութեր,աշխատանքի գործիքներ,տեխնիկական աշխատողների բարեխիղճ աշխատանք,համակազմի կոկիկ և մաքուր պահվածք | Ապահոված են բոլոր սանիտարահիգիենիկ պայմանները,ուսումնական գործընթացը ընթանում է հարմարավետ և մաքուր ուսումնական միջավայրում: Աշակերտները մաքուր են պահում տարածքը և հետևում են մաքրությանը:<br>Դիտարկումների և մշտական վերահսկողության միջոցով էլ գնահատվում է տվյալ միջոցառման արդյունավետությունը:<br>**Սանդղակ 5՝**<br>1.Գործողությունը թերի է կատարվում և չի նպաստում ուսումնական միջավայրի բարելավմանը:(0-3)անբավարար<br>2.Գործողությունը կատարվում է վերապահումներով, որոշ չափով նպաստում է ուսումնական միջավայրի բարելավմանը:(4-6)բավարար<br>3.Գործողությունըկատարվում է, հիմնականում նպաստում է ուսումնական միջավայրի բարելավմանը:(8-9) զարգացնող<br>4.Գործողությունը կատարվում է լիարժեք և նպաստում է ուսումնական միջավայրի բարելավմանը:(9-10)արդյունավետ | Վերահսկողության բացակայություն, անտարբեր վերաբերմունք, անբարեխիղճ աշխատանք: | Մշտական վերահսկողություն, աշակերտների և համակազմի համար բացատրական աշխատանքներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Անձնակազմի և աշակերտների համար գեղագիտական միջավայրի ստեղծում `կանաչ տարածքներ, կոկիկ և հարդարված դասասենյակներ, թեմատիկ անկյունների ,ձևավորված միջանցքների առկայություն,հանգստի անկյուններ: | 2024-2025թթ. | Դպրոցի բյուջե,աշակերտական և մանկավարժական համակազմ,ծնող խորհրդի աջակցություն: | Ուսումնական միջավայրը գեղեցիկ է, խնամված,հաճելի, աչք շոյող: Որքանով է գեղագիտական և հարմարավետ, այս չափանիշով էլ համապատասխան սանդղակով կատարում ենք գնահատում:Սանդղակ 5 | Անտարբերության մթնոլորտ ,աշխատանքներում ներգրավված կողմերի վերապահ մոտեցում և ներգրավվածության պակաս: | Աշակերտներտական և մանկավարժական համակազմի գեղագիտական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ: |
| 4. | ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարավետ միջավայրի ստեղծում ` համապատասխան թեքահարթակների առկայություն, սանհանգույցների հարմարեցում, համապատասխան սարքավորումների,ուսումնական և մոթոդական նյութերի ապահովում:Դրական բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն: | 2024-2029թթ. Ուսումնական տարիների ընթացքում | Պետբյուջեից համապատասխան կարիքների բավարարման համար նպատակային ֆինանսավորում: Համապատասխան սարքավորումներ,ուսումնական և մեթոդական նյութեր: Արհեստավարժ համակազմ,աշակերտների կողմից ըմբռնում և աջակցություն: | ԿԱՊԿՈՒ աշակերտի բոլոր կարիքները բավարարված են,ստեղծված է համապատասխան հարմարավետ միջավայր, աշակերտի համար ապահովված է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ,առկա է առաջընթաց նրանց մատուցվող կրթական ծառայություններում:Կատարված աշխատանքները ստուգվում են համապատասխան կատարողականներով, հաշվետվություններով:Արդյունքները գնահատվում են ուսումնասիրությունների և վիճակագրական տվյալների հիման վրա:Սանդղակ 5 | Կարիքների ոչ լիարժեք ներկայացում լիազոր մարմնին , անհետևողականություն, անտարբերություն: | Յուրաքանչյուր աշակերտի համար անհրաժեշտ կարիքների ճիշտ գնահատում ,ներկայացում համապատասխան մարմիններ:Բարեխիղճ վերաբերմունք,պատասխանատվության գիտակցում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Տարրական դասարանի աշակերտներին տաք սննդով ապահովվում : | 2024-2029թթ.մինչև ծրագրի ավարտը | Համապատասխ ան ծրագրով ֆինանսավորում ,համապատասխ ան սպասարկման ապահովում:Բա րեկարգ խոհանոցի , սարքավորումնե րի և սպասքի առկայություն:Սն նդի պատրաստման ճիշտ տեխնոլոգիա,սա նիտարահիգիեն իկ պայմաններ: | Համապատասխան սանիտարահիգիենիկ պայմանների առկայությամբ սննդի պատրաստում թարմ մթերքներից և աշակերտների սննդի հարցի լուծում: Աշխատանքները գնահատվում են համապատասխան կատարողականների արդյունքների հիման վրա: Սանդղակ5 | Ֆինանսավորման դադարեցում : Սննդի պատրաստման և մատուցման սանիտարահիգիենիկ պայմանների ոչ լիարժեք ապահովում: | Նոր ռնոր կազմակերպությունների ներգրավվում : Վերահսկողության ուժեղացում: |

## Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում

### Նպատակ 6

**Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարելավում, ուսուցչի մասնագիտական կարողությունների կատարելագործման արդյունավետ իրականացում:**

**Խնդիր 1.** Մանկավարժական աշխատողների մասնագիտական կարիքների գնահատում;

**Խնդիր 2.** Միջոցառումներ դրանց լուծման ուղղությամբ:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | **Մանկավարժական աշխատողների մասնագիտական կարիքների գնահատում, միջոցառումներ դրանց լուծման ուղղությամբ:** | | | | | |
| 1. | Ուսուցչամանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների շարունակական գնահատում: | 2024-2029թթ.ամբողջ | Մշտադիտարկում, հարցումներ,դասալսումների արձանագրություններ , դասի գնահատման թերթիկների ուսումնասիրություններ: | Կարիքի իրատեսական գնահատում, կարիքի բավարարման գործընթացներ, ակնկալվող արդյունքների բավարարման աստիճան :Իրականացվում է դասալսումների , աշակերտների ուսումնառության որակական ցուցանիշների ուսումնասիրությունների հիման վրա:Վերապատրաստումների միջոցով դասավանդման մեթոդաբանության վերանայում,նոր մեթոդների ,հնարների կիրառում,գնահատման նոր մեխանիզմի գործարկում:<br>Ի՞նչ խնդիրներ է լուծել և ի՞նչ արդյունքներ է ապահովել: Ըստ ցուցանիշների գնահատում: Սանդղակ 6. | Աշխատանքները կատարվում են թերի, հաշվի չեն առնվում կարիքների ողջ համատեքստը: | Կատարվող աշխատանքների անհրաժեշտության գիտակցում,հետևողականություն:Աշխատանքների պլանավորում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Մանկավարժներին և մանկավարժական աշխատողներին՝ տարատեսակ առարկայական և մասնագիտական վերապատրաստումների մասնակցության ապահովվում; | 2024-2029թթ.անընդմեջ, ըստ անհրաժեշտության | Ֆինանսական միջոցներ, համապատասխան վերապատրաստումների ապահովում,արհեստավարժ մենթորներ: | Ապահովված է վերապատրաստումներին մասնակցության հայտը, վերապատրաստմանը մասնակիցները կանոնավոր են մասնակցում ,արդյունքներն շոշափելի են և դրական: Գնահատվում է ըստ վերապատրաստումների մասնակիցների մասնակցության աստիճանի և արձանագրված արդյունքների հաշվետվությունների հիման վրա:<br><br>**Սանդղակ 6՝**<br>1.Միջոցառումները չեն կատարվել կամ չեն հասել իրենց նպատակին: (0-3) անբավարար<br>2.Միջոցառումները մասամբ են կատարվել, արդյունքերը լիարժեք չեն: (4-6) միավոր բավարար<br>3.Միջոցառումները կատարվել են լրիվությամբ, բայց արդյունքերը թերի են: (7-8) զարգացնող<br>4.Միջոցառումները կատարվել են լրիվությամբ, ապահովել գերազանց արդյունք: (9-10) արդյունավետ | Նախատեսվող աշխատանքներին՝ ուսուցիչների կողմից ոչ բավարար մասնակցություն, վերապատրաստական դասընթացների ֆինանսավորման խնդիրներ: | Կատարվելիք աշխատանքների կարևորության գիտակցում, ֆինանսավորման ապահովում: |
| 3. | Սկսնակ ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին մասնագիտական և մեթոդական օգնության կազմակերպում: Ապահովել նրանց մասնակցությունը ԱՈՒՊ-ներ կազմելու ,աշակերտների կրթական կարիքները ճիշտ գնահատելու կարողունակություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպված վերապատրաստումներին: | 2024-2029թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Համապատասխան վերապատրաստումներ,ուսումնամեթոդական նյութեր,մենթոր մանկավարժներ, ֆինանսավորում | Գնահատված են մասնագիտական զարգացման կարիքները,կատարված աշխատանքները նպատակային են, արդյունավետ, զարգացնող: Ցուցանիշ է վերապատրաստման մասնակիցների թիվը, ձեռք բերված արդյունքների վերլուծությունը: Գնահատումը ըստ կատարված աշխատանքների քանակական և որակական ցուցանիշների: Սանդղակ 6. | Ֆինանսավորման բացակայություն,անտարբերություն, աշխատանքների կարևոության չգիտակցում: | Ֆինանսական աղբյուրների ներգրավում,բացատրական աշխատանքներ, գործընթացների կազմակերպում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Փոխադարձ դասալսումների, քննարկումների, բանավեճերի, բաց դասերի կազմակերպում, նորարարության խրախուսում, գործընկեր դպրոցների հետ առաջավոր փորձի փոխանակում: | 2024-2029թթ. | Մասնախմբերի մասնակցություն, նոր տեխնոլոգիաներ ի և ՏՀՏ միջոցների կիրառում: | Աշխատանքները ընթանում են ամբողջ ծավալով,արդյունքները քննարկվում են, վեր են լուծվում, ձեռք բերված փորձը կիրառվում է: Կատարված աշխատանքները գնահատվում են ըստ իրականացված աշխատանքների քանակի , բաց դասերի ժամանակացույցի և արդյունավետության,հաշվի առնելով անցկացրած բաց դասերի , դասալսումների թիվը,աշխատանքների արդյունավետությունը ըստ դասի գնահատման թերթիկների: Սանդղակ 6. | Մացնակիցների մոտ մոտիվացիայի պակաս: | Կառավարչական հմտություններ, մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում:Աշխատանքների պլանավորում: |
| 5. | Մանկավարժների համար ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կարողությունների զարգացման նպատակով վերապատրաստումներ և դասընթացների կազմակերպում: | 2024-2029թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Ֆինանսավորում դպրոցի բյուջեի և այլ ֆինանսական աղբյուրների հաշվին, դպրոցի ՏՀՏ միջոցների և մասնագետների օգնությամբ աշխատանքների կազմակերպում: | Գնահատված են կարիքները:Պայմաններ են ստեղծված ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման համար: Աշխատանքները կազմակերպված են արդյունավետ, նպատակային: Գնահատման չափանիշ են վերապատրաստումների քանակը, մասնակիցների թիվը, վերապատրաստում անցած մանկավարժների աշխատանքների որակական արդյունքների ցուցանիշները:Գնահատումը ըստ համապատասխան հաշվետվությունների: Սանդղակ 6. | Ֆինանսական ռեսուրսների սղություն , ուսուցիչների պասիվ վերաբերմունք | Համապատասխան ֆինանսական միջոցների տրամադրում, կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորմանն ուղղված բացատրական աշխատանքներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Տարբեր թեմատիկ ուղղվածության սեմինարների և վեբինարների կազմակերպում | 2024-2029թթ. | Համապատասխան մասնագետներ, ՏՀՏ միջոցներ,ֆինանսական միջոցներ: | Աշխատանքների նպատակային կազմակերպում՝վերջնարդյունք ունենալով մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումը: Աշխատանքները գնահատվում են համապատասխան հաշվետվությունների հիման վրա: Ցուցանիշներ են համապատասխան վիճակագրական տվյալները՝կազմակերպված սեմինարների քանակը, մասնակիցների քանակը , կատարված աշխատանքների արդյունքում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակական ցուցանիշները: Սանդղակ 6. | Մանկավարժների մոտ մոտիվացիայի պակաս:Աշխատանքների թերի պլանավորում: | Անհրաժեշտ աշխատանքների կարևորության գիտակցում, համակարգված աշխատանք: |
| 7. | Բնագիտական, տեխնոլոգիական, մաթեմատիկական առարկաների ուսուցման բարելավման նպատակով վերապատրաստումների ապահովում, խորացված կրթության համար համապատասխան պայմանների ստեղծում: | 2024-20296թ. Ուսումնական տարվա ընթացքում | Լաբորատորիաներ,կաբինետներ ,սարքեր ,նյութեր,համապատասխան մոտիվացիոն միջավայր,վերապատրաստված մանկավարժներ | Դպրոցում հնարավոր պայմանների ստեղծում ՝համապատասխան առարկաների դասավանդումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով մանկավարժական համակազմի պատրաստվածության մեծացում: Գնահատումը ըստ կատարված աշխատանքների արդյունավետության: Սանդղակ 6. | Ֆինանսական միջոցների սղություն, մոտիվացիայի պակաս: | Ֆինանսական միջոցներ ներ ի ներգրավում, ծրագրի կարևորության գիտակցում, ներքին ռեսուրսների կառավարում: |

# Նպատակ 7

## Նորարարական և ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում,մանկավարժների ՏՀՏ կարողունակությունների մեծացում:

**Խնդիր 1**. Մանկավարժների ՏՀՏ կարողությունների հզորացում:

**Խնդիր 2**. Մանկավարժների իրավական գրագիտության բարձրացում:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորությունները |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Նորագույն կրթական տեխնոլոգիաների և մեթոդների տեղայնացում, ուսուցիչների ՏՀՏ կարողությունների հզորացում, համապատասխան դասընթացների մասնակցության ապահովում: | 2024-2026թթ. | Ֆինանսական միջոցներ,նորագույն կրթական տեխնոլոգիաներ, ՏՀՏ միջոցներ,ուսումնական ծրագրեր,համապատասխան մասնագետների ներգրավում | Մանկավարժների համակարգչային գրագիտության բարձրացում,դասապրոցեսում նորագույն տեխնոլոգիաների և ժամանակակից մեթոդների ներդրում: Կատարված աշխատանքների քանակական և որակական արդյունքների գնահատում,աշխատանքի արդյունավետության որոշում ըստ ուսումնասիրությունների, հաշվետվությունների: Սանդղակ 6. | Նյութական միջոցների անբավարարություն:Աշխատանքների կատարման չվերահսկում: | Ֆինանսական միջոցների ներգրավում, մեկնաբանության բարձրացում: |
| 2. | Առարկայական թեմատիկ սենյակների ՏՀՏ միջոցներով կահավորում, նորարար տեխնոլոգիաներով կրթության ապահովում | 2024-2026թթ | Ֆինանսավորման ապահովում,գրանտների շահում,ՏՀՏ արդիական միջոցներ,նորարար տեխնոկլոգիանեի, վերապատրաստված համակազմ | Դասապրոցեսը արդյունավետ է, կրթությունը հենվում է նորագույն տեխնոլոգիաներով, ՏՀՏ միջոցներով,ժամանակակից պահանջներին բավարարող ուսուցմամբ ընթացող ուսումնական գործընթացի վրա: Գնահատման ցուցանիշներ են ուսումնասիրությունները,վիճակագրական տվյալները, որոնք գնահատվում են համապատասխան հաշվետվությունների հիման վրա: | Ֆինանսական միջոցների անբավարարություն, անհետևողականություն: | Լիազոր մարմին խորհրդի կարևոր դերի աստիճանի բարձրացում պահանջմամբ ներգրավում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Էլեկտրոնային կրթական ռեսուրսների և կրթական հարթակների հասանելիության ապահովում | 2024-2025թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Ինտերնետ հասանելիությու ն,ՏՀՏ միջոցներ, կրթական տարատեսակ ռեսուրսներ,վեր ապատրաստված մանկավարժներ | Էլեկտրոնային կրթական ռեսուրսները հասանելի են և օգտագործվում են դասերին նախապատրաստվելու և ուսումնական գործընթացի ժամանակ:Ապահովված է ինտերնետ հասանելիություն, համակարգիչները հզոր են , ներբեռնված ուսումնական ծրագրերով: Կատարված աշխատանքի չափով էլ որոշվում է գնահատումը: Սանդղակ 6. | Նյութատեխնիկական միջոցների անբավարարություն | Ֆինանսական մրջոցներ տրամադրում,մասնագիտական վերապատրաստումներ: |
| 4. | Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի կազմման գործում դպրոցի անձնակազմի ներգրավածության ապահովում: | 2024-2029թթ.ընթացքում: | ՀՀ օրենքներ, ենթաօրենսդրա կան ակտեր,մարդկ ային ռեսուրսների ճիշտ օգտագործում | Մանկավարժների իրավական և կազմակերպչական գիտելիքները հարստացվում են: Անձնակազմը՝իրավական ակտերի կազմման գործում ակտիվ ներգրավված է, կազմակերպվում են նախագծերի քննարկումներ,հետամուտ են դպրոցի ներքին կանոնակարգի կատարելագործմանը: Կատարված աշխատանքների արդյունքը տեսանելի է,գնահատվում է համապատասխան հաշվետվությունների արդյունքներից ելնելով: | Ուսուցչամանկավարժական համակազմի շրջանում իրավական ակտերի կազմման գործընթացում ներգրավվածության կարևորության գիտակցման բացակայություն,Իրավական գրագիտության պակաս: | Օրենքների պարզաբանում,բացատրական աշխատանքներ, իրավական ակտերի հասցեականության բարձրացում՝ուղղված աշխատակազմի կարիքների և խնդիրների լուծմանը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Մանկավարժների կողմից դպրոցի գործունեության հետ կապված փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակով գործածման հմտությունների ապահովում: | 2024-2025թթ. | Ինտերնետ հասանելիություն,ՏՀՏ միջոցների հզորացում,վերապատրաստումներ | Մանկավարժները տիրապետում են իրենց գործառույթներին, մասնակցել են համապատասխան վերապատրաստումների,տիրապետում են ՏՀՏ միջոցներին, փաստաթղթաշրջանառությունը տարվում է էլեկտրոնային տարբերակով: Կախված կատարման աստիճանից գնահատվում է համապատասխան սանդղակով: Սանդղակ 6. | Նյութատեխնիկական միջոցների անբավարարություն,համապատասխան մեդիագրագիտության պակաս | Ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների տրամադրում,մասնագիտական վերապատրաստումներ:ՏՀՏ մասնագետների աջակցություն: |
| 6. | Մանկավարժական համակազմի իրավական գրագիտության զարգացում:<br>Մանկավարժական համակազմին՝ իր պաշտոնական պարտականություններին և իրավունքներին իրազեկման ապահովման նպատակով սեմինարների կազմակերպում: | 2024-2029թթ շարունակական | Բուկլետներ,մասնագիտական ձեռնարկներ,մանկավարժներ, սեմինարների, դասախոսությունների կազմակերպում: | Մանկավարժները մշտապես թարմացնում են իրենց իրավագիտական գիտելիքները կազմակերպվող դասընթացների միջոցով,քաջատեղյակ են օրենսդրական փոփոխություններին, կրթության բնագավառի նոր օրենքներին և հրահանգներին,վարժ տիրապետում ենն իրենց պաշտոնական պարտականություններին,իրավունքներին և պարտականություններին: | Աշխատանքի կարևորության չգիտակցում:Մանկավարժների կողմից անտարբերություն: | Բացատրական աշխատանքներ,իրավական գիտելիքների կարիքի ճիշտ գնահատում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Մանկավարժական աշխատողների կողմից իրավական ակտերի էլեկտրոնային հարթակների (e-draft.am ,arlis.am , e-gov.am և այլն) ծանոթացում: | 2024-2025թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Ինտերնետ հասանելիությու ն,ՏՀՏ միջոցների հզորացում,մասն ագետների կողմից աջակցություն: | Մանկավարժական համակազմը հետաքրքրված է տիրապետել իրավական դաշտին, տիրապետում է համակարգչային գրագիտությանը, մշտապես հետևում է նոր օրենքներին և հրահանգներին,հետևում է էլեկտրոնային հարթակներին: Գնահատումը համապատասխան հեշվետվությունների հիման վրա: Սանդղակ 6. | ՈՒսուցչամանկավարժական համակազմի շրջանում նմանօրինակ աշխատանքներին մասնակցության մոտիվացիայի բացակայություն: | Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի մասին տեղեկացվածության կարևորության գիտակցում,վերապատրաստումներ: |

# Նպատակ 8

## Մանկավարժի կատարած աշխատանքի՝ըստ նրա ցուցաբերած արդյունքների , արժևորում

**Խնդիր 1.** Մանկավարժին բարոյական, հոգեբանական,մասնագիտական ,նյութական  աջակցություն:

**Խնդիր 2.**  ՄանկավարԺի կատարած աշխատանքի արժևորում և գնահատում:

| № | գործողություններ և միջոցառումներ | ժամանակացույց | անհրաժեշտ միջոցներ | արդյունքների չափման մեխանիզմներ | գնահատման ծրագրի վերջում ռիսկերը | ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տարրակարգի ստացման և կամավոր ատեստավորման նպատակով մանկավարժական համակազմին համակողմանի աջակցություն ,կրթական կարիքների ապահովում,ինքնակրթությ ան համար բարենպաստ միջավայրի ստեղծում: | 2024-2029թթ. | Վերապատրաստ ումներ,համապա տասխան տեղեկատվությա ն տրամադրում,հա մապատասխան փաստաթղթերի փաթեթի կազմում,բարոյա կան աջակցություն | Մանկավարժները ոգևորված են,պատրաստ փորձելու իրենց ուժերը:Ատեստացիայի մասնակցության հայտերի քանակով և ձեռք բերած արդյունքներով ցուցանիշներով որոշվում է կատարված աշխատանքների արդյունավետությունը և կատարվում է գնահատում:<br>**Սանդղակ7.**<br><br>1. Մանկավարժի աշխատանքի արժևորմանը նպաստող գործողություններ չեն իրականանում: ( 0-3) անբավարար<br>2. Գործողությունները մասամբ են նպաստում մանկավարժների աշխատանքի արժևորմանը: (4-6) բավարար<br>3, Գործողությունները նպաստում են մանկավարժների աշխատանքի արժևորմանը, ապահովում դրական արդյունք: (7-8) զարգացնող<br>4. Գործողությունները նպաստում են մանկավարժների աշխատանքի արժևորմանը և ապահովում առավելագույն արդյունք: (9-10) արդյունավետ | Տապալվելու վախ , անվստահություն սեփական ուժերի նկատմամբ,թերարժեքության կոմպլեքս: | Բարոյահոգեբանական աջակցություն, բացատրական աշխատանքներ: |
| 2. | Մանկավարժական աշխատողների համար հանգստի և սննդի պայմանների ապահովում,առողջական շահերի պաշտպանում: | 2024-2025թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Համապատասխ ան պայմանների տրամադրում,աջ ակցություն, դասացուցակի օպտիմալ կազմում՝ հաշվի առնելով առողջական ռիսկերը: | Ապահովված է մանկավարժների սննդի և հանգստի պայմանները,դասացուցակները կազմվում են այնպես,որ հանգստի համար ունենան ազատ դասաժամեր: Ստեղծված են համապատասխան պայմաններ թոթափելու հոգնածությունը և նոր ուժերով անցնելու գործի: Համապատասխան պայմանների առկայության աստիճանով էլ գնահատվում են կատարված աշխատանքներ: Սանդղակ 7. | Պայմանների ապահովման հետ կապված խնդիրներ:<br>Գործելու ցանկության բացակայություն և աշխատանքների կարևորության չգիտակցում: | Ֆինանսական միջոցներ, աշխատանքների կարևորության գիտակցում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Մանկավարժական ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովվումը | 2024-2029թթ.մշտապես | Բազմակարծիք,մանակցային միջավայր,ժողովրդավարական արժեհամակարգի առկայություն,մանկավարժների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների գիտակցում | Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ,օրենքը գործում է բոլորի համար, պահպանվում է բոլորի արժանապատվությունը:Մանկավարժը ազատ է կամարտահայտվելու , պաշտպանելու իր տեսակետը և իրավունքները: Մանկավարժի ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովվածության աստիճանը չափանիշ է կատարված աշխատանքների գնահատման: Սանդղակ 7. | Կառավարման ավտորիտար համակարգ, անառողջ բարոյահոգեբանական միջավայր: | Կառավարման ժողովրդավարական սկզբունքներ:Օրենքի գերակայություն և իրավունքների ու պարտականությունների համընդհանուր կիրառում: |
| 4. | Մանկավարժական համակազմում բարոյահոգեբանական առողջ մտնոլորտի ապահովում, համագործակցային միջավայրի ստեղծում, փոխօգնության մթնոլորտի ապահովում: | 2024-2029թթ. Ուսումնական տարվա ողջ ընթացքում | օրենքի գերակայություն, փոխըմբռնում, համագործակցություն | Դպրոցում առկա է համագործակցային միջավայր, տիրում է փոխօգնության մթնոլորտ, սուր անկյունները հարթվում են փոխզիջումների միջոցով օրենքի շրջանակում,մանկավարժական համակազմում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Աշխատանքները գնահատվում են ըստ ձեռք բերված արդյունքների: Սանդղակ 7. | Անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ,կուտակված խնդիրներ, երկպառակություն: | Կազմակերպչական աշխատանքներ,բարեվարքության համակարգի կիրառում,անձնական օրինակ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Նյութական և բարոյական խրախուսման ներկայացնել առաջավոր մանկավարժներին, ի ցույց դնել նրանց փորձը | 2024-2029թթ.Յուրաքանչյուր տարվա ընթացքում | Ֆինանսական միջոցներ, պատվոգրեր, շնորհակալագրեր,լուսաբանում | Անձնակազմի արժևորումն ընկած է դպրոցի կառավարման հիմքում,Ըստ ցուցաբերած արդյունքների մանկավարժների կատարած աշխատանքի արժևորում,գնահատում,խրախուսում:նրանց փորձի լուսաբանում , կիրառում: Կատարված աշխատանքների գնահատում ՝ըստ աշխատողի ինքնակրթության,մասնագիտական զարգացման,նախագծային աշխատանքների որակի,տարբեր միջոցառումների կազմակերպման,տարբեր մրցույթներում սովորողի գրանցած արդյունքների:Ձեռնարկված միջոցառումների արդյունքներին համարժեք գնահատում: Սանդղակ 7. | Անտարբեր վերաբերմունք, ֆինանսական միջոցների սղություն, աշխատանքի կարևորության չգիտակցում: | Աշխատանքի կարևորության գիտակցում,ֆինանսական խնայողությունների ճիշտ բաշխում: |
| 6. | ՙԼավագույն ուսուցիչ՚անվանակարգում ներկայացում առաջավոր Մանկավարժներին: | 2024-2029թթ շարունակական | Աշխատանքների ,հայտերի ներկայացում լիազոր մարմնին,մանկավարժների մոտ բացատրական աշխատանքներ ,մոտիվացիա, աջակցություն, | Մանկավարժները ոգևորված են,գիտակցում են ,որ իրենց ջանքերը , գիտելիքները և հմտությունները գնահատվում են :Առաջանում է մրցակցային առողջ միջավայր,մոտիվացիա ՝ավելի եռանդով աշխատելու:Ուսուցիչը սկսում է աշխատել իր վրա, զարգացնում է իր ունակություններն ու կարողությունները:Արդյունքը չափվում է կատարված աշխատանքները ամփոփող քանակական և որակական ցուցանիշներով: | Նորարարական տեխնոլոգիաների, ՏՀՏ միջոցների ոչ արդյունավետ օգտագործում,ՈՒսումնական գործընթացի լճացած վիճակ: | Բարոյանան ,տեխնիկական,և մասնագիտական աջակցություն ուսուցիչներին, մոտիվացիա, նախաձեռնողականություն: |

## Նպատակ 9

### Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ աշխատանքների կոորդինացում

**Խնդիր 1.** Դպրոցի կառավարման մարմինների հետ արդյունավետ համագործակցություն :

**Խնդիր 2**. Խորհրդակցական մարմինների հետ աշխատանքների արդյունավետ պլանավորում և կատարում:

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման նախաձեռնություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տնօրենի, կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության խորացում | 2024-2029թթ.մշտական | Դպրոցի զարգացման ծրագրի դրույթների քննարկումներ,ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան աշխատանքային պլանների կատարողականներ,ներդպրոցական վերահսկողության արդյունքների վերլուծություններ ,նիստերի արձանագրություններ | Տնօրենի , կառավարման ու խորհրդակցական մարմինների միջև հաստատված է արդյունավետ երկխոսություն:Նիստերը պարբերական են,քննարկվում են կրթության կազմակերպման օրակարգային հարցեր: Դպրոցի խորհուրդը քննարկում,գնահատում է կատարված աշխատանքները,վերահսկում են իրականացնում նաև մանկավարժական խորհուրդը,ծնողական և աշակերտական խորհուրդները աջակցում են կատարվող աշխատանքներին: Նիստերի արձանագրությունները,հաշվետվությունները այդ համագործակցության արդյունավետության չափանիշներ են և ցուցիչ են գնահատման գործընթացում: Սանդղակ 8. | Կառավարման ,խորհրդակցական մարմինների ակտիվ աշխատանք;: | Նրանց՝ աշխատանքների նշանակության , կարևորության գիտակցում, փոխգործակցության խորացում, պատասխանատվություն:օ |
| 2. | Կառավարման խորհրդի և տնօրենի աշխատանքների կոորդինացում, տարեկան հաշվետվությունների քննարկում : | 2024-2029թթ. Ուսումնական տարվա սկզբին և ավարտին | Տարեկան հաշվետվություններ,կատարողականներ: Դրանց քննարկումներ, եզրահանգումներ, համապատասխան արձանագրություններ: | Աշխատանքների կոորդինացումը արդյունավետ է, նպատակային: Գնահատվում է ըստ արդյունքների: **Սանդղակ 8՝**<br>1.Գործողություններ չեն իրականացվում: (0-3) անբավարար<br>2. Գործողությունները կատարվում են ոչ լրիվ ծավալով (4-6) բավարար<br>3. Գործողությունները նպաստում են դպրոցի կառավարման մարմինների հետ համագործակցության որոշ ընդլայնմանը (7-8) զարգացնող<br>4.Գործողությունները նպաստում են դպրոցի կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների հետ համագործակցության ընդլայնմանը (9-10) արդյունավետ | Աշխատանքներում ներգրավված կողմերի վերաբերմունքի մոտեցում և ներգրավվածության մոտիվացիայի պահպանում: | Կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորման ուղղված բացատրական աշխատանքներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Մանկավարժական խորհրդի դիտարկումների համակարգում և օգտագործում աշխատանքների ընթացքում, մանկավարժական խորհրդի դերի մեծացում | 2024-2029թթ.շարունակական | Նիստերի արձանագրություններ,հաշվետվություններ, դրանց քննարկումներ,եզրահանգումներ; Մանկավարժական խորհրդի բոլոր անդամների ակտիվ մասնակցություն: | Մանկավարժական խորհուրդը վերահսկում է ուսման որակը,կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը,գնահատում կատարված աշխատանքների ծավալը, մատնանշում սխալները և թերացումները, ուղղորդում: Ըստ կատարված աշխատանքների հաշվետվության սահմանվում է գնահատման մեխանիզմը: Սանդղակ 8. | Աշխատանքների կարևորության չգիտակցում, պասիվ վերաբերմունք, անտարբերություն: | Աշխատանքներում ներգրավված կողմերի մոտիվացիա,կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորում: |
| 4. | Աշակերտական խորհրդի գործունեության կարևորում և խթանում, ծնողական խորհրդի նշանակության մեծացում, ծնողական խորհրդի անդամների հետ մշտական աշխատանք:Երիտասարդ ծնող ակումբի հիմնում:Մանկավարժական և հոգեբանական զրույցների պարբերական կազմակերպում վատ վարք և առաջադիմություն ունեցող աշակերտների ծնողների հետ: | 2024-2029թթ. Ուսումնական տարիների ընթացքում | Նիստերի արձանագրություններ,հանդիպումներ, քննարկումներ,շահագրգիռ կողմերի ներգրավվածություն: | Աշակերտների ինքնակառավարման մարմնի՝աշակերտական խորհրդի աշխատանքների արդյունավետ կազմակերպում,ներգրավում դպրոցական գործընթացներին,քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող միջոցառումների կազմակերպում: Ծնողական խորհրդների ակտիվ և արդյունավետ գործունեություն:Երիտասարդ ծնող ակումբի հիմնում, որպես նպատակ ունենալով մասնագիտական խորհրդատվության միջոցով օգնել ուղղորդել ծնողին: Այս աշխատանքների կատարման քանակական և որակական ցուցանիշների արդյունքների չափում՝ համապատասխան արձանագրությունների հիման վրա: Սանդղակ 8. | Աշակերտական խորհրդի՝ իր իրավունքների և պարտականությունների չիմացություն,ծնողական խորհրդի կրավորական կեցվածք: | Աշակերտական խորհրդի անդամների հետ բացատրական աշխատանքներ: Ծնողական խորհրդի դերի մեծացում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ աշխատանքների հրապարակային և թափանցիկ գործառույթների ապահովում | 2024-2029թթ.մշտական | Խորհրդակցական մարմինների ակտիվ աշխատանք, կառավարման խորհրդի նպատակային և հետևողական գործառույթ, համապատասխան արձանագրություններ | Աշխատանքները արդյունավերտ են և նպատակամղված դպրոցի գործունեության կատարելագործմանը:Ապահովված է հրապարակայնությունը և գործառույթների թափանցիկությունը: Գնահատվումեն ըստ որակական ցուցանիշների: Սանդղակ 8. | Խորհրդակցական մարմինների պասիվ աշխատանք ,տեղեկատվության պակաս, | Նրանց աշխատանքների նշանակության կարևորության պարզաբանում, թափանցիկության ապահովում: |

## Նպատակ 10

**Պետական և համայնքային մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում:**

**Խնդիր** 1.Պետական  մարմինների հետ համագործակցության խորացում

**Խնդիր** 2.Համայնքային մարմինների հետ համագործակցային կապերի ընդլայնում

**Խնդիր** 3.Շահառու կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքի կազմակերպում

| № | Գործողություններ և միջոցառումներ | Ժամանակացույց | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Զարգացման ծրագրի ռիսկերը | Ռիսկերի կանխարգելման հնարավորություններ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կրթության կառավարման մարմինների կողմից ներկայացվող հրամանների, հրահանգների, ուղորդումների շարունակական ուսումնասիրություն և մանկավարժական համախմբի տեղեկացվածության ապահովում | 2024-2029թթ.ընթացքում | ՀՀ օրենքներ,ենթաօրենսդրական ակտեր,հրամաններ, հրահանգներ ,շրջաբերականներ,ցուցումներ,մարդկային ռեսուրսներ | Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների իրագործման ուղղությամբ համապատասխան իրավական ակտերի ,օրենքների իմացության ապահովվման ուղղված աշխատանքների լիարժեք ապահովում, մանկավարժական համակազմի իրավական գրագիտություն: Կատարված աշխատանքների գնահատում ըստ հաշվետվությունների ուսումնասիրության: Սանդղակ 9՝ | Ուսուցչամանկավարժական համակազմի շրջանում նախօրինակ ուսումնասիրություններին մասնակցության մոտիվացիայի պակաս: | Կազմակերպչական աշխատանքներ, բցասական աշխատանքներ մանկավարժական համախմբի անդամների հետ: |
| 2. | Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ընթացքում ծագած խնդիրների տեղեկայցվածության ապահովում կրթության կառավարման համապատասխան մարմիններին՝ խնդիրներին օբյեկտիվ և օպերատիվ լուծումներ տալու նպատակով | 2024-2029թթ. Ուսումնական տարվա ընթացքում | Համապատասխան էլեկտրոնային նամակներ,դիմումներ,գործավար | Հետևողական աշխատանք, պատասխանատու վերաբերմունք, օպերատիվություն, խնդիրների լուծման կարիքի ճիշտ գնահատում: Աշխատանքների գնահատում ըստ նպատակի կատարման,խնդրի լուծման արդյունքի: Սանդղակ 9 | Ոչ օպերատիվ արձագանք, անտարբերություն,անպատասխանատվություն: | Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում,հետևողականություն: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | Սովորողների շրջանում հալածանքի, օտարման ու բռնության դեպքերի, հակահասարակական արարքների բացառման նպատակով շարունակական համագործակցություն իրավապահ մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ:Շարունակական աշխատանքներ դժվար դաստիարակվող աշակերտների հետ: | 2024-2029թթ.ընթացքում շարունակաբար | Աշակերտական համակազմ, Իրավապահ մարմիններ ներկայացուցիչն եր,մանկավարժն եր, ծնողներ | Հակահասարակական արարքների, բռնությունների դեպքերի բացասական ազդեցության գիտակցում աշակերտների մոտ, հալածանքի և օտարման երևույթների բացառման նպատակով բացատրական աշխատանքներ, կանխարգելիչ գործողություններ,դաստիարակչական աշխատանքներ: Աշխատանքների արձանագրությունների հիման վրա գնահատում ըստ կատարված աշխատանքների քանակի և արդյունավետության ցուցանիշների:Սանդղակ 9 | Կատարվող աշխատանքների կարևորության չգիտակցում, պասիվ վերաբերմունք | Բացատրական աշխատանքներ, նպատակաուղղված գործունեություն: |
| 4. | Աշակերտների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ շարունակական հանդիպումների կազմակերպում, զրույցների անցկացում : | 2024-2029թթ. Ուսումնական տարիների ընթացքում | Աշակերտական համակազմ,իրավապահ մարմինների ներկայացուցիչն եր,մանկավարժն եր | Իրավապահ մարմինների կողմից միջոցառումների և հանդիպումների կազմակերպում՝ աշակերտների իրավական գիտելիքներ հարստացման նպատակով, իրազեկում: Կատարված աշխատանքների արդյունավետության գնահատում համապատասխան հաշվետվությունների հիման վրա: Սանդղակ 9 | Կանխակալ վերաբերմունք ոստիկանների նկատմամբ, աշխատանքների կարևորության չգիտակցում: | Աշակերտական համակազմի մոտ բացատրական աշխատանքներ,հանդիպումների կարևորում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5. | Արդյունավետ համագործակցություն, առողջապահական կենտրոնի, ԱԻՆ-ի հետ,հանդիպումների կազմակերպում,տարաբնույթ իրազեկման ակտերի կազմակերպում: | 2024-2029թթ.ընթացքում շարունակաբար | Համապատասխան շահառու մարմինների աշխատակիցներ ,համատեղ աշխատանքային ծրագրեր,բուկլետներ,հրահանգներ | Աշակերտների անվտանգային և առողջապահական միջոցառումների իրականացում, իրազեկում,վարժանքներ: Ֆորս մաժոր իրավիճակներում համապատասխան աջակցություն: Կատարված աշխատանքների փաստագրում, համապատասխան հաշվետվությունների հիման վրա կատարված աշխատանքների գնահատում: Սանդղակ 9 | Հաստատության կողմից չհամաձայնեցված գործողություններ: Աշխատանքների կարևորության չգիտակցում: | Աշխատանքների համատեղ պլանավորում և իրականացում, արդյունավետ համագործակցության կարևորության գիտակցում: |
| 6. | Աշակերտների ակտիվ համագործակցության ապահովվում համայնքի տարածքում գործող մշակույթի կենտրոնի և գրադարանի հետ ,համատեղ միջոցառումների կազմակերպում: | 2024-2029թթ. մշտական | Աշակերտական համակազմ.,մշակույթի գործիչներ, գրադարանավար, միջոցառումների ծրագրեր: | Աշակերտների հոգևոր և մշակույթային պահանջմունքների բավարարում, ամուր համագործակցություն: Ըստ այդ պահանջմունքների քանակական և որակական բավարարման ցուցանիշի կատարված աշխատանքի գնահատում հաշվետվությունննների միջոցով:Սանդղակ 9 | Ժամանակի սղություն, մոտիվացիայի պակաս: | Ժամանակի ճիշտ պլանավորում, արվեստի և գրականության հանդեպ սիրո սերմանում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7. | Համայնքի հետ համատեղ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում (շաբաթօրյակներ, ծառատունկ, թղթի թափոնների հավաքում) | 2024-2029թթըստ անհրաժեշտության | Մարդկային ռեսուրսներ,տնկիներ,աշխատանքի գործիքներ,համապատասխան կազմակերպությունների ներգրավվածություն | Շաբաթօրյակները կազմակերպվում են հաճախակի, արդյունավետ են, ծառատունկները նպատակային են,իրականացվում են ամբողջ ծավալով,թղթի թափոնների հավաքումը գիտակցվում է , որպես կարևոր աշխատանք :<br>Նպատակակը՝ ակտիվ քաղաքացու ձևավորում:<br>Աշխատանքները կատարվում են ըստ անհրաժեշտության:<br>Արդյունքները տեսանելի են և չափելի, ըստ այդմ էլ գնահատվում են:<br>Սանդղակ 9 | Պասիվ վերաբերմունք, անտարբերություն: | Անձնական օրինակ, նախաձեռնողականություն,աշխատանքների կարևորության գիտակցում: |
| 8. | Սոցիալ- մշակութային միջոցառումների կազմակերպում՝ համայնքի և հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ ,դպրոցը դարձնել համայնքային զարգացման կենտրոն ,լրացուցիչ կրթական ծառայությունների՝մանկավարժության, հոգեբանության ոլորտում, տրամադրում ցանկացողներին: | 2024-2029թթ. պարբերաբար | Աշակերտական, մանկավարժական համակազմ,մշակույթի գործիչներ, երաժշտական ,պարի խմբեր,մասնագետներ | Աշխատանքներում ներգրավված են մեծաթիվ աշակերտներ,միջոցառումները ունեն ճանաչողական, դաստիարակչական բնույթ,կազմակերպական աշխատանքները տարվել են ժամանակին,լայնորեն լուսաբանվել են:Կազմակերպվում են հաճախակի:Դպրոցը դարձել է համայնքի հոգևոր և ինտելեկտուալ կենտրոն:<br>Ըստ կատարված աշխատանքների հաճախակիության,հաջողվածության, դաստիարակչականության, համապատասխան հաշվետվությունների հիման վրա գնահատվում են համապատասխան գործիքներով:<br>Սանդղակ 9 | Նախաձեռնողականության բացակայություն, համայնքի մոտ հետաքրքրության պակաս: | Աշխատանքների պլանավորում, համակարգում, իրազեկում,ցուցադրում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Էքսկուրսիաների կազմակերպում Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձաններ,թանգարաններ,մշակույթային օջախներ: Հայրենագիտական ակումբի և թանգարանի հիմնում: | 2024-2029թթ.Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում | Դպրոցի ֆինանսական խնայողություններ,ՏԻ մարմինների կողմից նվիրատվություններ, ծնողների ներդրումներ, աբոնենտային համակարգ,բոլոր ցանկացողների աջակցություն | Աշակերտների հայրենագիտական,հոգևոր, մշակույթային,գեղագիտական դաստիարակության նպատակով կատարված աշխատանքների մեջ կարևորվում է նաև նպատակային էքսկուրսիաները,արշավները:Աշխատանքների կորդինացում հայրենագիտական ակումբի ստեղծմամբ:<br>Գնահատվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների համատեքստում ըստ իրականացված աշխատանքների քանակական ցուցանիշների:<br>**Սանդղակ 9՝**<br>1. Գործողություններ չեն իրականանում: (0-3) անբավարար<br>2. Գործողությունները հազվադեպ են կատարվում: (4-6) բավարար<br>3.Գործողությունները հիմնականում նպաստում են պետական, համայնքային և շահառու կազմակերպությունների հետհամագործակցության ընդլայնմանը: (7-8) զարգացնող<br>4.Գործողությունները նպաստում են պետական, համայնքային և շահառու կազմակերպությունների հետհամագործակցության ընդլայնմանը ( 9-10) արդյունավետ | Ֆինանսական միջոցների սղություն,մոտիվացիայի պակաս,կատարվող աշխատանքների կարևորության չգիտակցում: | Ծնողների աջակցություն ,աբոնենտների օգտագործում, նախաձեռնողականություն: |

## 5.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

Դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը սահմանված է «Հանրակրթության մասին» օրենքով: Համաձայն դրա ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գոծունեության վերլուծությունն է, որին մասնակցում են վարչական ու մանկավարժական աշխատողները, ծնողները և սովորողները:Արտաքին գնհատումը տրվում է անկախ կազմակերպության կողմից:Վերջին հաշվով գնհատման արդյունքների նպատակը սովորողներին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացումն է:

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը պլանավորված,նախատեսված աշխատանքների և կատարված, իրականացված գործողությունների արդյունքների համեմատման գործընթացն է: Գնահատման գործիք է ծառայում յուրաքանչյուր գործողության կատարման ցուցանիշ, որոնց հանրագումարի միջոցով պետք է չափվեն կատարողականները,դպրոցի զարգացման ծրագիրը իրականացնող և վերահսկող շահառուների գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը:Ցուցանիշները օգնում են տեսնել ընդհանուր պատկերը, հետևություններ անել և անհրաժեշտության դեպքում փոխել մարտավարությունը:Դրանք ամբողջացնում, ամփոփում են վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ամփոփ պատկերը:

Գնահատման համար հիմք է ընդունվում սկզբնական վիճակը, գործողությունների՝ ըստ ժամանակացույցի կատարման ընթացքը և գործողությունների կատարման արդյունքը:

**Վերջնարդյունքը** մեծապես կախված է իրավիճակի համակողմանի վերլուծությունից,նպատակների և խնդիրների սահմանումից(ընդ որում ամենամեծ ձախողումը սխալ նպատակի ընտրությունն է)նպատակին հասնելու համար իրականացվող գործողությունների սահմանումից, բոլոր հնարավոր ռիսկերի օբյեկտիվ գնահատումից, պատասխանատուների աշխատանքից , նպատակի իրականացման համար անհրաժեշտ միջոցներից, մարդկային և ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի ճիշտ գնահատումից , դրանց կանխարգելման օպտիմալ լուծումներից ,ամբողջ գործընթացի արդյունավետ վերահսկողությունից:

Կախված կոնկրետ նպատակներից և խնդիրներից ՝ տարբեր են գնահատման օբյեկտիվ և իրատեսական չափանիշները:Ցանկացած գործողության համար համընդհանուր չափանիշ են քանակական և որակական չափանիշները:Քանակական ցուցանիշները վիճակագրություն են՝օրինակ վերապատրաստումների, բաց դասերի, դաս- դիտարկումների թվի մասին:
Որակական ցուցանիշները՝օրինակ դասի արդյունավետության բարձրացումը:
Վերլուծվում և գնահատվում է աշխատանքի արդյունքի համապատասխանությունը նպատակադրմանը:Կարևոր է տեղեկատվությունը կատարված աշխատանքների մասին և անդրադարձը կատարված քայլերի , գործողությունների արդյունքներին:
Գնահատման գործիք են իրականացված յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող պարզ և բարդ ցուցանիշները:Ցուցանիշներ են ուսումնասիրությունները և վիճակագրական տվյալները:
Կատարողականները ստուգվում են ցուցանիշների միջոցով:Յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվում է համապատասխան հաշվետվության հիման վրա:

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման սանդղակ՝ ըստ զարգացման ծրագրի բաղադրիչների , սահմանված յուրաքանչյուր միջոցառման կամ գործողության համար՝

| Զարգացման ծրագրի բաղադրիչը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| № | Միջոցառում կամ գործողություն | Արդյունավետ (9-10) | Զարգացնող (7-8) | Բավարար (4-6) | Անբավարար (0-3) | Հիմնավորում |
| | | | | | | |
| | Ընդամենը միավորներ | | | | | |
| | Միջին թվաբանական միավոր | | | | | |

# 6. Եզրակացություն

Ուսումնական միջավայրը հենքն է ուսումնական գործընթացի կազմակերպման համար: Հարմարավետ և լուսավոր դասասենյակները, հանգստի գոտին, մաքուր և գեղեցիկ ձևավորված միջանցքներն արդեն սովորողին տրամադրում են դասապրոցեսին, ստեղծում դրական աուրա:

Դասերը անցկացնելով համապատասխան սարքավորումներով և տեխնիկական միջոցներով հագեցած առարկայական դասասենյակներում և լաբորատորիաներում, նորագույն տեխնոլոգիաների և նորարարական միջոցների օգտագործմամբ,ազատ, անկաշկանդ մթնոլորտում անցկացվող պայմաններում, աշակերտը ավելի արդյունավետ է յուրացնում դասը:

Երբ դասը վարում է մարդկային, մանկավարժական և մասնագիտական բարձր որակներ ունեցող ուսուցիչը՝ օգտվելով ինտերակտիվ մեթոդներից, խմբային աշխատանքի եղանակից և դասավանդման նոր և յուրօրինակ հնարքներից ու եղանակներից, որպես վերջնարդյունք ունենում ենք նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթություն, որը աշակերտին մոտիվացնում է մտածել, փնտրել, գտնել, եզրահանգումներ անել,հետազոտել, տիրապետել, հմտանալ և կիրառել ստացած գիտելիքները:

Երբ աշակերտական և մանկավարժական համախմբերում տիրում է փոխադարձ հարգանքի, փոխըմբռման և փոխօգնության մթնոլորտը, բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահոված դրական արդյունքը նկատելի է անմիջապես:

Միջավայրը, որտեղ աշակերտը և մանկավարժը իրապես պաշտպանված են, նրանց սոցիալական, կրթական, առողջական շահերը հաշվի են առնված, ծառայում է ի օգուտ ուսումնական գործընթացի որակական աճի:

Երբ աշակերտին հնարավորություն է տրվում իր հոգևոր և մտավոր պահանջմունքները հայտնաբերել, զարգացնել, բավարարել գեղարվեստական ճաշակ և բարոյական արժեքներ ձևավորող միջավայրում, կրթության որակը կունենա աննախադեպ առաջընթաց:

Երբ անընդհատ զգացվում է կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի, կառավարման խորհրդատվական մարմինների աջակցությունը կրթական գործին, ցանկությունը՝ օգնել ծագած խնդիրների լուծման գործընթացում, ապահովվում է ուսման բարձր առաջադիմություն:

Սա այն կատարյալ միջավայրն է, որտեղ կրթական և դաստիարակչական գործընթացը կհաջողի, և ուսւտմնական պրոցեսը որպես վերջնարդյունք կունենա ձևավորված անձ, որը ունի՝

- Կայուն արժեհամակարգ
- Դիրքորոշում
- Գիտելիքներ
- Հմտություններ

Հուսով եմ, որ այս ամենին հասնելու գործընթացում մեր դպրոցի համակազմը կհաջողի: